2023

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ	4
	ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	9
01.	ԲԱՆԿԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ	10
02.	ԲԱՆԿԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ	14
03.	ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	26
04.	ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	56
05.	ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ	72
06.	ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ	74
07.	ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ	76
08.	ՓՄՁ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ	80
09.	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ	84
10.	ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ	86
11.	«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ	88
12.	«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ	92
13.	«ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ	94
14.	ԱՄՓՈՓ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ	100

ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ
տնօրենի ուղերձը

«Աշխարհում, որտեղ միակ հաստատունը փոփոխությունն է, Ակբա բանկը հանդես է գալիս որպես ճկունության և առաջընթացի վկայում՝ ցույց տալով, որ անսասան նվիրվածությամբ և նորարարությամբ մենք կարող ենք ոչ միայն պատկերացնել գերազանց ապագա, այլև ձևավորել այն՝ մեր հաճախորդների և հասարակության բարգավաճման համար»

ՀԱԿՈԲ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
Գլխավոր գործադիր տնօրեն

Հարգելի՛ գործընկեր,

2023թ.-ը լի էր մարտահրավերներով և տնտեսական ցնցումներով: Հիմնադրումից ի վեր Ակբա բանկը, որն արդեն վաղուց ավելին է, քան պարզապես ֆինանսական կառույց, ունի հստակ փիլիսոփայություն. դժվարությունները ժամանակավոր են, եթե ստանձնում ես պատասխանատվություն դրանք հաղթահարելու համար: Սա է պատճառը, որ տարեցտարի միայն ավելացող պատրաստակամությամբ և նախաձեռնողականությամբ լծվում ենք առկա մարտահրավերները հաղթահարելու առաքելությանը: Առաքելություն, որն այս տարիների ընթացքում արդեն բազում պտուղներ է տվել և դեռ շարունակելու է տալ: Առաքելություն, որն անհնարին կլիներ առանց մեր կուռ թիմի, հավատարիմ հաճախորդների և մեր սկզբունքները կիսող գործընկերների:

Որպես բարձր սոցիալական պատասխանատվություն ունեցող Հայաստանի առաջատար կառույցներից մեկը՝ այս տարի հանդես եկանք մի շարք նախաձեռնություններով, որոնք ստեղծված իրավիճակից ելնելով, նպատակ էին հետապնդում աջակցել առաջին հերթին մեր արցախցի հայրենակիցներին:

Հաշվի առնելով բանկային ծառայություններից օգտվելու խիստ անհրաժեշտությունը՝ մենք անվճար սպասարկմամբ քարտեր տրամադրեցինք Արցախի մեր հայրենակիցներին և ապահովեցինք պատվիրված քարտերի անվճար առաքումը Հայաստանի ամբողջ տարածքում:

Տարեվերջին Ակբա բանկն իրագործեց 4 բարեգործական ծրագիր:

Ծրագրերից առաջինը Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամի հետ համագործակցությունն էր, որի շրջանակում հիմնադրամին տրամադրած մեր աջակցությունը հնարավոր դարձրեց Արցախից բռնի տեղահանված 100-ից ավել երեխաների համար ձեռք բերել հրատապ բուժման համար անհրաժեշտ ամբողջ դեղորայքը:

Երկրորդ ծրագրի շրջանակում, համագործակցելով City of Smile բարեգործական հիմնադրամի հետ, հոգացինք քաղցկեղ ունեցող 2 փոքրիկի ամբողջական բուժումը:

Երրորդ ծրագիրը կրթության ոլորտում էր. Ակբայի աջակցությամբ Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի՝ «Թումոն Արցախի պատանիների համար» նախաձեռնության շրջանակում հոգ կտարվի 12-18 տարեկան արցախցի պատանիների կարիքների ապահովման և ժամանակակից տեխնոլոգիական կրթությունը Հայաստանի ողջ տարածքում նրանց հասանելի դարձնելու մասին:

Իսկ վերջին ծրագրով Ակբան արցախցի փոքրիկներին նվիրեց Ամանորի հեքիաթ. շուրջ 1,500 երեխա Հայաստանի երգի պետական թատրոնում մասնակցեց ամանորյա մյուզիքլի:

Չնայած բոլոր մարտահրավերներին՝ 2023թ.-ին Ակբան գրանցել է ակտիվ հաճախորդների աճ **46%-ի չափով** ունենալով **556,804** ակտիվ հաճախորդ տարեվերջին: Մենք գրանցել ենք նաև քարտերի աճ՝ ավելացնելով նախորդ տարվա ցուցանիշը շուրջ **35,300** քարտով և զբաղեցնելով առաջին հորիզոնականը հայկական շուկայում: Սա մեր բանկի հանդեպ վստահության և մեր կայուն աճի լավագույն ցուցանիշներից է:

Անցած տարվա ընթացքում Ակբան իր բաժնետերերին վճարել է **4.4 մլրդ ՀՀ դրամ** շահութաբաժին: Ակբան Հայաստանում ամենաշատ բաժնետեր ունեցող կազմակերպություններից է:

Մեր պրոֆեսիոնալ թիմը շարունակաբար աշխատում է մեր հաճախորդների համար ամենաժամանակակից տեխնոլոգիական և թվային լուծումներով հեռահար սպասարկման լավագույն փորձառություն ապահովելու ուղղությամբ: Այս ուղղությամբ հատկապես **acba digital** հարթակի զարգացման ու բարելավման աշխատանքները մշտապես մեր ուշադրության կենտրոնում են: acba digital-ը դարձել է մեր հաճախորդների վստահելի ու ժամանակակից ֆինանսական գործիքը, որը թույլ է տալիս ցանկացած վայրից ու ցանկացած ժամանակ կատարել ամենատարբեր ֆինանսական գործարքներ:

Մենք ներկայացրել ենք Հայաստանում առաջին «խելացի» բանկոմատ-տերմինալը՝ **acbaMax-ը**, որի շնորհիվ մեր հաճախորդները կարող են փոխարկել տարադրամը, կատարել վարկերի մարումներ բոլոր բանկերում և այլ ֆինանսական գործարքներ 24/7 ռեժիմով՝ առանց մասնաճյուղ այցելելու:

Կարևոր է շեշտել նաև մեր երկարամյա ու փոխադարձ վստահության վրա հիմնված հարաբերությունները միջազգային գործընկերների հետ: Հենց այդ համագործակցությունների շնորհիվ 2023թ.-ի ընթացքում մենք հնարավորություն ունեցանք մեծածավալ միջոցներ ուղղելու փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորմանը, դասընթացների ու վերապատրաստումների անցկացմանը, ինչը խթանում է Հայաստանի ողջ տնտեսական դաշտի զարգացմանը:

Վերջին տարիներն իսկապես ցույց տվեցին՝ որքան կարևոր է միասնական լինելը, աշխատելը հանուն երկրի, հանուն այն ներկայի ու ապագայի, որը ցանկանում ենք ունենալ: Ակբան, որի հիմքում հենց փոխօգնության, հոգատարության և սոցիալական պատասխանատվության սկզբունքներն են, ընդունում է ժամանակի մարտահրավերներն ու դրանց տալիս արժեքահեն լուծումներ: Եվ ես ուրախ եմ տեսնել, որ Ակբայի ողջ աշխատակազմը կիսում է մեր արժեքները՝ ամենօրյա աշխատանքով նպաստելով ավելի ապահով, ավելի բարեկեցիկ կյանքին: Մենք հոգ ենք տանում մեր հաճախորդի, մեր երկրի և մեր մոլորակի մասին:

Ոգեշնչված ձեզնով...

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ)	2022	2023	
Ընդհանուր ակտիվներ	664 939	783 794	18% ↑
Ընդհանուր պարտավորություններ	555 537	650 684	17% ↑
Սեփական կապիտալ	109 402	133 110	22% ↑
Շահույթ մինչև հարկում	28 317	34 765	23% ↑
Վարկային պորտֆել	461 862	538 605	17% ↑
Ավանդային պորտֆել	424 169	503 232	19% ↑
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ			
Մասնաճյուղեր	63	65	3% ↑
Բանկոմատներ	197	230	17% ↑
Կանխիկի ընդունման տերմինալներ	156	187	20% ↑
POS-տերմինալներ	21 463	30 348	41% ↑
ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ			
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ աշխատակիցներ	1 613	1 774	10% ↑
Ակտիվ հաճախորդներ	381 824	556 804	46% ↑
«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ)			
Ընդհանուր ակտիվներ	63 675	93 393	47% ↑
Ընդհանուր պարտավորություններ	54 871	80 510	47% ↑
Սեփական կապիտալ	8 804	12 883	46% ↑
Շահույթ մինչև հարկում	2 779	4 870	75% ↑
Լիզինգային պորտֆել	53 423	83 406	56% ↑
«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ)			
Ընդհանուր ակտիվներ	3 416	4 314	26% ↑
Ընդհանուր պարտավորություններ	636	686	8% ↑
Սեփական կապիտալ	2 780	3 628	31% ↑
Շահույթ մինչև հարկում	1 854	2 576	39% ↑

ԲԱՆԿԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Ակբա բանկը ստեղծվեց **1996թ.-ին** նորանկախ Հայաստանում՝ խոցելի դարձած գյուղացիական տնտեսություններին նոր տնտեսական իրականության մեջ պաշտպանելու և աջակցելու նպատակով:

Մի քանի նվիրյալներ հավաքվեցին փոքր սենյակում, որտեղ ընդամենը մեկ համակարգիչ կար, և ֆրանսիական Credit Agricole խմբի փորձագետների աջակցությամբ Հայաստանում ԵՄ TACIS ծրագրի շրջանակում ստեղծեցին գյուղատնտեսական բանկ: Ստեղծումից հետո բանկն անգնահատելի օգնություն ցուցաբերեց գյուղացիներին՝ **փրկելով բազմաթիվ տնտեսություններ կազմալուծումից**: Խնդիրն այն էր, որ Խորհրդային Միության փլուզմանը հաջորդող հողի սեփականաշնորհման փուլում մեծ գյուղատնտեսական միությունները դարձան 300 հազարից ավել մանր տնտեսություններ, որոնք համարվում էին ռիսկային, և չէին կարողանում ֆինանսական ինստիտուտներից վարկեր ստանալ՝ որպես բարձր ռիսկայնությամբ ձեռնարկություններ:

«Գյուղացիական Փոխօգնության Բանկի» (առաջին անվանումը) հիմքում **փոխօգնությունը**, հոգատարությունը և միասին ավելի լավ ապագա կառուցելու ցանկությունն էին: Այդպես բանկն օգնեց գյուղացիներին ստանալ ֆինանսավորում, իսկ գյուղացիներն օգնեցին բանկին ընդգրկել նոր, վստահելի գյուղացիակա տնտեսություններ:

Շատերը կարծում էին, որ բանկը ձախողվելու է, որ վարկերի վերադարձվելիությունը չի ապահովվելու: **Բայց մեր փորձը ցույց տվեց, որ երբ հավատում ես դիմացինի մեծ երազանքին ու գործին, նա անպայման հաջողում է**: Առաջին տարվանից բանկի վարկերի վերադարձվելիությունը կազմեց 100%՝ նախանշելով Ակբա բանկի երկար ճանապարհը:

1996թ.-ին Հայգյուղփոխբանկը տրամադրում էր միայն կարճաժամկետ սեզոնային գյուղատնտեսական վարկեր: Ստեղծմանը հաջորդող տարիներին բանկն աստիճանաբար սկսեց ընդլայնել ծառայությունները՝ տրամադրելով վարկեր նաև գյուղացիական միջավայրում իրականացվող ոչ գյուղատնտեսական ծրագրերի, իսկ 1999թ-ից՝ նաև փոքր և միջին բիզնեսի զարգացման համար:

> “Բանկի տարբեր մասնաճյուղեր առ այսօր անակնկալ ստանում են միրգ, բանջարեղեն, գյուղատնտեսական ապրանքներ մարդկանցից, ովքեր բանկի շնորհիվ տարիներ առաջ կարողացել էին փրկել ու զարգացնել իրենց կյանքի գործը”

1995թ

- **օգոստոսի 28** - ստեղծվեց «Հայաստանի Գյուղացիական Փոխօգնության Բանկ» կոոպերատիվ բանկը:

1996թ

- Բանկն անդամակցեց SWIFT և FACET համակարգերին:
- Բանկը թղթակցային հաշիվներ բացեց ֆրանսիական «CREDIT AGRICOLE» և հոլանդական «ABN AMRO» բանկերում:

2000թ

- Բանկը բրիտանական «Financial Times» հեղինակավոր կազմակերպության «The Banker» ամսագրի կողմից ճանաչվեց Հայաստանում տարվա լավագույն բանկը:
- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու ՀՀ ԿԲ-ի կողմից Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկը ճանաչվեց պետական պարտատոմսերի շուկայում լավագույն դիլեր:
- Բանկը դարձավ «Արմենիան քարդ» (Արքա քարտերի առաջին սպասարկող ու թողարկողը Հայաստանում և մինչ այսօր) «Արմենիան քարդ» ՓԲԸ պրոցեսինգային կենտրոնի հիմնադիր անդամ է:

2001թ

- Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկը թողարկեց իր առաջին ArCa Classic վճարային քարտը:
- Բանկը բրիտանական «Financial Times» հեղինակավոր կազմակերպության «The Banker» ամսագրի կողմից ճանաչվեց Հայաստանում տարվա լավագույն բանկը:

2002թ

- Բանկը դարձավ Visa International միջազգային վճարային համակարգի լիիրավ անդամ և թողարկեց առաջին Visa Electron, Visa Classic, Visa Business և Visa Gold քարտերը:

2003թ

- Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկը ՀՀ բանկային համակարգում իրական հատվածի վարկային ներդրումների ծավալով դարձավ առաջատարը:
- Դարձավ ՀՀ առաջին բանկը, որին միջազգային աուդիտորական ընկերության կողմից շնորհվեց որակի կառավարման միջազգային համակարգի ISO 9001:2000 արտոնագիր:
- Բանկը ձեռք բերեց Visa International վճարահաշվարկային համակարգի արտոնագիր՝ առևտրի և սպասարկման կետերում այլ բանկերի թողարկած Visa քարտերի սպասարկման համար:
- Ստեղծվեց առաջին գրանցված մասնագիտացված լիզինգային ընկերությունը Հայաստանում՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն: Ընկերության հիմնական նպատակներն էր օժանդակել տնտեսության բոլոր ոլորտներում գործող մանր և միջին ձեռնարկություններին, գյուղացիական տնտեսություններին՝ ձեռք բերել սարքավորումներ և արտադրական միջոցներ միջին ժամկետի ֆինանսավորման միջոցով:

2006

- Բանկը բրիտանական «Financial Times» հեղինակավոր կազմակերպության «The Banker» ամսագրի կողմից ճանաչվեց Հայաստանում տարվա լավագույն բանկը:
- Ֆրանսիական հեղինակավոր «ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Էս. Էյ.» բանկային խումբը դարձավ բանկի 28%-ի բաժնետերը, և բանկը 2006թ.-ի սեպտեմբերի 9-ին բանկի Ընդհանուր ժողովի որոշմամբ վերակազմակերպվեց ու վերանվանվեց «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն:

2007

- Fitch Ratings վարկանշային գործակալությունը բանկին շնորհեց երկարաժամկետ թողարկողի BB վարկանիշ (կայուն հեռանկարով):
- Օգոստոսին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (EBRD) աշխարհում խոշորագույն բանկերից մեկի՝ Citigroup-ի հետ համատեղ, Հայաստանի բանկային պատմության մեջ առաջին անգամ բանկին տրամադրեց սինդիկացված վարկ, որն ուղղվեց Հայաստանում գործող փոքր և միջին (այդ թվում՝ Հայաստանի հեռավոր վայրերում գործող) ձեռնարկությունների վարկավորմանը:

2008թ

- «Financial Times»-ի «The Banker» ամսագիրը 5-րդ անգամ Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկը ճանաչեց Հայաստանի լավագույն բանկ:

2009

- Չնայած համաշխարհային տնտեսական և ֆինանսական ճգնաժամի հետևանքով ստեղծված ոչ նպաստավոր իրավիճակին՝ Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկը բանկային գործունեության գրեթե բոլոր կարևորագույն ցուցանիշներով շարունակեց մնալ առաջատարը և ՀՀ բանկային համակարգում դարձավ առաջինը պետական բյուջե մուծված հարկերի ծավալով:

2010

- ՀՀ բանկային պատմության մեջ առաջին անգամ Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկը հատեց իրական հատվածում կատարված վարկային ներդրումների ծավալով 100 մլրդ ՀՀ դրամ սահմանագիծը:
- Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկը թողարկեց և սպասարկեց միջազգային 3 խոշոր (American Express, Visa International, MasterCard International) և մեկ ազգային (ArCa) վճարահաշվարկային համակարգերի քարտեր:
- Տարվա ընթացքում միջազգային փոխանցումների կատարման բարձր որակ ապահովելու համար Գերմանական «Commerzbank AG» բանկը Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկին շնորհեց «Որակի գերազանցության» մրցանակ:

2011

- ՀՀ կառավարության կողմից իրականացվեց գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր, որի շրջանակում տրամադրված վարկերի ավելի քան 94%-ը տրամադրվեց Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի կողմից:
- Նույն տարում ՈւԵՖԱ Չեմպիոնների Լիգայի հետ համատեղ բանկը թողարկեց MasterCard UEFA Champions League քարտատեսակը և բացառիկ իրավունքով թողարկեց American Express համակարգի երկրորդ տեսակի՝ American Express Blue քարտը:

2013թ

- Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի ընդհանուր ակտիվները կազմեցին Հայաստանի բանկային համակարգի ակտիվների համախառն ծավալի 9%-ը, իսկ ընդհանուր կապիտալի՝ շուրջ 12%-ը:
- Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչ «Ամունդի Ասեթ Մենեջմենթ» ընկերության հետ Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկը հիմնադրեց «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն: 1.9 տրիլիոն եվրո կառավարման ներքո ակտիվներով Ամունդին Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչն է:

2014

- Բանկը ներդրեց արագ դրամական փոխանցումների 4 նոր համակարգ՝ Converse Transfer, Sigue Money, Anelik Online և Tandem Transfers:
- Բանկը ներդրեց Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության համակարգ, որի գերակա ուղղություններն էին սահմանամերձ հեռավոր բնակավայրերի աջակցությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, պատմամշակութային արժեքների պահպանությունը և երիտասարդությանն ուղղված ծրագրերի իրականացումը:
- Բանկը բացառիկ իրավունքով թողարկեց American Express-ի երրորդ տեսակի՝ American Express Cashback քարտը:

2015թ

- Բանկը ներդրեց հեռահար բանկային ծառայությունների տրամադրման նոր գործիք՝ **ACBA Mobile** հավելվածը, որը թվային փոփոխությունների առաջին քայլն էր:
- Բանկն իրականացրեց նաև կառուցվածքային փոփոխություններ, որոնց արդյունքում ձևավորվեցին բանկային գործունեության հիմնական 3 բիզնես ուղղությունները՝ գյուղատնտեսական, մանրածախ, ՓՄՁ և կորպորատիվ:

2016թ

- Բանկի կողմից բացառիկ հիմունքներով թողարկվող American Express Gold և American Express Blue վճարային քարտերը թողարկվեցին չիպային տարբերակով:
- Գործարկվեց American Express քարտերի նոր ինտերնետային կայքը:

2017

- Գործարկվեցին ussd և pin change ծառայությունները: USSD-ի շնորհիվ բանկի քարտապան հաճախորդները հնարավորություն ստացան անհրաժեշտության դեպքում շտապ բլոկավորել քարտը SMS-ի միջոցով՝ առանց բանկ այցելելու: Pin change-ը հնարավորություն տվեց քարտապաններին ցանկության դեպքում բանկի բանկոմատի միջոցով փոխել քարտի PIN գաղտնաբառը:
- Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկը և կորպորատիվ բիզնես լուծումների շուկայում ողջ աշխարհում առաջատար SAP ընկերությունը ստորագրեցին ծրագրային ապահովման ձեռքբերման պայմանագիր, որով բանկը փուլային եղանակով իրականացնում է բանկի ամբողջական թվային տրանսֆորմացիա:
- Բանկը թողարկեց ռուսական МИР վճարային համակարգի «ԱՐՔԱ-ՄԻՐ» չիպային քարտերը:

2018

- Fitch Rating վարկանշային գործակալությունը բանկին շնորհեց Երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի **B+** վարկանիշ՝ կայուն հեռանկարով (Long-Term Issuer Default Rating IDR):
- Ճապոնական JCB Co. International-ի և Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի համագործակցության արդյունքում Հայաստանում առաջին անգամ սկսվեց աշխարհում շուրջ 117 մլն քարտապան ունեցող JCB վճարային համակարգի կողմից թողարկվող քարտերի սպասարկումը:

2019թ

- Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկը միջազգային ֆինանսական երկու կազմակերպություններից ներգրավեց 9 մլն եվրոյի ստորադաս փոխառություն, ինչը բանկի նկատմամբ միջազգային ներդրողների վստահության ևս մեկ ապացույց է:
- Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի և չինական UnionPay International-ի համագործակցության արդյունքում Հայաստանում մեկնարկեց UnionPay քարտերի սպասարկումը:

2020

- Fitch Ratings վարկանիշային գործակալության կողմից բանկին շնորհվեց Երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի **B+** վարկանիշ՝ կայուն հեռանկարով (Long-Term Issuer Default Rating IDR):
- Բանկի Ընդհանուր ժողովի որոշմամբ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն վերակազմակերպվեց և վերանվանվեց «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն:
- Ակբա բանկը Visa միջազգային վճարային համակարգի հետ համագործակցությամբ Հայաստանում առաջին անգամ գործարկեց վճարումների NFC համակարգը:

2021

- Ակբա բանկը հասարակությանը ներկայացավ նոր բրենդով, փոխվեց բանկի կազմակերպաիրավական ձևը:

2022

- Ակբա բանկի բաժնետոմսերը ցուցակվեցին Հայաստանի ֆոնդային բորսայի ամենակարևոր A հարթակում:
- Ակբա բանկի հաճախորդներին հասանելի դարձան վճարման ավելի ապահով, անվտանգ և վստահելի գործիքներ՝ Apple Pay-ը և Google Pay-ը:

2023

- Ակբա բանկը մեկնարկեց Acba Business Club-ի գործունեությունը:

ԲԱՆԿԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (մլրդ ՀՀ դրամ)

Ակտիվներ

784 ↗ +18%

բանկի մասնաբաժինը շուկայում՝

8.5%

Կապիտալ

133 ↗ +22%

բանկի մասնաբաժինը շուկայում՝

9.0%

Վարկեր

539 ↗ +17%

բանկի մասնաբաժինը շուկայում՝

10.7%

Ավանդներ

503 ↗ +19%

բանկի մասնաբաժինը շուկայում՝

9.0%

Զուտ շահույթ

28 ↗ +26%

բանկի մասնաբաժինը շուկայում՝

12.4%

ROE

23.4 ↗ +10.9%

ROA

3.9 ↗ 0.2 %

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Քարտային բիզնեսով առաջատար՝

- 1-ին տեղը ՀՀ շուկայում քարտերի քանակով
- American Express վճարային համակարգի բացառիկ ներկայացուցիչ ՀՀ-ում
- 4 վճարային համակարգերի թողարկող
- Միակը շուկայում՝ որպես 7 վճարային համակարգերի սպասարկող

Գյուղատնտեսության ոլորտում շուկայում մեծ կշիռ և երկար տարիների փորձ:

TOM ցուցանիշով առաջատարն է ՀՀ բանկային համակարգում:

1,774

Ակբան ՀՀ խոշոր գործատուներից մեկն է. աշխատակիցների թիվը՝ **1,774**:

Ակտիվ հաճախորդներ

556,804 ↗ +40.4%

Թվայնացված հաճախորդներ

acba digital թվային հարթակի օգտատերերի քանակը արդեն գերազանցում է **400,000-ը**:

65

Ակբան ներկայացված է Հայաստանի ամբողջ տարածքում, ունի 65 մասնաճյուղ, և բանկոմատա-տերմինալների տեղակայման թվաքանակով շուկայի առաջատարն է:

Պատմական ակնարկ

Բանկն ի սկզբանե ստեղծվել է յուրահատուկ մոդելի հիման վրա և հստակ առաքելությամբ՝ խթանել մեր նորանկախ պետության մի ամբողջ ռազմավարական ոլորտի զարգացումն ու կայացումը, օգնել լուծել գյուղացիների և երկրի գյուղատնտեսության ոլորտի ծանր մարտահրավերները ու խնդիրներն այն ժամանակահատվածում, երբ դրանք համարվում էին անլուծելի և բարձր ռիսկային:

Գործունեության հենց առաջին տարիներից Ակբան սկսեց գրանցել նշանակալի հաջողություններ և վստահություն ձեռք բերեց թե՛ գյուղացիների, թե՛ հասարակության տարբեր անդամների շրջանում՝ դառնալով երկրի ամենավստահելի և հաստատուն քայլերով զարգացող առաջատար ֆինանսական կառույցներից մեկը:

Հետագա տարիներին՝ բանկի զարգացմանը զուգընթաց, առաքելությունը դարձավ ավելի ընդգրկուն, չնայած նրան, որ գյուղատնտեսության ֆինանսավորումը շարունակեց մնալ բանկի գործունեության հիմնաքարերից մեկը: Բանկն իր գործունեության ընթացքում անընդհատ ամրապնդել է դիրքերը բանկային բոլոր հիմնական ծառայությունների ոլորտում և, դառնալով ունիվերսալ բանկ, մնացել հավատարիմ իր որդեգրած քաղաքականությանը՝ շարունակել իր գործունեությամբ նպաստել հասարակության լայն շերտերի կայուն տեմպերով զարգացմանը:

Առաքելություն, արժեքներ, տեսլական

Մեր առաքելությունն է՝

Ինքնատիպ և նորարար լուծումներով նպաստել հասարակության կայուն զարգացմանը

Բանկի գործունեության կենտրոնում մեր հաճախորդներն են, ում սպասարկումը, կյանքի որակի բարձրացումը և բիզնեսի զարգացումը բանկի առաջնահերթություններն են: Միաժամանակ, որպես փոխօգնության գաղափարի հիման վրա ստեղծված կազմակերպություն, մենք մշտապես ձգտում ենք տրամադրել ֆինանսական գործիքներ և ռեսուրսներ հասարակության տարբեր սեգմենտներին՝ անհատներին, կազմակերպություններին և համայնքներին իրենց կյանքի և բիզնեսի տարբեր փուլերում աջակցելու նպատակով: Հենց սա է պատճառը, որ բանկի կողմից առաջարկվող լուծումների հիմքում հաճախորդի բարձրաձայնած և թաքնված կարիքների բացահայտումն է ու դրանց նորարարական տեխնոլոգիաների, մեթոդների և մոտեցումների առաջարկը: Այս մոտեցմամբ ստեղծված ծառայություններ ու պրոդուկտներ առաջարկելով մենք օգնում ենք մեր հաճախորդներին կերտել իրենց պատկերացրած լավագույն ապագան և գրանցել երկարամյա ու կայուն զարգացում:

Բանկի տեսլականը

Ելնելով մեր առաքելությանից և գործելով մեր արժեքներին համահունչ՝ մենք ունենք հստակ պատկերացում, թե ուր ենք շարժվում, որտեղ և ինչպիսին ենք ցանկանում լինել ապագայում, և այդ տեսլականը կառուցված է առաջատարը լինելու գաղափարի հիման վրա.

- լինել առաջին ընտրության բանկը՝ մշտապես առաջարկելով ճկուն և ստեղծարար լուծումներ,
- լինել ամենաճանաչելի ապրանքանիշը ՀՀ ֆինանսական շուկայում,
- լինել առաջատարը ՀՀ ֆինանսական շուկայում արդյունավետության և շահութաբերության ցուցանիշներով,
- լինել գյուղատնտեսության ոլորտի խթանիչ,
- լինել առաջին ընտրության գործատուն ՀՀ ֆինանսական շուկայում:

Մեր արժեքները

Ակբայի արժեքները հիմնավորվել են երկարատև պատմության ընթացքում և ընկած են բանկի բոլոր աշխատակիցների վարքագծի և գործողությունների հիմքում: Մենք հավատում ենք, որ այս արժեքներով միայն կարող ենք հասնել բանկի առաքելության ու տեսլականի իրականացմանը.

- **Հոգատարություն հաճախորդների հանդեպ**

Հաճախորդների հանդեպ հոգատարությունը բանկի այն հիմնարար արժեքներից է, որով առաջնորդվում են բոլոր աշխատակիցները՝ իրենց մեջ կրելով և ամեն օր ցուցաբերելով պարզ, մարդկային վերաբերմունքն ու հոգատարությունը: Սա արտահայտվում է հաճախորդների խնդիրներին ականջալուր լինելու, այդ խնդիրների և թաքնված պահանջմունքների արդյունավետ բացահայտման ունակությամբ, ինչպես նաև դրանք լավագույնս բավարարող ծառայություններ մատուցելով: Արդյունքում մենք ունենք ամուր և երկարատև գործընկերային հարաբերություններ մեր հաճախորդների հետ:

- **Սոցիալական պատասխանատվություն**

Սոցիալական պատասխանատվությունը ենթադրում է բանկի պատրաստակամությունը, բարոյական և էթիկական պարտավորությունը իր գործունեությամբ նպաստելու հասարակության կայուն զարգացմանն ու առաջընթացին: Բանկի ուշադրության կենտրոնում են շրջակա միջավայրի պահպանումը, համայնք-

ների համաչափ ու կայուն զարգացումը, խոցելի խմբերի խնդիրների լուծումը և հասարակության համար նշանակալի ծրագրերի իրագործումը: Մեզ համար կարևոր է մեր ունեցած ֆինանսական ու ոչ ֆինանսական լծակների օգնությամբ հասարակության և շրջակա միջավայրի վրա դրական ու երկարատև ազդեցություն թողնելը:

Հավատարմություն

Մենք հավատարիմ ենք մեր առաքելությանը, մեր որդեգրած արժեքներին և մեր հաճախորդներին: Մենք անչափ կարևորում ենք նաև մեր հաճախորդների հավատարմությունը բանկին, որի համար շարունակաբար բարելավում ենք մեր ծառայությունների և մատուցման որակը՝ նպաստելով մեր հաճախորդների բավարարվածության բարձրացմանը: Ի թիվս այլ արժեքների, բարձր ենք գնահատում մեր աշխատակիցների հավատարմությունը բանկին, բանկի որդեգրած քաղաքականությանը և սահմանած կանոններին ու սկզբունքներին, ինչպես նաև աշխատակիցների միջև վստահության բարձր մակարդակի ձևավորումն ու պահպանումը:

Թափանցիկություն

Թափանցիկության արժեքն արտահայտվում է բոլոր շահագրգիռ կողմերին՝ հաճախորդներին, ներդրողներին, գործընկերներին և կարգավորող մարմիններին հստակ և չքողարկված տեղեկատվության տրամադրմամբ, ինչը թույլ է տալիս բանկի շահառուներին լինել տեղեկացված և ճիշտ որոշումներ կայացնել: Այս արժեքի հիման վրա մենք կառուցել և շարունակում ենք զարգացնել թափանցիկ ու վստահելի հարաբերություններ բանկի կյանքում ներգրավված բոլոր կողմերի հետ:

Նորարարություն

Մեզ համար նորարարությունը նշանակում է ստեղծագործական միտքը խթանելու, շուկայի և միջավայրի փոփոխություններն ընդունելու և անընդհատ զարգացող աշխարհում արդյունավետությանն ու մրցակցային առավելությանը միտված նոր լուծումներ փնտրելու պարտավորություն: Այն մեզ համար վերածվել է հաստատված աշխատելաոճի ու մտածելակերպի, ինչը ենթադրում է հաճախորդների փորձի բարելավմանն ուղղված ժամանակակից, նոր և ինքնատիպ լուծումների մշակում, գործառնությունների օպտիմալացում, ինչպես նաև ժամանակակից մոտեցումների ներդնում: Նույն սկզբունքն աշխատում է նաև մեր աշխատակիցների համար. մենք մշակում և ներդնում ենք ծրագրեր, որոնք առավելագույնս կավտոմատացնեն գործառույթները և կնվազեցնեն աշխատողների ծանրաբեռնվածությունը՝ ռեսուրսներն ուղղելով ռազմավարական նշանակության այլ ոլորտների զարգացմանը:

Բանկի բիզնես մոդելը

Բանկի ծառայությունները թիրախավորում են հաճախորդների երեք հիմնական սեգմենտ՝ գյուղատնտեսական, մանրածախ ու ՓՄՁ և կորպորատիվ: Բանկն իր պատմությամբ, բիզնես ուղղություններով և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի շրջանակում մշտապես առաջնորդվել և շարունակում է հավատարիմ մնալ հետևյալ սկզբունքներին՝

- նպաստել համայնքների զարգացմանը,
- վարել թափանցիկ և հաճախորդակենտրոն գործունեություն,
- զերծ մնալ գերշահույթ ապահովող, բայց հասարակության ու բնության նկատմամբ մեծ ռիսկ պարունակող նախագծերից,
- գործողությունների հիմքում ունենալ սոցիալական նշանակության բաղադրիչներ:

Հարկ է նշել նաև, որ բանկը, հավատարիմ մնալով իր սկզբունքներին, չի ֆինանսավորում շրջակա միջավայրի պահպանությանը վնասող գործունեություն, զենքի/զինամթերքի արտադրությամբ և առևտրով, ինչպես նաև խաղատնային և վիճակախաղային գործունեություն ծավալող կազմակերպություններին: Ավելին, ֆինանսավորում իրականացնելիս բանկն ուսումնասիրում է տվյալ գործունեության ազդեցությունը սոցիալական և շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև խրախուսում է էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործումը:

Տնտեսական միջավայր

ՀՀ տնտեսությունը 2023թ.-ին շարունակել է նախորդ տարվա աճի բարձր տեմպը՝ պայմանավորված աշխարհաքաղաքական իրադարձությունների հետևանքով մարդկանց և կապիտալի ներհոսքով դեպի ՀՀ, օտարերկրյա ներդրումներով և վերաարտահանման աճով: Նպաստավոր են եղել նաև առևտրի աճի բարձր տեմպը, որը կտրուկ արագացել է տարեվերջին, ինչպես նաև շինարարության և ծառայությունների ոլորտների աճը: Իրական ՀՆԱ-ն աճել է մոտ **7.4%-ով**՝ հիմնականում պայմանավորված սպառման աճով:

2023թ.-ի հունիսից գնաճը գտնվել է բավականին ցածր, նույնիսկ բացասական տիրույթում, որը հիմնականում պայմանավորված է արտաքին հատվածից ապրանքահումքային գների նվազմամբ, դրամի արժևորմամբ և գնաճին ՀՀ ԿԲ զսպող դրամավարկային քաղաքականության վաղ արձագանքմամբ: Այսպես՝ 2023թ.-ին դիտվել է ցածր գնաճային միջավայր (դեկտեմբերին 12-ամսյա գնաճը կազմել է **-0.6%**): ՀՀ ԿԲ Խորհուրդը 2023թ.-ի ընթացքում ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը իջեցրել է 1.5 տոկոսային կետով՝ տարեվերջին սահմանելով **9.2**%:

2023թ.-ի առաջին ինն ամիսների ընթացքում արժութային շուկաները կայուն են եղել: Հոկտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում դրամը արժեզրկվեց մոտ 15%-ով, որից հետո ԿԲ-ն իրականացրեց

60 մլն ԱՄՆ դոլարի վաճառք, որը հանգեցրեց շուկայի կարգավորմանը:

2023թ.-ի ընթացքում վարկերի ծավալները շարունակում են աճել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի հաշվին: ՀՀ բանկային համակարգի վարկերի որակը չնչին բարելավվել է: Ստանդարտ դասով դասակարգված վարկերը տարեվերջի դրությամբ կազմել են ընդհանուր վարկային ներդրումների **95.8%-ը**:

2023թ.-ի ընթացքում գրանցվել է բանկային համակարգում իրացվելիության իջեցում գրեթե 4 տոկոսային կետով՝ կազմելով **33.9%**, սակայն այն շարունակում է մնալ բարձր մակարդակում:

Միաժամանակ, բանկային համակարգը գրանցել է հիմնական ցուցանիշների չափավոր աճ՝ վարկային պորտֆելն աճել է **20.6%-ով**, ավանդային պորտֆելն աճել է **8.8%-ով**: Բանկային համակարգի շահույթը կազմել է **230 մլրդ ՀՀ դրամ՝ 23.8 մլրդ ՀՀ դրամով** պակաս լինելով նախորդ տարվա շահույթից:

2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ առաջատար 5 բանկերի ակտիվները կազմել են բանկային համակարգի ակտիվների **57.1%-ը**:

2023թ.-ի ընթացքում Հայաստանի ֆինանսական համակարգը պահպանել է իր կայունությունը՝ դիմակայելով տարվա ընթացքում առաջ եկած բոլոր խնդիրներին և մարտահրավերներին: ՀՀ բանկային համակարգը բավականաչափ կապիտալացված է և հնարավորություն ունի կլանել բոլոր ռիսկերն ու մարտահրավերները, զարգացման համար ունի բավականին մեծ պոտենցիալ:

Ակբա բանկը ՀՀ բանկային համակարգում

2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ակբա բանկի ակտիվները կազմել են **783.8 մլրդ ՀՀ դրամ**՝ տարվա ընթացքում աճելով **17.9%-ով**: Բանկային համակարգի ակտիվները նույն ժամանակահատվածում աճել են **9.4%-ով**: Բանկի մասնաբաժինը շուկայում կազմել է **8.5%**՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով **0.6** տոկոսային կետով:

2023թ.-ի ընթացքում հաճախորդներին տրամադրված վարկերն աճել են **16.6%-ով**՝ բանկային համակարգի **20.6%** աճի պարագայում: Արդյունքում բանկի վարկերի մասնաբաժինը շուկայում կազմել է **10.7%**: Բանկի վարկային պորտֆելի արժութային կառուցվածքը էականորեն տարբերվում է մրցակիցներից: Ակբա բանկի կողմից ՀՀ դրամով տրամադրված վարկերի կշիռն ընդհանուր պորտֆելում կազմել է **71.7%**, ինչը վկայում է Ակբա բանկի պորտֆելի ավելի քիչ ռիսկային լինելու մասին:

Միաժամանակ, ավանդային պորտֆելը գրանցել է բավականին բարձր աճ՝ **18.6%**, նույն ժամանակահատվածում, երբ բանկային համակարգն աճել է **9.3%-ով**: Արդյունքում բանկի ավանդների մասնաբաժինը շուկայում կազմել է **9.1%**: Բանկի ավանդային պորտֆելի արժութային կառուցվածքը էական փոփոխության է

ենթարկվել. ավանդային պորտֆելի **62.5%-ը** կազմել են ՀՀ դրամով ավանդները՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով **12.8** տոկոսային կետով, ինչն էականորեն ավելի բարձր է բանկային համակարգի միջին ցուցանիշից:

2023թ.-ին բանկի կապիտալը նախորդ տարվա համեմատ աճել է **23.7 մլրդ ՀՀ դրամով՝** կազմելով **133.1 մլրդ ՀՀ դրամ՝** բանկային համակարգում զբաղեցնելով 4-րդ տեղը: Կապիտալի աճը հիմնականում պայմանավորված է տարվա ընթացքում գեներացված շահույթով: Նշենք նաև, որ բանկը 2023թ.-ի ընթացքում **4.4 մլրդ ՀՀ դրամի** շահութաբաժին է վճարել իր բաժնետերերին: Բանկի հիմնական և ընդհանուր կապիտալների համարժեքության ցուցանիշները կազմել են համապատասխանաբար **17.8%** և **20.0%**՝ բավականին բարձր լինելով մրցակից բանկերի միջին ցուցանիշից՝ համապատասխանաբար **1.7** և **1.9** տոկոսային կետերով:

2023թ.-ի արդյունքներով բանկը զբաղեցնում է **1-ին** տեղը բանկային համակարգում հետևյալ ցուցանիշներով.

- ակտիվների եկամտաբերությամբ՝ **11.4%**. այսպես՝ Հայաստանի երեք խոշոր բանկերի ակտիվների եկամտաբերության միջին ցուցանիշը կազմել է **7.8%**՝ զիջելով Ակբա բանկի նույն ցուցանիշին **3.6** տոկոսային կետով,
- վարկային պորտֆելի **14.3%** եկամտաբերությամբ. երեք խոշոր բանկերի վարկային պորտֆելների եկամտաբերության միջին ցուցանիշը զիջել է Ակբա բանկի նույն ցուցանիշին **4.4** տոկոսային կետով,
- զուտ տոկոսային մարժայով. բանկի տոկոսային մարժան կազմել է **7.0%**՝ գերազանցելով մրցակից բանկերի միջին ցուցանիշը 2.2 տոկոսային կետով,
- բանկի տոկոսային սպրեդով (եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն – ծախսատար պարտավորությունների ծախսատարություն):

Միաժամանակ, բանկը զբաղեցրել է **3-րդ** տեղը զուտ բանկային եկամուտներով և զուտ շահույթով, իսկ զուտ բանկային եկամուտներ/ակտիվներ ցուցանիշով՝ **2-րդ** տեղում է: 2023թ.-ին վերջին ցուցանիշը կազմել է **8.9%** (որպես համեմատություն՝ բանկային համակարգի միջին ցուցանիշը կազմել է **6.8%**):

Ակբա բանկի ակտիվների շահութաբերությունը կազմել է **3.9%**՝ բանկային համակարգի միջին ցուցանիշից բարձր լինելով 1.4 տոկոսային կետով (միջին ցուցանիշ՝ **2.6%**):

Կապիտալի շահութաբերությունը կազմել է **23.4%**՝ բանկային համակարգի միջին ցուցանիշից բարձր լինելով 7.2 տոկոսային կետով (միջին ցուցանիշ՝ **16.2%**):

Ակբա բանկի դիրքավորումը շուկայում

Լինելով ՀՀ ֆինանսական համակարգի առաջատար կառույցներից մեկը՝ Ակբան մշտապես հետևում է միջազգային նորարարական տենդենցներին, հաճախորդների օրեցօր փոփոխվող պահանջներին և պահանջմունքներին, գնահատում է շուկայի հեռանկարային զարգացումները:

Ծավալվող ամենօրյա աշխատանքների շնորհիվ բանկը մի շարք ուղղություններում ամրագրել է մրցակցային առավելություններ: Ըստ հարցումների.

- Ակբա բանկն ընկալվում է որպես վստահելի և հեղինակավոր ֆինանսական կառույց, որն իր կայուն ներդրումն ունի երկրի և հասարակության զարգացման գործում:

- Ակբա բանկն ընկալվում է որպես ազնիվ, թափանցիկ բանկ, որի կողմից առաջարկվող ծառայությունները մատչելի են և չունեն թաքնված վճարներ:

- Ակբա բանկն ընկալվում է որպես գյուղատնտեսական թիրախավորում ունեցող ֆինանսական կառույց, որն օժանդակում և աջակցում է ՀՀ գյուղատնտեսության զարգացմանը:

- Ակբա բանկն ընկալվում է որպես հաճախորդակենտրոն բանկ, որն ունի պրոֆեսիոնալ անձնակազմ և լավագույնն է հաճախորդների սպասարկման տեսանկյունից: Բանկում գործընթացները ճկուն են, արագ՝ առանց հերթերի, և առաջարկվում են անհատական պայմաններ ու անհատական մոտեցում յուրաքանչյուր հաճախորդին:

- Ակբա բանկն ունի իր կայուն դիրքը բիզնես հաճախորդներին ոչ ֆինանսական ծառայությունների մատուցման հարցում: Բիզնեսի կառավարման արդյունավետությանն ուղղված մասնագիտական դասընթացները, թեմատիկ միջոցառումները, հայ արտադրողների պրոդուկտների ներկայացումը բանկի մասնաճյուղերում և այլ նախաձեռնություններն իրենց դրական ազդեցությունն ունեն գործարար ոլորտի զարգացման հարցում:

- Ակբա բանկն ունի հարմարավետ մասնաճյուղեր, բանկոմատա - տերմինալային ծառայություններ և սպասարկման լայն ցանց:

Նախագծեր, գործողություններ

Վերջին տարիներին բանկի ուշադրության կենտրոնում են եղել թվային հարթակի զարգացումը, հաճախորդների բավարարվածությանը և սպասարկման որակի բարձրացմանն ուղղված միջոցառումները: Ակբան, շարունակելով հաճախորդների սպասարկման որակի բարելավմանը միտված իր աշխատանքները, թվայնացման օրակարգի շրջանակներում acba digital բջջային և վեբ հարթակներում ներդրել է տարատեսակ նոր պրոդուկտներ և ծառայություններ՝ ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման և բանկի առաջարկած լուծումներից հաճախորդների օգտվելու փորձառության լավացման համար: Այսպես, 2023թ.-ին acba digital հարթակում ներդրվել են բիոմետրիկ նույնականացում, վիրտուալ օգնական, ապահովագրական տարբեր ծառայությունների ձեռքբերման, տարատեակ վճարումների իրականացման և այլ հնարավարություններ, ինչպես նաև իրականացվել են հաճախորդի փորձի լավացմանը միտված տարաբնույթ փոփոխություններ: Այս բարելավումների իրականացման արդյունքում Ակբան ստացավ հաճախորդների դրական արձագանքը: Հետազոտությունների արդյունքներով բանկի թվային հարթակը շարունակում է մնալ շուկայում ամենաշատ օգտագործվող բանկային հարթակներից մեկը, իսկ օգտատերերի քանակը 2023թ.-ի ընթացքում ավելացել է **67%-ով**՝ կազմելով գրեթե **450,000**: Կարևորելով հաճախորդներին հեռահար եղանակով տրամադրվող ծառայությունները՝ բանկը շարունակելու է ընդլայնել հեռահար ծառայությունների մատուցման ուղիները՝ նպատակ ունենալով ապահովել հաճախորդներին տրամադրվող բանկային ծառայությունների հասանելիություն 24/7 ռեժիմով՝ առանց բանկ այցելության և տարատեսակ բանկային ու ոչ բանկային ծառայություններին հասանելիություն մեկ վայրից:
Շարունակական բնույթ ունեն նախորդ տարիներին պլանավորած և իրականացվող նախագծերն ու գործողությունները, որոնք միտված են հաճախորդների սպասարկման որակի բարելավմանը: Այսպես, 2023թ.-ին սկսվել է հաճախորդների տվյալների թարմացման գործընթացը acba digital թվային հարթակում, ինչը կազատի հաճախորդներին մասնաճյուղ այցելելու անհրաժեշտությունից բանկի պրոդուկտներից լիարժեք օգտվելու համար, իսկ բանկին կտա հնարավորություն հաճախորդների թարմացված և ակտուալ տվյալների հիման վրա ավելի արդյունավետ կազմակերպել նրանց հետ հարաբերությունների կառավարումը և թիրախային առաջարկների ձևավորումը:

Մեկնարկել է մասնաճյուղերի ստանդարտացման և սպասարկման կատարողականի նախագիծը, որի արդյունքում ակնկալվում է ունենալ սահմանված մասնաճյուղերի նոր բիզնես մոդելներ և վաճառքի ու սպասարկման արդյունավետ համակարգ, ինչպես նաև իրականացվող գործարքների հաշվառման և վերլուծության բարելավված մոտեցումներ:

Թվային փոխակերպման շրջանակում բանկում շարունակվելու են SAP նոր համակարգերի ներդրման և ներքին տարատեսակ ծրագրերի փոխակերպման նախագծերն ու գործողությունները: Նախորդ տարիներին SAP տարբեր ծրագրերի արդյունավետ

ներդրման արդյունքում արդեն իսկ ունենք հաջողությամբ կիրառվող գործիքներ մարքեթինգի, հաճախորդների հետ հարաբերությունների և ընկերության ֆինանսական գործարքների կառավարման համար: Ներդրվող նոր գործիքներն արդեն իսկ ներդրվածների հետ միասին՝ որպես մեկ միասնական և փոխկապակցված համակարգ, հնարավորություն կտան բանկի բիզնես գործընթացները համապատասխանեցնել միջազգային լավագույն փորձին և բարելավել բանկի դիրքը շուկայում:

Վարկավորումը, որպես բանկի գործունեության հիմնական ուղղություն, անընդհատ գտնվում է առաջնային ուշադրության կենտրոնում: Շարունակելով նախորդ տարիներին մեկնարկած և իրականացրած նախաձեռնությունները՝ առաջիկայում նույնպես նախատեսվում է իրականացնել վարկավորման գործընթացի բարելավմանն ուղղված տարատեսակ նախագծեր և գործողություններ: Նման ծրագրերից է վարկի հաստատումից մինչև տրամադրումը իրականացվող գործընթացների պարզեցման և օպտիմալացման նախագիծը, որը հնարավորություն կտա ավելի արագ իրականացնել վարկավորման գործառույթը: Բարելավվել են նաև թվային հարթակներով վարկերի ու վարկային գծերի դիմելու համար և վարկ ստանալու հնարավորությունները, ինչպես նաև արդեն իսկ ներդրված լուծումները, վարկավորման գործընթացն ու տևողությունը:

Բանկը շարունակելու է ներքին տարատեսակ ռեսուրսատար գործընթացների ռոբոտացումը և ավտոմատացումը՝ միտված բանկի ներքին գործընթացների արդյունավետության բարձրացմանն և ծախսերի կրճատմանը: Արդյունավետության բարձրացման նպատակով շարունակվելու են հեռախոսային կենտրոնում զանգերին ավտոմատացված կերպով պատասխանելու հնարավորության իրականացման աշխատանքները:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- Բանկի Խորհուրդը, որը հավատարիմ է բանկի երկարաժամկետ հաջողությանը, բաժնետերերի կայուն արժեքներին, ինչպես նաև բաց է քննարկումների մշակույթին, կազմված է բարձր որակավորում և տնտեսության տարբեր ոլորտներում փորձ ունեցող տարբեր անդամներից:

- 2023թ.-ի ընթացքում գումարվել են Խորհրդի ութ նիստեր և երեք հատուկ սեսիաներ: Խորհրդին պարբերաբար թարմացումներ են տրամադրվում Հանձնաժողովների նախագահների, ինչպես նաև Խորհրդի նախագահի, բանկի Գլխավոր գործադիր տնօրենի, Գլխավոր գործադիր տնօրենների տեղակալների, Գլխավոր հաշվապահի, Ներքին աուդիտի ղեկավարի, Ռիսկերի կառավարման և Համապատասխանության ղեկավարի կողմից:

- Բանկը երաշխավորում է, որ Գլխավոր գործադիր տնօրենը և Կորպորատիվ քարտուղարը հետևողականորեն մասնակցեն Խորհրդի նիստերին՝ տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն և աջակցություն: Բացի այդ, այլ ավագ ղեկավարները ևս, ըստ անհրաժեշտության և Խորհրդի պահանջով, կարող են մասնակցել Խորհրդի նիստերին հատուկ օրակարգային հարցերի համար: Այս պրակտիկան ապահովում է, որ տարբեր հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս Խորհրդին հասանելի լինի համապատասխան փորձառությունը և տեղեկատվությունը:

- Բանկն ունի օրակարգի ձևավորման և հարցերի էսկալացիայի համապարփակ և ընթացիկ գործընթաց, որն ապահովում է, որ Խորհուրդը ստանա ժամանակին և կիրառելի տեղեկատվություն համապատասխան ձևաչափով՝ որոշումների կայացումը հեշտացնելու համար: Այս գործընթացը վերահսկվում է Խորհրդի նախագահի կողմից՝ Գլխավոր գործադիր տնօրենի և Կորպորատիվ քարտուղարի աջակցությամբ: Այն ապահովում է, որ համապատասխան ժամանակ հատկացվի ռազմավարական քննարկումների և կարևոր բիզնես հարցերի համար:

- Ե՛վ Խորհրդի նախագահը, և՛ Հանձնաժողովների նախագահները հանձնառու են Խորհրդի և Հանձնաժողովների նիստերն այնպես կազմակերպելու համար, որ խրախուսվեն բաց երկխոսությունները, բանավեճերը և կառուցողական մարտահրավերները: Խնդիրների էսկալացիայի և օրակարգերի սահմանման գործընթացը պարբերաբար գնահատվում է, և անհրաժեշտության դեպքում կատարվում են ճշգրտումներ՝ դրանց արդյունավետությունն ապահովելու համար:

- Խորհրդի բոլոր անդամները պարբերաբար թարմացումներ են ստանում ղեկավարությունից՝ ընթացիկ խնդիրների և զարգացումների համատեքստ ապահովելու համար: Բացի այդ, Խորհրդի նախագահն առանձին հանդիպումներ է անցկացնում Խորհրդի անդամների հետ առանց գործադիր ղեկավարության ներկայության՝ անկեղծ քննարկումներին և հեռանկարների փոխանակմանը նպաստելու նպատակով:

- Խորհուրդն ունի 3 հանձնաժողով, որոնք ստեղծվել են 2022թ.-ի նոյեմբերին.
  - Աուդիտի հանձնաժողով
  - Ռիսկերի կառավարման հանձնաժողով
  - Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողով

ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ռաֆայել Սարգսյան

Խորհրդի նախագահ
Խորհրդի կազմում նշանակվել է 2022թ. հունվարին

Հմտությունները և փորձը.

Ռաֆայել Սարգսյանը բանկային ոլորտում փորձառու իրավաբան է՝ Ակբա բանկում առաջնորդության նշանակալի փորձառությամբ: Ռաֆայել Սարգսյանն Ակբա բանկի Իրավաբանական վարչության նախկին ղեկավարն է, որտեղ նա պատասխանատու էր Խմբի իրավական սպասարկման և կառավարման, ինչպես նաև խնդրահարույց վարկերի հավաքագրման գործընթացի համար: Ռաֆայելը խորհրդի նախագահն է 2022թ.-ի հունվարից:

Այլ պաշտոններ.

- Բանկային իրավունքի դասախոս Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետում:

Բրունո Շարիե

Խորհրդի ավագ անկախ անդամ
Խորհրդի կազմում նշանակվել է 2019թ. հունիսին

Հմտությունները և փորձը.

Բրունո Շարիեն լայն գիտելիքներ ունի ֆինանսական ծառայությունների, տեխնոլոգիաների և կորպորատիվ ռազմավարության ոլորտում՝ ֆրանսիական Կրեդիտ Ագրիկոլ խմբում ավելի քան 40 տարվա փորձառությամբ: Այդ ընթացքում վերջինս զբաղեցրել է տարբեր պաշտոններ Կրեդիտ Ագրիկոլ խմբի միջազգային դուստր ընկերություններում, թե գործադիր ղեկավարությունում, և թե որպես խորհրդի նախագահ: Բրունո Շարիեն ավելի վաղ զբաղեցրել է Հունաստանում Էմպորիկի բանկի գործադիր տնօրենի տեղակալի, այնուհետև՝ Կրեդիտ Ագրիկոլ Սերբիայի և Կրեդիտ Ագրիկոլ Լիզինգ Սերբիայի գործադիր խորհրդի նախագահի պաշտոնները:

ԿԼԱՈՒՍ ԳՐԵՍԵՆԲԱՈՒԵՐ

Խորհրդի անկախ անդամ
Խորհրդի կազմում նշանակվել է 2022թ. հունիսին

Հմտությունները և փորձը.

Կլաուս Գրեսենբաուերը փորձառու աուդիտոր է և ունի բացառիկ միջազգային փորձ Եվրոպայում և ԱՄՆ-ում: Կլաուսը Եվրոպական կենտրոնական բանկում 20 տարի շարունակ զբաղեցրել է տարբեր պաշտոններ, այդ թվում՝ Պլանավորման և վերահսկողության տնօրինության տնօրենի, ներքին աուդիտի ղեկավարի, ինչպես նաև Եվրոսիստեմի (Eurosystem), Կենտրոնական Բանկերի Եվրոպական Համակարգի (ESCB) և Միասնական Վերահսկողական Մեխանիզմ (SSM) Աուդիտի հանձնաժողովի նախագահի պաշտոնները:

Այլ պաշտոններ.

- GRC aktuell կայուն կորպորատիվ կառավարման մասնագիտացված ամսագրի խմբագրական խորհրդի անդամ,
- ՏՀՉԿ Ներքին աուդիտի և Համապատասխանության ֆորումների անդամ,
- Կառավարման զարգացման միջազգային ինստիտուտի (IMD) Համաշխարհային մրցունակության զեկույցի մշակման մասնակից,
- Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայի (IACA) դասախոս և Եվրոպական կորպորատիվ կառավարման ինստիտուտի (ECGI) անդամ:

ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Աշոտ Կարապետյան

Խորհրդի անկախ անդամ
Խորհրդի կազմում նշանակվել է 2022թ. հունիսին

Հմտությունները և փորձը.

Աշոտ Կարապետյանը նշանակալի փորձ ունի կարգավորող և ֆինանսական ոլորտներում և խորը գիտելիքներ ռիսկերի կառավարման, մակրոտնտեսական և կարգավորման միջավայրի մասին: Աշոտ Կարապետյանը 2008թ.-ից բնակվում է Կանադայում և աշխատում Կանադայի հիփոթեքային և բնակարանային կորպորացիայում՝ սկզբում որպես շուկայի վերլուծաբան/տնտեսագետ, այնուհետև՝ որպես ավագ վերլուծաբան, արժեթղթավորման քաղաքականության, կապիտալի շուկաների, այնուհետև՝ որպես Արժեթղթավորման ռիսկերի կառավարման, ռազմավարության և պրոդուկտների ավագ մասնագետ:

Այլ պաշտոններ.

- Կանադայի հիփոթեքային և բնակարանային կորպորացիայի արժեթղթավորման ռիսկերի կառավարման, ռազմավարության և պրոդուկտների ավագ մասնագետ

Հենրիկ Քոչինյան

Խորհրդի անդամ
Խորհրդի կազմում նշանակվել է 2010թ. մայիսին

Հմտությունները և փորձը.

Հենրիկ Քոչինյանը հարուստ փորձ ունի պետական կառավարման ոլորտում՝ ելնելով իր ավելի քան 40 տարվա աշխատանքային փորձից, զբաղեցնելով բազմաթիվ առանցքային պաշտոններ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում, ներառյալ Հայաստանի տրանսպորտի և կապի նախարար, Լոռու մարզպետ, Պետական եկամուտների կոմիտեի հարկային տեսչության պետ պաշտոնները:

Այլ պաշտոններ.

- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի դասախոս

Արամ Բաբայան

Խորհրդի անդամ
Խորհրդի կազմում նշանակվել է 2022թ. հունիսին

Հմտությունները և փորձը.

Արամ Բաբայանն ավելի քան 14 տարվա աշխատանքային փորձ ունի՝ աշխատելով Գերմանական միջազգային համագործակցությունում (GIZ)՝ տարբեր ծրագրերում զբաղեցնելով փորձագետի, ծրագրերի համակարգողի, ղեկավարի տեղակալի և ղեկավարի պաշտոնները:

Այլ պաշտոններ.

- Գերմանական միջազգային համագործակցության (GIZ) ծրագրի թիմի ղեկավար

ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հարություն Փախչանյան

Խորհրդի անդամ
Խորհրդի կազմում նշանակվել է 2022թ. հունիսին

Հմտությունները և փորձը.

Հարություն Փախչանյանը փորձառու բիզնես առաջնորդ է: 2015 թ.-ի ի վեր Հարությունն «ԱՐՄԲԵՐՐԻ» ընկերության տնօրենն է:

Այլ պաշտոններ.

- «Արմբերրի» ընկերություն գլխավոր տնօրեն

Վարդան Ուռուտյան

Խորհրդի անդամ
Խորհրդի կազմում նշանակվել է 2022թ. հունիսին

Հմտությունները և փորձը.

Վարդան Ուռուտյանը նորովի փորձառություն է բերել ագրոբիզնեսի, թվային գյուղատնտեսության և ագրոթեք ոլորտի, ֆինանսական ծառայությունների և կորպորատիվ ֆինանսների ոլորտներում՝ տարբեր կրթական կազմակերպություններում իր առաջնորդության փորձի շնորհիվ: Նա նախկինում աշխատել է որպես Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի (ICARE) տնօրեն: 2018թ.-ի դեկտեմբերից մինչև 2023թ.-ի դեկտեմբերը Վարդան Ուռուտյանը զբաղեցրել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորի պաշտոնը:

Այլ պաշտոններ.

- Agri Camp AgroTwin թիմի ղեկավար, ICARE
- Տեխասի A&M համալսարանի Գյուղատնտեսական էկոնոմիկայի դեպարտամենտի հրավիրյալ պրոֆեսոր, ԱՄՆ
- ՀԱԱՀ Ճշգրիտ գյուղատնտեսության կենտրոնի խորհրդատու, Ագրոբիզնեսի դեպարտամենտի դասախոս
- Մի շարք միջազգային, ագրոբիզնեսի կառավարման և գյուղատնտեսական էկոնոմիկայի հեղինակավոր մասնագիտական ասոցիացիաների անդամ (IFAMA, AAEA, EAAE, ICA RC, IAAE)

Արմեն Մկրտչյան

Խորհրդի անդամ
Խորհրդի կազմում նշանակվել է 2020թ. մայիսին

Հմտությունները և փորձը.

Արմեն Մկրտչյանը զգալի փորձառություն ունի հանրային կառավարման բնագավառում: 2002թ.-ից մինչ օրս նա հանդիսանում է Սյունիքի մարզի Քարահունջի միջնակարգ դպրոցի տնօրենը, 2016թ.-ից մինչ օրս Գորիսի ավագանու անդամ է: Արմեն Մկրտչյանը հանդիսանում է «Սյունիքի Գյուղացիական Փոխօգնության Մարզային Միավորում» հասարակական կազմակերպության խորհրդի նախագահը:

Այլ պաշտոններ.

- «Սյունիքի Գյուղացիական Փոխօգնության Մարզային Միավորում» հասարակական կազմակերպության խորհրդի նախագահ
- Քարահունջի միջնակարգ դպրոցի տնօրեն, Սյունիքի մարզ
- Գորիսի ավագանու անդամ, Սյունիքի մարզ

ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հրաչ Սարգսյան

Խորհրդի անդամ
Խորհրդի կազմում նշանակվել է 2020թ. մայիսին

Հմտությունները և փորձը.

Հրաչ Սարգսյանը փորձառու գյուղատնտես է և հարուստ գիտելիքներ ունի գյուղատնտեսության բնագավառում: 2020թ.-ից Հրաչ Սարգսյանը հանդիսանում է «Գեղարքունիքի Գյուղացիական Փոխօգնության Մարզային Միավորում» հասարակական կազմակերպության խորհրդի նախագահը

Այլ պաշտոններ.

- «Գեղարքունիքի Գյուղացիական Փոխօգնության Մարզային Միավորում» հասարակական կազմակերպության խորհրդի նախագահ
- Չկալովկայի միջնակարգ դպրոցի դասատու, Գեղարքունիքի մարզ

Նարեկ Անտոնյան

Կորպորատիվ քարտուղար
Նշանակվել է 2019թ. փետրվարին

Հմտությունները և փորձը.

Նարեկ Անտոնյանը որակավորված իրավաբան է՝ ֆինանսաբանկային ոլորտում կառավարման և իրավական սպասարկման նշանակալի փորձով: Նա Հայաստանի փաստաբանների պալատի անդամ է, դասավանդում է Հայաստանում Ֆրանսիական Համալսարանում և միաժանակ սովորում է Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի Որակավորված Կառավարման Ինստիտուտում (CGIUK&I):

Նարեկ Անտոնյանը միացել է Ակբա բանկին 2014թ.-ին, այժմ Կորպորատիվ իրավական բաժնի ղեկավարն է և բանկի կորպորատիվ քարտուղարը:

Տարվա ընթացքում Խորհրդի կազմում կատարված փոփոխությունները

Բանկի բաժնետերերի 2023թ.-ի մայիսի 25-ի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ Խորհրդի անդամներ Արմեն Մկրտչյանը և Հրաչ Սարգսյանը վերանշանակվել են որպես բանկի Խորհրդի անդամներ և նրանց լիազորությունները երկարաձգվել են մեկ տարի ժամկետով՝ մինչև 2024 թ.-ին կայանալիք բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

Խորհրդին կից հանձնաժողովներին անդամակցություն

- Խորհրդի նախագահ
- Աուդիտի հանձնաժողով
- Ռիսկերի կառավարման հանձնաժողով
- Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողով

ԲԱՆԿԻ ԱՎԱԳ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ավագ ղեկավարությունը, որը ներառում է բանկի Գլխավոր գործադիր տնօրենին և տեղակալներին, պատասխանատու է բիզնեսի ամենօրյա կառավարման և ռազմավարության իրականացման համար:

ՀԱԿՈԲ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

Հակոբ Անդրեասյանը միացել է Ակբա բանկին 1996թ.-ին՝ դառնալով բանկի ստեղծման և զարգացման պատասխանատուներից մեկը:

Ծուրջ 18 տարի Հակոբ Անդրեասյանը զբաղեցրել է Ակբա բանկի գործադիր տնօրենի տեղակալ-վարկային տնօրենի պաշտոնը:

Հակոբ Անդրեասյանը 2014թ.-ի ապրիլին նշանակվել է Ակբա բանկի Գլխավոր գործադիր տնօրեն: 2015թ.-ի սեպտեմբերից հանդիսանում է Գյուղատնտեսական Բանկերի Միջազգային Կոնֆեդերացիայի (CICA) գործադիր կոմիտեի անդամ:

Նա նաև Ակբա Լիզինգի, Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթի, Հայկական Ալիանս Ֆրանսեզի խորհրդի նախագահն է, խորհրդի անդամ է մի շարք հայ-ֆրանսիական կազմակերպություններում:

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԾՈՎ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

Նիկոլայ Հովհաննիսյանը մեծ փորձ ունի բանկային ոլորտում և Ակբա բանկի ստեղծման և ձևավորման ընթացքում եղել է կառավարման թիմի կազմում: Նիկոլայ Հովհաննիսյանը միացել է Ակբա թիմին 1996թ.-ին, եղել է Արմավիր մասնաճյուղի կառավարիչը, որից հետո 2002թ.-ին նշանակվել է որպես Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ:

2015թ.-ի հուլիսին Նիկոլայ Հովհաննիսյանը նշանակվել է գործառնական կառավարման գծով Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ: Նա նաև Ակբա Լիզինգի խորհրդի անդամ է ընկերության հիմնադրման օրվանից մինչ օրս:

ՍՏՅՈՊԱ ՋԱՔԻՆՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳԾՈՎ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

Ստյոպա Ջաքինյանը նշանակվել է ֆինանսական գծով Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ 2015թ.-ի հուլիսին: 2000թ.-ի հուլիսին Ակբա բանկին միանալուց ի վեր նրա զբաղեցրած պաշտոնները ներառում են մասնաճյուղի վարկային գործակալի, Ստրատեգիական պլանավորման, Վերլուծությունների և Ակտիվների ու պասիվների կառավարման բաժնի պետի, Ակտիվների ու պասիվների կառավարման և դիլինգի վարչության պետի, Միջազգային հարաբերությունների և ակտիվների ու պասիվների կառավարման վարչության պետի պաշտոնները: Ակբա Լիզինգի խորհրդի անդամ է:

2023թ.-ին Ստյոպա Ջաքինյանը ստացել է Լոնդոնի Բիզնես Դպրոցի (LBS) գործարար կառավարման գործադիր մագիստրոսի աստիճան (EMBA)

ԲԱՆԿԻ ԱՎԱԳ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՌԵԳԻՈՆԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԾՈՎ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

Նորիկ Նազարյանը Ակբա բանկում է 1998թ.-ից և 2014թ.-ին նշանակվել է Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ՝ ղեկավարելով բանկի գործունեության տարբեր ոլորտները: Մինչ այդ նա զգալի փորձ ուներ վաճառքների, մասնաճյուղերի և մասնաճյուղերի ցանցի կառավարման բնագավառներում: 2018թ.-ից սկսած նա Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալն է՝ վաճառքի խթանման և ռեգիոնալ կառավարման գծով:

ԱՐՍԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԲԻԶՆԵՍ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԳԾՈՎ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

Արսեն Մելքոնյանն Ակբա բանկին է միացել 2000թ.-ին: Բանկում զբաղեցրել է Առևտրային վարկերի բաժնի պետի, տարբեր մասնաճյուղերի կառավարչների, Վարկային տնօրենի տեղակալի ու Մարքեթինգի և զարգացման վարչության պետի պաշտոնները:
Արսեն Մելքոնյանը 2018թ.-ից առ այսօր զբաղեցնում է Ակբա բանկի Բիզնես գործառույթների համակարգման գծով Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը: Այժմ նա Օքսֆորդի համալսարանում ստանում է գործարար կառավարման գործադիր մագիստրոսի աստիճան (EMBA):

ՏԻԳՐԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՊԼԱՏՖՈՐՄՆԵՐԻ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԾՈՎ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

Տիգրան Սիմոնյանը միացել է Ակբա բանկին 2009թ.-ին, իսկ 2020թ.-ին նշանակվել է Պլատֆորմի և տեխնոլոգիաների զարգացման գծով Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ: Նախկինում նա զբաղեցրել է SS զարգացման վարչության, Ռիսկերի կառավարման վարչության և Տեխնիկական առաջադրանքների մշակման բաժնի ղեկավարի պաշտոնները: Հանդիսանում է ԵՍ ԵՄ ընկերության խորհրդի նախագահը:

ԲԱՆԿԻ ԱՎԱԳ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ

Արմեն Հակոբյանը Ակբա բանկում է 1998 թ.-ից ի վեր, իսկ 2015 թվականին նշանակվել է որպես Գլխավոր հաշվապահ: Նախկինում նա եղել է բանկի Գլխավոր հաշվապահի տեղակալը, ինչպես նաև Ակբա Լիզինգ և Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ ընկերությունների Գլխավոր հաշվապահը: Նա նաև դասավանդում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, տնտեսագիտության դոկտոր է, ունի պրոֆեսորի գիտական կոչում:

Արմեն Հակոբյանը հանդիսանում է ՀՀ աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի անդամ և ունի փորձագետ հաշվապահի որակավորում:

ԱՐՄԵՆ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ

Արմեն Վարժապետյանը միացել է Ակբա բանկին 2003թ.-ին, իսկ 2004թ.-ին նշանակվել է ներքին աուդիտի ղեկավար: Մինչ այդ նա աշխատել է «Հայներարտբանկ» ՓԲԸ-ում և «Միավորված Բանկ» ԲԲԸ-ում: Նախկինում Արմեն Վարժապետյանը աշխատել է որպես վերահսկող ՀՀ կենտրոնական բանկում:

ԱՐՄԵՆ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Արմեն Մելքումյանը Ակբա բանկում է 1997թ.-ից և սկսած 2002թ.-ից ղեկավարել է Բանկի ՏՏ զարգացման վարչությունը: 2020թ.-ի ապրիլին Արմեն Մելքումյանը նշանակվել է Ռիսկերի կառավարման և համապատասխանության վարչության պետ:

ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԱՎԱԳ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խորհրդի դերը, Խորհրդի անդամների պարտականությունները.

Ի թիվս այլ հարցերի՝ Խորհուրդը պատասխանատու է.

- բանկի երկարաժամկետ հաջողությանը նպաստելու և բաժնետերերին կայուն արժեք ապահովելու համար,
- բանկի ռազմավարությունը ու նպատակները մշակելու և հաստատելու, ինչպես նաև բանկի նպատակների, ռազմավարության և արժեքների համապատասխանեցումը ցանկալի մշակույթին վերահսկելու համար,
- բանկի ռիսկերի ախորժակը սահմանելու և բանկի ռիսկի պրոֆիլը մշտադիտարկելու համար,
- ռազմավարական նպատակներին հասնելու համար կապիտալի և ֆինանսական ռեսուրսների պլանները, ներառյալ՝ խոշոր գործարքները, հաստատելու և մշտադիտարկելու համար,
- Խորհրդի անդամի թեկնածուների առաջադրման և փոխհատուցման հաստատման համար,
- բանկի ընդհանուր կորպորատիվ կառավարման մեխանիզմները դիտարկելու և անհրաժեշտության դեպքում վերանայելու համար,
- ղեկավարության իրավասություններից դուրս և իր իրավասության սահմաններում գտնվող այլ որոշումների կայացման համար:

Խորհրդի դերը.

Խորհուրդը.

- հաստատում է բանկի նպատակները, արժեքներն ու ռազմավարությունը և համոզվում է, որ դրանք և իր մշակույթը համահունչ են,
- գործում է ազնվությամբ, առաջնորդում է օրինակով և խթանում է ցանկալի մշակույթը,
- ապահովում է, որ անհրաժեշտ ռեսուրսներն առկա լինեն բանկի նպատակներին հասնելու և դրանց արդյունքները գնահատելու համար,
- ստեղծում է ողջամիտ և արդյունավետ վերահսկողության շրջանակ, որը հնարավորություն է տալիս գնահատել և կառավարել ռիսկերը,
- ապահովում և խրախուսում է բաժնետերերի և այլ շահառուների հետ արդյունավետ ներգրավվածություն,
- ապահովում է, որ մարդկային ռեսուրսների քաղաքականությունն ու գործելակերպը համահունչ լինեն բանկի արժեքներին և աջակցում է նրա երկարաժամկետ կայուն հաջողությանը:

Խորհրդի նախագահի դերը

Խորհրդի նախագահն ընդհանուր պատասխանատվություն է կրում Խորհրդի առաջնորդության և գործունեության բոլոր ասպեկտներում դրա արդյունավետությունն ապահովելու համար:

Խորհրդի նախագահի դերը ներառում է.

- Խորհրդի օրակարգի սահմանումը, որը հիմնականում կենտրոնացած է ռազմավարության, կատարողականի, արժեքների ստեղծման, մշակույթի, շահառուների ներգրավվածության և հաշվետվողականության վրա, ինչպես նաև երաշխավորելը, որ այդ ոլորտներին առնչվող հարցերը վերապահված լինեն Խորհրդի որոշմանը,
- նիստերի դահլիճում կորպորատիվ մշակույթի ձևավորումը,
- Խորհրդի բոլոր անդամներին խրախուսելը ներգրավվել Խորհրդի և հանձնաժողովների նիստերում՝ հենվելով նրանց հմտությունների, փորձի և գիտելիքների վրա,
- Խորհրդի անդամների և ղեկավարության միջև վստահության, փոխադարձ հարգանքի և բաց հաղորդակցության վրա հիմնված

հարաբերությունների խթանումը՝ ինչպես քննարկումների դահլիճում, այնպես էլ դրա սահմաններից դուրս,

- ավագ ղեկավարության հետ արդյունավետ աշխատանքային հարաբերությունների զարգացումը, աջակցության և խորհրդատվության տրամադրումը՝ միաժամանակ հարգելով գործադիրի պատասխանատվության շրջանակները,
- անհրաժեշտության դեպքում Խորհրդի նոր անդամներին ուղղորդումը և ուսուցման կազմակերպումը,
- Խորհրդի տարեկան գնահատման առաջնորդումը՝ անհրաժեշտության դեպքում ավագ անկախ անդամի աջակցությամբ, և արդյունքների վրա աշխատելը,
- արտաքին օժանդակությամբ Խորհրդի կանոնավոր գնահատումները հաշվի առնելը։

Խորհրդի նախագահը երաշխավորում է, որ.

- համապատասխան ժամանակ է հատկացված օրակարգի բոլոր կետերի, մասնավորապես ռազմավարական հարցերի քննարկման համար, և որ այդպիսի քննարկումները չեն կրճատվում,
- տեղեկատվության հոսքը ժամանակին է, ճշգրիտ, որակյալ և հստակ,
- Խորհուրդը որոշի էական ռիսկերի բնույթը և չափը, որը բանկը պատրաստ է ընդունել իր ռազմավարության իրականացման ժամանակ,
- Խորհրդի բոլոր անդամները տեղյակ են և կարող են կատարել իրենց պարտականությունները,
- Խորհուրդը լսում է բաժնետերերի, աշխատակիցների, հաճախորդների և այլ հիմնական շահառուների կարծիքները,
- Խորհրդի բոլոր անդամները ստանում են խորհրդին միանալու ամբողջական, պաշտոնական և հարմարեցված ինդուկցիա,
- Խորհրդի բոլոր անդամները շարունակաբար թարմացնում են իրենց հմտությունները, գիտելիքները և բանկին ճանաչելը՝ իրենց դերը ինչպես խորհրդում, այնպես էլ հանձնաժողովներում կատարելու համար։

Խորհրդի անկախ անդամների դերը.

Խորհրդի անկախ անդամների դերն է աջակցել ռազմավարության մշակմանը, վերահսկել ռիսկերը, ապահովել ավագ ղեկավարության հաշվետվականությունը, ինչպես նաև ապահովել, որ գործադիր մարմինը պատշաճ կերպով կատարի իր պարտականությունները՝ միաժամանակ ստեղծելով ճիշտ մշակույթ, որը խթանում է կառուցողական մարտահրավերները։ Խորհրդի անկախ անդամները նաև վերանայում են ավագ ղեկավարության կատարողականը՝ համաձայնեցված նպատակներին և թիրախներին հասնելու համար։

Հայաստանի օրենսդրությունը սահմանում է կորպորատիվ կառուցվածքի երկաստիճան համակարգ։ Երկաստիճան համակարգում (կառավարման դուալիստական մոդել) առկա է տարանջատում գործադիր ղեկավարության և վերահսկիչ մարմինների միջև։ Ղեկավարությունը պատասխանատու է ընկերության ամենօրյա կառավարման համար։ Առանձին վերահսկիչ խորհուրդը վերահսկում է գործադիր ղեկավարությանը։ Խորհրդի նախագահի և Գլխավոր գործադիր տնօրենի դերերն առանձին են։ Խորհրդի նախագահի կողմից Խորհրդի առաջնորդման և Գլխավոր գործադիր տնօրենի կողմից Ակբա բանկի բիզնեսի ամենօրյա կառավարման գործադիր պատասխանատվության միջև կա պարտականությունների հստակ բաշխում։

Խորհրդի անդամներից երեքն անկախ են։ 2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խորհուրդը բաղկացած է Խորհրդի նախագահից, յոթ ոչ անկախ անդամներից (ներառյալ՝ Խորհրդի նախագահը) և երեք անկախ անդամներից։ Խորհրդի երկու ոչ անկախ անդամները վերընտրվել են 2023թ.-ի մայիսի 25-ի տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ ևս մեկ տարի ժամկետով։

Խորհրդի և ավագ ղեկավարության հարաբերությունները

Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատու է բանկի բիզնես ռազմավարության ամենօրյա կառավարման և իրականացման համար։ Գործադիր տնօրենին բանկի կառավարման հարցում աջակցում են բանկի գործադիր կոմիտեի և այլ հանձնաժողովների առաջարկություններն ու խորհուրդները, որտեղ ներառված են համապատասխան ոլորտների Գործադիր տնօրենների տեղակալներ և միջին օղակի ղեկավարներ։

Խորհրդի անդամներին և ավագ ղեկավարությանը խրախուսվում է կապ հաստատել կառավարման բոլոր օղակների հետ և լիարժեք օգտագործել ողջ վերաբերելի տեղեկատվությունը: Խորհրդի նիստերի մասնակցելու կամ այլ նպատակներով բանկ այցելելիս Խորհրդի անդամներին խրախուսվում է այցելել բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ: Խորհրդի անդամները տարվա ընթացքում ոչ պաշտոնական գործնական, ներածական և թեմատիկ հանդիպումներ են անցկացրել տարբեր մակարդակների ղեկավարների հետ:

Գործադիր ղեկավարությունը

Ակբա բանկի գործադիր ղեկավարությունը հենվում է Բանկի գործառնական ռիթմի վրա, որն օգնում է հեշտացնել ավագ ղեկավարության և Խորհրդի կողմից գործընթացների սկզբից մինչև վերջ կառավարումը և սահմանում է Խորհրդի և գործադիր մարմինների ժամանակացույցը:

Բանկի գործառնական ռիթմը հիմնված է հետևյալ երեք բաղադրիչների վրա.

- Գործադիր կոմիտեի նիստեր, որոնք գումարվում են շաբաթական պարբերականությամբ, որոնց նպատակն է քննարկել ընթացիկ և ի հայտ եկած խնդիրները,
- Գործադիր կոմիտեի նիստեր, որոնք գումարվում են ամսական պարբերականությամբ, որոնց նպատակն է ուսումնասիրել բանկի կատարողականը: Կատարողականի այս ուսումնասիրությունները լրացվում են բանկի այլ գործադիր կոմիտեներում առանձին բիզնես ուղղությունների կատարողականների ուսումնասիրություններով,
- Խորհրդի յուրաքանչյուր նիստից առաջ և հետո Գործադիր կոմիտեն քննարկում է խորհրդի նիստի հետ կապված հարցեր:

Բացի այդ, Գլխավոր գործադիր տնօրենը տարվա ընթացքում ինքնուրույն հանդիպում է տարբեր ստորաբաժանումների հետ՝ քննարկելու բանկի գործունեության առանձնահատուկ ոլորտները:

Գլխավոր գործադիր տնօրենի դերը

Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատու է.

- ռազմավարությունը Խորհրդին առաջարկելու և համաձայնեցված կարգով ռազմավարությունը իրականացնելու համար,
- բանկի գործունեությունը կառավարելու համար՝ նպատակ ունենալով հասնել խորհրդի կողմից համաձայնեցված ռազմավարական նպատակներին և թիրախներին,
- աշխատակիցների մոտ օրինակ ծառայելու և Խորհրդի ակնկալիքները նրանց փոխանցելու համար՝ կապված բանկի մշակույթի, արժեքների և վարքագծի հետ,
- Խորհրդի նախագահին աջակցելու համար՝ երաշխավորելու համար, որ կառավարման համապատասխան չափանիշները առկա են բանկի բոլոր հատվածներում,
- երաշխավորելու համար, որ անհրաժեշտության դեպքում Խորհուրդը տեղեկացված է աշխատողների տեսակետների մասին բիզնեսին առնչվող հարցերի վերաբերյալ,
- ապահովելու համար, որ Խորհուրդը տեղեկացված լինի գործադիր ղեկավարների տեսակետների մասին բիզնես հարցերի վերաբերյալ, որպեսզի բարելավվի Խորհրդի նիստերի ժամանակ քննարկումների ստանդարտը և, նախքան հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը, հավասարակշռված կերպով բացատրվի գործադիր թիմում առկա տեսակետների ցանկացած տարաձայնությունները:

ԴԵՐԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԻՍՏԵՐԻՆ

Հետևյալ աղյուսակը ամփոփում է Խորհրդի և գործադիր մարմնի համապատասխան դերերը, պարտականությունները և մասնակցությունը Խորհրդի նիստերին 2023թ.-ին.

Դերը	Մասնակցությունը 2023թ.-ին	Պարտականությունները
Խորհրդի նախագահ՝ Ռաֆայել Սարգսյան	**8/8**	› Ապահովում է Խորհրդի արդյունավետ առաջնորդումը և խթանում կորպորատիվ կառավարման պրակտիկայի ամենաբարձր չափանիշները։ › Առաջնորդում է Խորհրդին ուժեղ ռազմավարական վերահսկողություն ապահովելու և Խորհրդի օրակարգը, մշակույթն ու արժեքները սահմանելու գործերում։ › Առաջնորդում է Խորհրդին՝ ղեկավարության մտքերին ու առաջարկներին մարտահրավերներ նետելու հարցում, և խթանում է բաց և կառուցողական բանավեճեր Խորհրդի անդամների միջև։ › Պահպանում է ներքին և արտաքին հարաբերությունները հիմնական շահառուների հետ և Խորհրդին հայտնում ներդրողների տեսակետները։ › Կազմակերպում է Խորհրդի, նրա հանձնաժողովների և Խորհրդի առանձին անդամների գործունեության պարբերական մոնիթորինգ և գնահատում, այդ թվում՝ արտաքին։ › Առաջնորդում է Խորհրդի և նրան կից հանձնաժողովների իրավահաջորդության պլանավորումը՝ ապահովելով, որ նշանակումներն արտացոլեն տարբեր մշակույթներ, հմտություններ և փորձառություններ։ › Խրախուսում է, որպեսզի Խորհրդի բոլոր անդամները ներգրավվեն Խորհրդի և հանձնաժողովների նիստերին։
Գլխավոր գործադիր տնօրեն՝ Հակոբ Անդրեասյան	**8/8**	› Առաջնորդում և ուղղորդում է բանկի բիզնես ռազմավարության իրականացումը՝ ներդնելով կազմակերպության մշակույթն ու արժեքները։ › Խորհրդի կողմից իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում առաջնորդում է բանկի գործադիր կոմիտեն՝ պատասխանատվություն կրելով բանկի ամենօրյա գործունեության համար։ › Պահպանում է հարաբերություններ հիմնական ներքին և արտաքին շահառուների հետ, այդ թվում՝ Խորհրդի նախագահի, Խորհրդի, հաճախորդների, վերահսկիչի, պետական մարմինների և ներդրողների հետ։ › Պատասխանատու և հաշվետու է բանկի և նրա աշխատակիցների կողմից կիրառելի օրենքներին, օրենսգրքերին, կանոններին և կանոնակարգերին, շուկայական լավ փորձին և Ակբա բանկի սեփական չափանիշներին համապատասխանելու համար։

Դերը	Մասնակցությունը 2023թ.-ին	Պարտականությունները
Գործառնական կառավարման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ՝ Նիկոլայ Հովհաննիսյան	**Ըստ Խորհրդի պահանջի**	▸ Համակարգում է տեխնիկական անվտանգության, լոգիստիկայի, գույքերի կառավարման գործընթացները: ▸ Պատասխանատու և հաշվետու է բանկի կորպորատիվ ոճի ստանդարտների համար, կոորդինացնում և պատասխանատու է խնդրահարույց վարկերի հավաքագրման գործառույթի համար:
Վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ՝ Նորիկ Նազարյան	**Ըստ Խորհրդի պահանջի**	▸ Ղեկավարում է վաճառքի գործառույթը և պատասխանատվություն է կրում բանկի մասնաճյուղերի ցանցի և ռեգիոնալ կառավարման համար, վերահսկում է կատարողականը: ▸ Պատասխանատու և հաշվետու է ապառիկ բիզնեսի և առևտրի ֆինանսավորման համար:
Բիզնես գործառույթների համակարգման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ՝ Արսեն Մելքոնյան	**Ըստ Խորհրդի պահանջի**	▸ Աջակցում է Գլխավոր գործադիր տնօրենին նոր բիզնես պլանների և ռազմավարությունների մշակման և իրականացման գործում: ▸ Պատասխանատու և հաշվետու է նոր բանկային պրոդուկտների և ծառայությունների մշակման և ներդրման համար: ▸ Ղեկավարում է մարքեթինգի գործառույթը, և պատասխանատու է շուկայի վերլուծությունների և հաճախորդների փորձառության համար:
Ֆինանսական գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ՝ Ստյոպա Զաքինյան	**Ըստ Խորհրդի պահանջի**	▸ Աջակցում է Գլխավոր գործադիր տնօրենին բանկի ռազմավարության մշակման և իրականացման գործում, առաջարկում է տարեկան բյուջեն և երկարաժամկետ ռազմավարական ու ֆինանսական ռեսուրսների պլանները: ▸ Ղեկավարում է ֆինանսական գործառույթը և պատասխանատու է արդյունավետ ֆինանսական հաշվետվականության համար, ներառյալ գործընթացների և վերահսկողության արդյունավետությունը ապահովելու համար, ինչպես նաև պատասխանատու է, որ ֆինանսական վերահսկողության շրջանակն ամուր լինի և համապատասխանի իր նպատակին: ▸ Պահպանում է հարաբերությունները հիմնական շահառուների, այդ թվում՝ բաժնետերերի հետ:

Դերը	Մասնակցությունը 2023թ.-ին	Պարտականությունները
Պլատֆորմների և տեխնոլոգիաների զարգացման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ՝ Տիգրան Սիմոնյան	**Ըստ Խորհրդի պահանջի**	• Կառավարում է բանկի տեխնոլոգիական պլանները, ցանցը և տվյալների անվտանգությունը: • Պատասխանատու և հաշվետու է SS և թվային բանկային հարթակների և ծառայությունների մշակման ու ներդրման համար: • Ղեկավարում է բանկի թվային տրանսֆորմացիայի գործընթացը
Բրունո Շարիե	**8/8**	• Մշակում և հաստատում են բանկի ռազմավարությունը: • Մարտահրավեր են նետում և վերահսկում են ավագ ղեկավարության կատարողականը: • Հաստատում են բանկի ռիսկերի ախորժակը, վերանայում են ռիսկի պրոֆիլը և կատարողականը: • Նպաստում են մշակույթի գնահատմանը և մոնիթորինգին: • Պահպանում են ներքին և արտաքին հարաբերություններ բանկի հիմնական շահառուների հետ:
Կլաուս Գրեսենբաուեր	**7/8**	
Աշոտ Կարապետյան	**8/8**	
Արամ Բաբայան	**8/8**	
Հարություն Փախչանյան	**8/8**	
Վարդան Ուռուտյան	**8/8**	
Հենրիկ Քոչինյան	**8/8**	
Արմեն Մկրտչյան	**7/8**	
Հրաչ Սարգսյան	**8/8**	
Կորպորատիվ քարտուղար Նարեկ Անտոնյան	**8/8**	• Խորհրդի մակարդակով պահպանում է կառավարման ուժեղ և հետևողական պրակտիկա: • Աջակցում է Խորհրդի նախագահին՝ ապահովելու Խորհրդի և դրան կից հանձնաժողովների արդյունավետ գործունեությունը, և ավագ ղեկավարության ու Խորհրդի անդամների միջև թափանցիկ հաղորդակցությունը: • Ապահովում է Խորհրդի անդամների հեշտ ներգրավվածությունը և մասնագիտական զարգացումը: • Խորհրդատվություն է տրամադրում և աջակցում է Խորհրդին և ավագ ղեկավարությանը գործընթացների սկզբից մինչև վերջ արդյունավետ կառավարում ապահովելու և որոշումներ կայացնելու հարցերում:

ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄԸ

Խորհուրդը հավաքական պատասխանատու է բանկի երկարաժամկետ, կայուն հաջողությունը խթանելու և գնահատելու, բաժնետերերի համար արժեք ստեղծելու և ավելի լայն հասարակությանը նպաստելու համար: Խորհուրդը սահմանում է բանկի նպատակները, արժեքները և ռազմավարությունը և ձգտում է ապահովել, որ բանկը ինքնատիպ և նորարար լուծումներով նպաստի հասարակության կայուն զարգացմանը: Բանկի դերը, որպես կայուն և ներառական բիզնես, առանցքային է իր նպատակի համար, քանի որ Խորհուրդը վերահսկում է բանկի հավակնությունները՝ իսկապես դեպի նպատակները միտված ձեռնարկություն զարգացնելու հարցում:

Խորհուրդը պատասխանատու է նաև ապահովել, որ բանկի մշակույթը համահունչ լինի իր նպատակներին, արժեքներին և ռազմավարությանը: Խորհուրդը վերջնական պատասխանատվություն է կրում համաձայնեցված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ռեսուրսների առկայության ապահովման համար: 2024թ.-ի փետրվարին Խորհուրդը հավանություն տվեց բանկի գործող ռազմավարությանը, և բանկի ռազմավարության համար առանցքային նշանակություն է տրվում ռիսկերի արդյունավետ կառավարմանը, որին աջակցում է բանկի ռիսկերի կառավարման շրջանակը: Խորհուրդը գիտակցում է, որ բանկի շահառուների հետ ներգրավվելը և նրանց կարիքները բավարարելը կարևոր է բանկի ռազմավարությանը և երկարաժամկետ նպատակներին հասնելու համար:

Խորհրդի հաստատմանը վերապահված հիմնական որոշումներն ու հարցերը, ինչպիսիք են բանկի երկարաժամկետ ռազմավարությունը և առաջնահերթությունները, ամրագրված են բանկի կորպորատիվ կառավարման շրջանակում, որը պարբերաբար վերանայվում է Խորհրդի և նրա Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովի կողմից:

Այս հանձնառությունը Խորհրդին հնարավորություն է տալիս ավելի շատ ժամանակ հատկացնել ռազմավարական և հեռանկարային նախաձեռնություններին: Խորհրդի յուրաքանչյուր հանձնաժողով կազմված է ինչպես Խորհրդի անկախ, այնպես էլ ոչ անկախ անդամներից, իսկ որպես հանձնաժողովների փորձառու նախագահներ են հանդես գալիս անկախ անդամները: Հանձնաժողովները գործում են նույն սկզբունքներով, ինչ Խորհուրդը: Յուրաքանչյուր հանձնաժողովի գործունեության կառուցվածքը նախագծված է խրախուսելու բաց քննարկումներն ու բանավեճերը՝ միաժամանակ բավարար ժամանակ տրամադրելով անդամներին բոլոր առաջարկները մանրակրկիտ վերանայելու համար:

Գործադիր ղեկավարությունը գործում է Կորպորատիվ կառավարման շրջանակում սահմանված չափանիշների շրջանակներում, որն ապահովում է, որ որոշումները կայացվեն սահմանված լիազորությունների մակարդակներում: Այնուամենայնիվ, անհրաժեշտության դեպքում, ցանկացած հարց կարող է բարձրացվել Խորհրդի քննարկմանը, անկախ այն հանգամանքից, թե այն ընկնում է գործադիր մարմնի իրավասությունների ներքո, թե ոչ: Բացի այդ, գործադիր մակարդակում ևս գոյություն ունեն կոմիտեներ, ինչպիսին է օրինակ՝ Գործադիր կոմիտեն, որոնք աջակցում են բանկի Գլխավոր գործադիր տնօրենին՝ իր պարտականությունները կատարելիս:

Շահառուների հետ ներգրավվածությունը 2023թ.-ին

Ակբա բանկի կորպորատիվ կառավարման հիմնական նպատակը կայուն հիմունքներով շահագրգիռ կողմերի շահերի պաշտպանությունն է՝ հանրային շահին համապատասխան: Իր պարտականություններն իրականացնելիս Խորհուրդը պետք է հաշվի առնի ավանդատուների, բաժնետերերի և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի օրինական շահերը: Այն նաև պետք է ապահովի, որ բանկն արդյունավետ հարաբերություններ պահպանի իր վերահսկչի՝ ՀՀ կենտրոնական բանկի հետ:

Որպեսզի բանկը կատարի իր պարտավորությունները բաժնետերերի և այլ շահառուների հանդեպ, Խորհուրդը պետք է ապահովի այդ շահագրգիռ կողմերի արդյունավետ ներգրավվածությունը և խրախուսի նրանց մասնակցությունը: Հաշվի առնելով դա՝ Խորհուրդը ձգտում է աշխատել հիմնական

շահառուների հետ՝ օգնելու նրանց ձայնը լսելի դարձնել Խորհրդի քննարկումներում և հեշտացնել տեղեկացված հիմունքով որոշումների կայացումը:

Խորհրդի անդամները կանոնավոր հանդիպումներ են անցկացրել գործադիր ղեկավարության, առանցքային ղեկավարների և բանկի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների հետ: Բացի այդ, հանդիպումներ են կազմակերպվել բանկի ինչպես նշանակալից, այնպես էլ մինորիտար բաժնետերերի, ինչպես նաև խմբի այլ ընկերությունների ղեկավարության հետ: Տարվա ընթացքում Խորհրդի կամ Խորհրդի նախագահի մասնակցությամբ տեղի են ունեցել հանդիպումներ և քննարկումներ բանկի նշանակալից և այլ բաժնետերերի հետ՝ Խորհրդից նրանց ակնկալիքները հասկանալու, ինչպես նաև կորպորատիվ կառավարման բարեփոխումների առաջընթացը, ֆինանսական արդյունքները, բանկի ռազմավարության թարմացումները, աշխարհաքաղաքական ռիսկերը և մակրոտնտեսական հեռանկարները նրանց ներկայացնելու նպատակներով:

Հարկ է նշել, որ շահառուների հետ համագործակցությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով Խորհուրդն աշխատում է շահառուների ներգրավման իր առաջին ծրագրի վրա: Այն ուղղված կլինի խրախուսել և ապահովել Խորհրդի անդամների ու հիմնական շահառուների միջև բաց երկխոսությունը և երկկողմ քննարկումները, ինչը Խորհրդին կտրամադրի արժեքավոր պատկերացումներ նրանց տեսակետների վերաբերյալ:

Մեր աշխատակիցները

2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ակբա բանկն ուներ ընդհանուր 1,774 աշխատողներ՝ ի համեմատություն 2022թ.-ի տարեվերջին ունեցած 1,634 աշխատողների ցուցանիշի:

Մեր բիզնեսը ներառում է բազմաթիվ համայնքներ: Մենք ձգտում ենք ապահովել բարձր կատարողական միջավայր, որտեղ մեր գործընկերները կարող են իրացնել իրենց ներուժը՝ զարգացնելով իրենց հմտություններն ու կարողությունները՝ միաժամանակ կենտրոնանալով բազմազան և ներառական մշակույթի զարգացման վրա: Մենք կիրառում ենք աշխատակիցների հարցումները՝ առաջընթացը գնահատելու և փոփոխություններ կատարելու համար:

Մենք ցանկանում ենք ապահովել բաց մշակույթ, որտեղ բոլորը կզգան իրենց միմյանց կողմից աջակցված և միավորված, և իրենց ձայնը լսելի կլինի բոլոր մակարդակներում: Այնտեղ, որտեղ մենք կազմակերպչական փոփոխություններ ենք կատարում, մենք նաև աջակցում ենք մեր գործընկերներին, մասնավորապես, եթե դա ազդեցություն է լինում աշխատատեղերի վրա:

Մեր նպատակն է կառուցել դինամիկ, ներառական մշակույթ, որտեղ լավագույնները ձգտում են զարգացնել իրենց հմտություններն ու փորձառությունները, որոնք էլ օգնում են նրանց իրացնել իրենց ներուժը: Սա կանխորոշում է, թե ինչպես ենք մենք զարգացնում մեր մարդկանց և հավաքագրում, նույնականացնում և աճեցնում տաղանդներին: Մենք հանձնառու ենք հետևել այն աշխատանքային օրենսդրությանը և կանոնակարգերին, որի իրավասության ներքո մենք գործում ենք: Մենք նվիրված ենք փոխկապակցված աշխատուժի ստեղծմանը, որտեղ յուրաքանչյուր անհատ իրեն գնահատված և ներառված է զգում:

Մենք հանձնառու ենք ապահովել անվտանգ և առողջ աշխատանքային միջավայր բոլորի համար: Նշված հանձնառությունը պահպանելու համար մենք որդեգրել ենք քաղաքականություններ, պարտադիր ընթացակարգեր, միջադեպերի և տեղեկատվության հաշվետվականության համակարգեր, որոնք արտացոլում են մեր հիմնական արժեքները և համահունչ են միջազգային չափանիշներին: Մեր առողջության և անվտանգության կատարողականը ենթակա է շարունակական մոնիթորինգի և երաշխավորման՝ ապահովելու համար, որ մենք համապատասխանում ենք համապատասխան կարգավորող պահանջներին: Մենք խորապես հավատում ենք բոլոր աշխատակիցներին հավասար հնարավորությունների ապահովմանը: Մեր նպատակն է ապահովել, որ անհատները երկարաժամկետ հեռանկարում կատարեն իրենց դերերը՝ ելնելով մեր շահառուների լավագույն շահերից:

ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ, ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Խորհրդի կազմն օգնում է երաշխավորել, որ ոչ մի անհատ կամ անհատների խումբ ազդեցություն չունենա Խորհրդի կողմից որոշումների կայացման գործընթացի վրա:

Խորհրդի հմտությունների, փորձի և որակավորումների բազմազանությունը թույլ է տալիս Խորհրդին տալ կառուցողական մարտահրավերներ և ռազմավարական ուղղորդում, ինչպես նաև առաջարկել մասնագիտական խորհրդատվություն:

Խորհրդին կից Կառավարման, նշանակումների և վարձատրության հանձնաժողովը վերահսկում է, թե արդյոք կան հարաբերություններ կամ հանգամանքներ, որոնք կարող են ազդել անդամների անկախության վրա:

Նախքան նշանակումը, բոլոր անդամների ուշադրությունը հրավիրվում է Խորհրդի և համապատասխան հանձնաժողովների համար բավարար ժամանակ հատկացնելու պարտավորության վրա և պահանջվում է հատկացնել այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է իրենց պարտականություններն արդյունավետորեն կատարելու համար: Անդամների ժամանակային պարտավորությունները Խորհրդի կողմից քննարկվում են նշանակվելիս և դրանից հետո յուրաքանչյուր տարի, և Խորհուրդը բավարարված է, որ չկան անդամներ, որոնց ժամանակային պարտավորությունները մտահոգիչ կհամարվեն: Անդամները բավարարվում են ֆինանսական տեղեկատվության ամբողջականությամբ և վերանայում են բանկի ռիսկերի սահմանաչափերն ու հսկողությունը:

Խորհրդի անկախ անդամները կառուցողականորեն մարտահրավեր են ներկայացնում գործադիր ղեկավարությանը և օգնում են բանկի ռազմավարության մշակմանն ու սահմանմանը: Նրանք ակտիվորեն մասնակցում են Խորհրդի որոշումների կայացմանը և մանրակրկիտ ուսումնասիրում են ղեկավարության կատարողականը:

Խորհրդի նախագահը, Կորպորատիվ քարտուղարի աջակցությամբ, ապահովում է, որ խորհրդի անդամները ստանան համապատասխան և ժամանակին տեղեկատվություն: Բոլոր անդամներին հասանելի է Կորպորատիվ քարտուղարի խորհրդատվությունը, և բանկն իր հաշվին ապահովում է անկախ պրոֆեսիոնալ խորհրդատուների ծառայություններ՝ խորհրդի անդամներին իրենց դերում աջակցելու համար:

Խորհրդի հանձնաժողովներին տրամադրվում են նաև բավարար ռեսուրսներ՝ իրենց պարտականությունները կատարելու համար:

Խորհրդի կազմը

Խորհրդում հմտությունների, փորձի, անկախության և գիտելիքների հավասարակշռությունը Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովի պատասխանատվությունն է և վերանայվում է յուրաքանչյուր տարի, կամ երբ քննարկվում են նոր նշանակումներ: Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովը գնահատում է անդամների հմտությունները, փորձը և գիտելիքները անհատական և կոլեկտիվ հիմունքներով: Հմտությունների և փորձի ճիշտ հավասարակշռությունն օգնում է ապահովել անդամների կողմից իրենց պարտականությունների արդյունավետ կատարումը:

Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովը ղեկավարում է Խորհրդի նշանակումների գործընթացը, որն առաջարկություններ է ներկայացնում Խորհրդին: Անդամների նշանակման համար օգտագործվում է բաց գովազդ և/կամ արտաքին որոնման խորհրդատվություն: Նշանակումները կատարվում են ըստ արժանիքների և պատշաճ ուշադրություն է դարձվում բազմազանությանը իր լայն իմաստով, ներառյալ՝ գենդերային, սոցիալական, տարածաշրջանային և էթնիկ ծագումը և ճանաչողական և անձնական ուժեղ կողմերը:

2023թ.-ին լրացան Խորհրդի անդամներ Հրաչ Սարգսյանի և Արմեն Մկրտչյանի պաշտոնավարման ժամկետները, ովքեր 2020թ.-ին առաջադրվել էին բանկի խոշոր բաժնետեր Ակբա Ֆեդերացիայի կողմից: Ակբա Ֆեդերացիայի հետ լայնածավալ քննարկումներից հետո Խորհուրդը, առաջնորդվելով Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովի առաջարկությամբ, բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին առաջարկեց երկարաձգել այս երկու անդամների պաշտոնավարման ժամկետները լրացուցիչ մեկ տարի ժամկետով: 2023թ.-ի մայիսի 25-ին գումարված բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը հավանություն տվեց այդ առաջարկին, որով Հրաչ Սարգսյանը և Արմեն Մկրտչյանը վերանշանակեցին որպես խորհրդի անդամներ մեկ տարի ժամկետով և նրանց պաշտոնավարման ժամկետը երկարաձգվեց մինչև բաժնետերերի հաջորդ՝ 2024թ.-ի տարեկան ընդհանուր ժողովը:

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Խորհրդի կազմը	Տարիքը	1-ին նշանակումը/ պաշտոնավարման ավարտը	Նիստերին հաճախումը	Փորձառության ոլորտները	Հանձնաժողովներ
Ռաֆայել ՍԱՐԳՍՅԱՆ Խորհրդի նախագահ	**40**	**2022 / 2025**	**100%**	Բանկ և ֆինանսներ, օրենքներ և կարգավորումներ, պատասխանատու կառավարում	Աուդիտ Ռիսկերի կառավարում Կառավարում, նշանակումներ և վարձատրություններ
Բրունո Մարի ՇԱՐԻԵ Խորհրդի ավագ անկախ անդամ	**72**	**2019 / 2025**	**100%**	Միջազգային, բանկ և ֆինանսներ, կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, խոշոր կազմակերպությունների ղեկավարում, պատասխանատու կառավարում	Կառավարում, նշանակումներ և վարձատրություններ Ռիսկերի կառավարում
Կլաուս ԳՐԵՍԵՆԲԱՈՒԵՐ Խորհրդի անկախ անդամ	**66**	**2022 / 2025**	**88%**	Աուդիտ, Միջազգային, բանկ և ֆինանսներ, կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, խոշոր կազմակերպությունների ղեկավարում, պատասխանատու կառավարում	Աուդիտ
Աշոտ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Խորհրդի անկախ անդամ	**49**	**2022 / 2025**	**100%**	Միջազգային, բանկ և ֆինանսներ, կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, ռազմավարական պլանավորում և ռիսկեր	Ռիսկերի կառավարում
Հենրիկ ՔՈՉԻՆՅԱՆ Խորհրդի անդամ	**74**	**2010 / 2025**	**100%**	Խոշոր կազմակերպությունների ղեկավարում, պատասխանատու կառավարում, հանրային կառավարում, գյուղատնտեսություն	Կառավարում, նշանակումներ և վարձատրություններ
Արամ ԲԱԲԱՅԱՆ Խորհրդի անդամ	**44**	**2022 / 2025**	**100%**	Գյուղատնտեսություն, բիզնեսի կառավարում, սոցիալական խնդիրներ	Կառավարում, նշանակումներ և վարձատրություններ
Հարություն ՓԱԽՉԱՆՅԱՆ Խորհրդի անդամ	**40**	**2022 / 2025**	**100%**	Խոշոր կազմակերպությունների ղեկավարում, բիզնեսի կառավարում, գյուղատնտեսություն	Ռիսկերի կառավարում
Վարդան ՈՒՌՈՒՏՅԱՆ Խորհրդի անդամ	**45**	**2022 / 2025**	**100%**	Խոշոր կազմակերպությունների ղեկավարում, գյուղատնտեսություն, սոցիալական խնդիրներ	Աուդիտ
Արմեն ՄԿՐՏՉՅԱՆ Խորհրդի անդամ	**55**	**2022 / 2024**	**100%**	Գյուղատնտեսություն, հանրային կառավարում	
Հրաչ ՍԱՐԳՍՅԱՆ Խորհրդի անդամ	**48**	**2022 / 2024**	**88%**	Գյուղատնտեսություն	
ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԻՋԻՆԸ	**53**		**97.5%**		● *Հանձնաժողովի նախագահ* ● *Հանձնաժողովի անդամ*

ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովը երաշխավորում է, որ բանկն ունի հստակ սահմանված պլաններ սահուն իրավահաջորդության համար թե՛ Խորհրդի, թե՛ ավագ ղեկավարության պաշտոններում, ինչպես նաև վերահսկելու համար իրավահաջորդության լայն հնարավորությունների ապահովումը: Խորհուրդը հսկում է Խորհրդի բոլոր անդամների արդյունավետությունն ու նվիրվածությունը իրենց համապատասխան դերերում:

2023թ.-ին նշանակալից ձեռքբերումներից էր կայուն իրավահաջորդության քաղաքականության հաստատումը, որը կոչված է ապահովելու ղեկավարների անխափան անցումները և խթանել ղեկավարների աճը կազմակերպության ներսում: Այս քաղաքականությունը, որը համահունչ է մեր Կորպորատիվ կառավարման կանոնագրքին, կանոնակարգում է առանցքային պաշտոնյաների փոխարինման հետ կապված անցումային փուլի մանրակրկիտ պլանավորման հետ կապված հարցերը:

Իրավահաջորդության քաղաքականությունը ծառայում է որպես համապարփակ համակարգ, որը նախանշում է թեկնածուների բացահայտման չափանիշները, առանցքային պաշտոնյաների ընտրության և անցման գործընթացները, իրավահաջորդության պլանավորման արձանագրությունները և Գլխավոր գործադիր տնօրենի, Խորհրդի և ԿՆՎ հանձնաժողովի դերերը: Այս տարրերի միջև հետևողականության պահպանումն ապահովում է առաջնորդության կանոնակարգված և կազմակերպված անցումները՝ պաշտպանելով Բանկին անսպասելի խնդիրներից և հնարավոր ներքին տարաձայնություններից:

Խորհուրդը գիտակցում է, որ առանցքային պաշտոնյաների փոխարինումը հանդիսանում է բանկի պատմական զարգացման կարևոր բագույն փուլ: Անցնցում անցումների ապահովումը կարևոր է այնպիսի շահառուների վստահությունը պահպանելու համար, ինչպիսիք են ավանդատուները, բաժնետերերը, ներդրողները, բիզնեսի գործընկերները, հաճախորդները, աշխատակիցները և կարգավորող մարմինները: Թե՛ կանխատեսելի/սպասվող, թե՛ անսպասելի անցումների դեպքում քաղաքականության մեջ ամրագրված սկզբունքներին հավատարիմ մնալը պարտադիր է անխափան իրավահաջորդության իրականացման համար:

Իրավահաջորդության պլանավորման իր ջանքերում Խորհուրդը պետք է երաշխավորի, որ բոլոր նշանակումները և իրավահաջորդության նախագծերը հիմնված լինեն մարդկային բարձր որակների և անաչառ չափանիշների վրա: Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովը պետք է ապահովի թեկնածուների խմբի բազմազանությունը՝ սեռի, սոցիալական դիրքի և կարգավիճակի, տարիքի, ճանաչողական կարողությունների և անհատական հատկանիշների առումով՝ ապահովելով բանկի լայն հնարավորությունը:

Իրավահաջորդության պլանավորումը բարդ գործընթաց է և ընդգրկում է տարբեր աշխատակիցներ՝ ըստ աշխատանքային փորձի պատմության: Հետևաբար՝ այն մշտական տեղ ունի Հանձնաժողովի օրակարգում: Իրավահաջորդության պլանավորման սկիզբը համընկնում է պաշտոնը զբաղեցնելու պահի հետ, հաշվի առնելով այն, որ պոտենցիալ առաջնորդները կարող են ի հայտ գալ կառավարման ներքին մակարդակից՝ աշխատակիցների շարքից: Հանձնաժողովը պետք է շարունակաբար գնահատի մարդկային ռեսուրսների կառավարման գործիքների համապատասխանությունը, կայունությունը և

արդյունավետությունը, տաղանդների ձեռքբերման, կատարողականի գնահատման, տաղանդների հայտնաբերման, հմտությունների զարգացման և առաջնորդության ձևավորման նախաձեռնությունները:

Խորհրդի գնահատումը

Խորհուրդը նվիրված է իր, ինչպես նաև իր հանձնաժողովների և առանձին անդամների արդյունավետության գնահատմանը՝ իր Կորպորատիվ կառավարման կանոնագրքում նշված առաջարկություններին համապատասխան:

Հաշվի առնելով, որ Խորհրդի մեծամասնությունը նշանակվել է 2022թ.-ին, ինչը համընկնում է նաև բանկի շարունակական ռազմավարության մշակման հետ, Խորհուրդը կոլեկտիվ համաձայնություն է տվել հետաձգել 2022-2023 թվականների խորհրդի ինքնագնահատումը: Փոխարենը, համապարփակ գնահատման համակարգ կստեղծվի 2024թ.-ի ընթացքում և գնահատումը կիրականացվի 2025թ.-ին, ինչը թույլ կտա մանրակրկիտ վերանայել Խորհրդի արդյունավետությունն այս ռազմավարական զարգացումները վերահսկելիս:

Խորհուրդն ընդունում է, որ տարեկան գնահատման գործընթացը հնարավորություն է ընձեռում մշակել նոր մեթոդներ՝ վեր հանելու համար ավելի մեծ արդյունավետության հնարավորությունները, օգտագործելու ուժեղ կողմերը և բացահայտելու հետագա զարգացման ոլորտները: Այս մոտեցումը Խորհրդին հնարավորություն կտա շարունակաբար բարելավել իր գործունեությունը և նպաստել բանկի ընդհանուր հաջողությանը:

Խորհրդի նախագահը Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովի աջակցությամբ ստանձնել է գնահատման համակարգի ներդրումը նախաձեռնելու պատասխանատվությունը: Ավելին, նրանք կառաջնորդեն Խորհրդին իր արդյունավետության տարեկան գնահատման վերանայման և արդյունքներին արձագանքելու հարցերում:

Ոլորտը	Ուժեղ կողմերը	Հետագա զարգացման ոլորտները
Խորհրդի առաջնորդություն և ներդրում	› Խորհուրդն ունի կոլեգիալ, աջակցող բնույթ և գործադիրի դատողություններին արժեք ավելացնելու կարողություն։ › Խորհրդի օրակարգերը ճկուն են՝ հավասարակշռելով առաջնահերթությունները ռազմավարության, կատարողականի, ներքին հսկողության և կառավարման միջև։ › Խորհրդի անդամները հիմնականում լավ պատրաստված են, իսկ փաստաթղթերը ժամանակին են տրվում և բովանդակալից են։	› Մտածել պաշտոնական նիստերից դուրս ավելի շատ համատեղ մասնագիտական հանդիպումների մասին։ › Հնարավորություն կա, որ հարցերն ավելի վաղ ներկայացվեն Խորհրդին և Հանձնաժողովներին՝ քննարկումներին ավելի շատ ժամանակ հատկացնելու նպատակով։ › Խորհրդի թարմացումը պաշտոնավարման, հմտությունների և հեռանկարների բազմազանությամբ կարևոր է որակյալ որոշումների կայացման համար։
Ռազմավարություն	› Խորհուրդն ամբողջ տարվա ընթացքում կենտրոնացած է նպատակների և ռազմավարության վրա։ › Շահառուների հետ հաղորդակցությունը և Խորհրդին հետադարձ կապն օրակարգերի կարևոր կետ է, որն ընդունվում է բոլոր անդամների կողմից։	› Արտաքին միջավայրում փոփոխությունների և մարտահրավերների մասին խորհրդի բոլոր անդամների շարունակական տեղեկացվածություն։ › Հաշվի առնել հաճախորդի ուսումնասիրության ընդլայնումը՝ շուկայի փոփոխությունների, հնարավորությունների և ռիսկերի մասին ավելի ամբողջական պատկերացում տալու համար։
Ռիսկեր և հսկողություն	› Խորհուրդը և հանձնաժողովները մեծ ուշադրություն են դարձնում ռիսկերին և հսկողությանը։ › Հանձնաժողովները պատշաճ կերպով իրականացնում են մանրամասն վերանայումների և հսկողության իրականացման գործառույթները՝ թույլ տալով Խորհրդին կենտրոնանալ ռազմավարության և նպատակների վրա։ › Խորհրդի և հանձնաժողովների նիստերում ընթանում են լայնածավալ և բանիմաց քննարկումներ ռազմավարության, կառավարման, ներքին հսկողության համակարգերի և ռիսկերի կառավարման վերաբերյալ։	› Օրակարգի և փաստաթղթերի շարունակական ձևավորում՝ առաջնահերթությունների վերաբերյալ ավելի լայն քննարկումները խրախուսելու համար։ › Հաշվի առնել պաշտպանության երեք գծերի սահմանումները վերանայելը։ › Շարունակել կենտրոնանալ կրթվելու և զարգանալու վրա։
Մարդիկ, մշակույթ և միջավայր	› Խորհրդի նախագահը սահմանել է Խորհրդի «տոնը վերից» և չափանիշները՝ շարունակական ուշադրություն դարձնելով նպատակներին և արժեքներին։ › Առկա է դրական կորպորատիվ մշակույթ, որը կենտրոնացած է ընկերության կարիքների, համագործակցության և թիմային աշխատանքի վրա։ › Մշտական ուշադրություն է դարձվում առաջնորդության և պրոֆեսիոնալիզմի նկատմամբ։	› Գլխավոր գործադիր տնօրենի և Խորհրդի կողմից շարունակական հանձնառություն՝ ապահովելու, որ հաշվետվողականության մշակույթը դրսևորվի վերից։ › Շարունակական ուշադրություն կիբեր խնդիրների, ազդեցությունների, ներառականության և բազմազանության վրա։

ԽՈՐՀՐԴԻ ԻՆԴՈՒԿՑԻԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԸ

Խորհրդի նախագահը պատասխանատու է խորհրդի անդամների վերապատրաստման քաղաքականության և ընթացակարգերի մշակումը և արդյունավետ մոնիտորինգի իրականացումն առաջնորդելու համար: Կորպորատիվ քարտուղարն աշխատում է բանկի Խորհրդի նախագահի հետ՝ ապահովելու համար, որ Խորհրդի բոլոր անդամները համապատասխան ուսուցում ստանան, ինչպես անհատապես, այնպես էլ կոլեկտիվ՝ Խորհրդում գտնվելու իրենց ողջ ժամանակահատվածում:

Խորհրդի անդամները հավատարիմ են իրենց շարունակական մասնագիտական զարգացմանը, իսկ Խորհրդի նախագահը քննարկում է դասընթացները Մարդկային ռեսուրսների բաժնի և Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովի հետ:

2023թ.-ին Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովը զգալի հաջողություններ է գրանցել մեր խորհրդի անդամների համար վերապատրաստման ռազմավարության մշակման գործում: Այս ռազմավարությունը կոչված է բարձրացնելու նրանց կառավարման արդյունավետությունը և ապահովելու, որ նրանք լավ տիրապետեն բանկի գործունեությանը, մշակույթին և ոլորտի վերջին միտումներին:

Այս ռազմավարության հիմնական մաս են կազմում խորհրդի նոր անդամների ինտենսիվ կողմնորոշման ծրագիրը, նեղ մասնագիտացված հմտություններ ունեցողների համար ընդհանուր գիտելիքների զարգացումը, ինչպես նաև ոլորտի միտումների և կարգավորող փոփոխությունների մասին շարունակական թարմացումները: Այս համապարփակ մոտեցումը նպատակ ունի համալրել Խորհրդի բոլոր անդամներին անհրաժեշտ գործիքներով և գիտելիքներով՝ տեղեկացված որոշումներ կայացնելու և բանկի ռազմավարական ուղղության մեջ զգալի ներդրում ունենալու համար:

Նայելով առաջ՝ Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովը հավատարիմ է մնում բարձր մակարդակի խորհրդի ձևավորմանը, որն ունակ է կողմնորոշվել ֆինանսաբանկային ոլորտում դինամիկ զարգացումներում:

Ինդուկցիան

Նշանակվելիս յուրաքանչյուր խորհրդի անդամի տրամադրվում են հարմարեցված և համապարփակ ինդուկցիոն ծրագրեր, որոնք համապատասխանեցվում են նրանց անհատական փորձին և կարիքներին: Ինդուկցիոն ծրագիրը կենտրոնանում է բանկի մշակույթի և արժեքների, շահառուների, ռազմավարության, կառուցվածքի, գործունեության և կառավարման վրա: Շեշտը դրվում է բիզնեսի և նրա խնդիրների բացահայտման վրա՝ հաշվի առնելով նշանակված Խորհրդի անդամի կոնկրետ դերը, հմտություններն ու փորձը:

Ծրագրի շրջանակներում տրամադրվում է ինդուկցիոն փաթեթ, որը պարունակում է բանկի վերաբերյալ հիմնական կորպորատիվ փաստաթղթերը և տեղեկատվությունը, որոնք ներառում են, բայց չեն սահմանափակում, այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են Խորհրդի անդամի, Խորհրդի և հանձնաժողովների դերերը, ֆինանսական հաշվետվությունները և ռազմավարությունը, կառավարումը, ռիսկերի կառավարումը, բաժնետերերը, մշակույթը և առաջնորդությունը:
Հանդիպումներ են պլանավորվում Խորհրդի անդամների, Կորպորատիվ քարտուղարի, ավագ ղեկավարության անդամների և այլ առանցքային ղեկավարների հետ՝ քննարկելու այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են.

- բանկի ռազմավարությունը, ներառյալ հիմնական առաջնահերթությունները և մարտահրավերները,

- ընդհանուր ակնարկ բիզնեսի և բանկի գործառնությունների վերաբերյալ,
- ՀՀ բանկային ոլորտի կարգավորող դաշտը, հիմնական իրավական ռիսկերը և կորպորատիվ կառավարումը,
- ընդհանուր ակնարկ Խորհրդի և համապատասխան հանձնաժողովների վերաբերյալ,
- մարդիկ, մշակույթը, արժեքները, նպատակները և վարձատրությունը,
- կիբերանվտանգությունը, տվյալների պաշտպանությունը և գործառնական ճկունությունը,
- ֆինանսները (ներառյալ՝ աուդիտորների հետ հանդիպումները),
- ընդհանուր ակնարկ ռիսկերի, աուդիտի և համապատասխանության գործառույթների վերաբերյալ,
- կապիտալի կառավարումը և իրացվելիությունը,
- բիզնեսը և առևտրային բանկինգը,
- մանրածախ և կորպորատիվ բանկինգը,
- սպառողների հետ հարաբերությունները:

Այլ վերապատրաստումները

2023թ.-ին և՛ Խորհուրդը, և՛ գործադիր ղեկավարությունը մասնակցեցին սեմինարների և վերապատրաստման դասընթացների, որոնք կենտրոնացած էին կորպորատիվ կառավարման և խորհրդի պարտականությունների վրա: Ավելին, վերանայվել և կատարելագործվել են խորհրդի անդամների վերապատրաստման ռազմավարության հիմնարար սկզբունքները՝ նպաստելով անհատական և կոլեկտիվ վերապատրաստման ծրագրերի հետագա զարգացմանը:
Խորհրդի նախագահը և կորպորատիվ քարտուղարը համապատասխան պայմանավորվածություններ են ձեռք բերում բանկի հաշվին ցանկացած լրացուցիչ վերապատրաստման կարիքների համար, որոնք բացահայտվում են ներքին ռեսուրսների միջոցով կամ այլ կերպ:

Վերապատրաստումների թեմաները կազմվում են՝ ելնելով Խորհրդի անդամների գիտելիքների և փորձի մակարդակից: 2024թ.-ի ընթացքում վերապատրաստումների հիմնական թեմաները կարող են ներառել.

- Կորպորատիվ կառավարման առանձին ոլորտներ,
- Բանկային հմտությունների թարմացում,
- Ռիսկի կառավարում,
- Խորհրդի գնահատում:

ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԻ ԲԱԺԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կառավարումն առանցքային դեր է խաղում մեր ռազմավարության մշակման և իրականացման գործում՝ խթանելով հաշվետվողականությունը, հեշտացնելով տեղեկատվության հոսքերը և տրամադրելով անկախ դատողություններ մեր Խորհրդի անդամների կողմից: Խորհուրդը պատասխանատվություն է կրում բանկի ռազմավարությունը մշակելու և դրա իրականացումը գնահատելու համար՝ Գլխավոր գործադիր տնօրենի և գործադիր ղեկավարության վերահսկողությամբ: 2023թ.-ին Խորհուրդը հաստատել է բանկի նոր ռազմավարությունը և դրանից հետո վերահսկում է անհրաժեշտ պլանավորումներն ու հարմարեցումները, որոնք անհրաժեշտ են իր նպատակներն իրականացնելու համար:

Բանկի ռազմավարությունը շարունակում է կենտրոնանալ շահութաբերության բարելավման, ապագա ներդրումների համար կարողությունների զարգացման և աճի կայուն հիմքերի ստեղծման վրա: Խորհուրդը գնահատեց ռազմավարության առաջընթացը, ինչպես նաև դրա չորս ռազմավարական հիմնասյուները՝ կենտրոնացում մեր հաճախորդների կարիքների վրա, թվայնացում, ծախսերի կառավարում և կորպորատիվ կառավարման զարգացում:

Մեր ուշադրությունը ֆինանսական որոշումների վրա

Տարվա ընթացքում Խորհուրդը և դրան կից հանձնաժողովները կայացրել են առանցքային ֆինանսական որոշումներ, ներառյալ 2022թ.-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունը, քննարկել են 2023թ.-ի միջանկյալ հաշվետվությունը և արտաքին աուդիտի կարգավիճակի հաշվետվությունը: Խորհուրդը եռամսյակային կտրվածքով քննարկել է բանկի Գլխավոր հաշվապահի և ակտիվների և պասիվների կառավարման հաշվետվությունները:
2022թ.-ի վերջին Խորհուրդը հաստատել է 2023թ.-ի բյուջեն և վերահսկել բանկի կողմից 2022թ.-ի բյուջեի կատարողականը: 2023թ.-ի դեկտեմբերին Խորհուրդը հաստատել է 2024թ.-ի բյուջեն:

Բաժնետերերի առջև ստանձնած իր հանձնառություններն ընդգծելու նպատակով Խորհուրդն ընդունել է շահութաբաժինների քաղաքականություն, որի նպատակն է ապահովել կայուն դրամական շահութաբաժիններ՝ միաժամանակ պահպանելով ապագայի համար ներդրումներ կատարելու և բիզնեսը զարգացնելու ճկունությունը: Արդյունքում, որոշվեց 2023 թ.-ի ֆինանսական տարվա համար հայտարարագրել ընդհանուր **5.5 մլրդ ՀՀ դրամի** չափով շահութաբաժիններ՝ **1.1 մլրդ ՀՀ դրամով** ավելի նախորդ տարվա բաշխված շահույթի համեմատ:

Մեր ուշադրությունը ռիսկերի և կարգավորող նկատառումների վրա

Խորհուրդը՝ խորհրդակցելով Ռիսկերի կառավարման հանձնաժողովի հետ, ստեղծում է ռիսկերի կառավարման ուժեղ մշակույթ, որը բացահայտում է բանկի ռիսկերի ախորժակը և աջակցում է ռիսկերի կառավարման կայուն շրջանակի պահպանմանը՝ կենտրոնանալով ռիսկի չափման, գնահատման, ընդունման և կառավարման վրա, ներառյալ առաջացող ռիսկերը:

Խորհուրդը հաստատել է Ռիսկերի կառավարման պատասխանատուի եռամսյակային հաշվետվությունները և մանրակրկիտ ուսումնասիրել է բանկի մոտեցումը ռիսկի նկատմամբ՝ ներառյալ կարգավորող պահանջները: Մի շարք առանցքային կառուցվածքներ, վերա-

հսկողական փաստաթղթեր և հիմնական գործընթացներ նույնպես վերանայվել և հաստատվել են, ըստ անհրաժեշտության, Խորհրդի և/կամ նրա համապատասխան հանձնաժողովի կողմից:

Ողջ տարվա ընթացքում Խորհուրդը զգոնությամբ հետևել է աշխարհաքաղաքական և մակրոտնտեսական իրադարձություններին՝ իրականացնելով դրանց ազդեցության մոնիթորինգի և ըստ անհրաժեշտության հարմարեցրել ռազմավարությունները՝ մեղմելով ռիսկերը:

Մեր ուշադրությունը տեխնոլոգիաների վրա

Ողջ տարվա ընթացքում Խորհուրդը պարբերաբար տեխնոլոգիաների գծով թարմացումներ է ստացել Պլատֆորմների և տեխնոլոգիաների զարգացման գծով Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալից, ներառյալ՝ հիմնական տեխնոլոգիական ռազմավարական նախաձեռնությունները և դրանց զարգացումները, հանդիպել է SS անձնակազմի հետ և տեղում ստացել մանրամասն թարմացումներ կատարված աշխատանքների վերաբերյալ: Քանի որ տեխնոլոգիաները կենտրոնական դեր են խաղում բանկի ռազմավարական նպատակներին հասնելու համար, ներառյալ՝ թվայնացման նպատակը, ռազմավարական քննարկումները հետևողականորեն ներառել են տեխնոլոգիաների խնդիրները: Խորհուրդը նաև կարևոր որոշումներ է ընդունել տեխնոլոգիական ենթակառուցվածքներում ներդրումների վերաբերյալ:

Մեր ուշադրությունը տեղեկատական անվտանգության և ռիսկերի վրա

Խորհուրդն ընդունում է հաճախորդներին ապահով և հուսալի ծառայությունների մատուցումն ապահովելու համար տեխնոլոգիական դիմացկունության առանձնակի նշանակությունը: Այս համատեքստում Խորհուրդն առաջնահերթություն է տալիս կիբերանվտանգությանը և նախաձեռնողական քայլեր է ձեռնարկել այս ոլորտում իր ներգրավվածությունը խորացնելու համար: Սա ներառում է տեղեկատվական անվտանգության ղեկավարի կողմից համապարփակ հաշվետվություններ ներկայացնելը տեղեկատվական անվտանգությանն առնչվող հիմնական գործառնական գործունեության և մարտահրավերների վերաբերյալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով կիբերանվտանգության ռիսկերին:

Ե՛վ Խորհուրդը, և՛ Ռիսկերի կառավարման հանձնաժողովը լայնորեն քննարկում են կիբերանվտանգության հարցերը՝ տեխնոլոգիային առնչվող թեմաների լայն շրջանակի հետ մեկտեղ: Այս բազմակողմ մոտեցումը նպաստում է Խորհրդի և նրա Ռիսկերի կառավարման հանձնաժողովի շրջանակներում քննարկումների հարստացմանը, որտեղ տեղեկատվական անվտանգության գործառույթի վերաբերյալ պարբերաբար թարմացումներ են տրամադրվում: Խորհրդի Ռիսկերի կառավարման հանձնաժողովը, մասնավորապես, ներառում է տեղեկատվական անվտանգության ռիսկի նկատառումները, որպես գործառնական ռիսկի իր ավելի լայն վերահսկողության մաս:

Մեր ուշադրությունը մարդկանց և մշակույթին

Խորհուրդը և իր հանձնաժողովները շարունակեցին իրենց նիստերում ժամանակ հատկացնել մարդկանց և մշակույթին առնչվող թեմաների քննարկմանը՝ օգնելու բարձրացնել աշխատակիցների և այլ շահառուների հեռանկարների մասին իրազեկվածությունը: Խորհուրդը հավատարիմ է մշակութային ճիշտ տոնը սահմանելուն, երբ Խորհրդի յուրաքանչյուր նիստի մեկնարկում առկա է «մշակութային պահ», որը ներառում է բանկի նպատակներին և արժեքներին համահունչ վարքագծի դիտարկումներ և շահերի բախման բացահայտումներ:

Խորհրդի ներգրավվածությունը ղեկավարության և աշխատուժի ավելի լայն շրջանակների հետ շարունակեց մնալ Խորհրդի ուշադրության կենտրոնում, հատկապես՝ հաշվի առնելով, որ 2024թ.-ի տարեսկզբին Խորհուրդը և

ԿՆՎ հանձնաժողովը քննարկեցին աշխատակիցների հետ համագործակցության հարցերով Խորհրդի անդամ նշանակելու մասին հարցը, որի պահանջը բխում է մեր Կորպորատիվ կառավարման կանոնագրքից:

Մեր ուշադրությունը կառավարման վրա

2023թ.-ը նշանավորվեց բանկի Խորհրդի գործունեության և որակի զգալի աճով: Տարվա ընթացքում գումարվել է խորհրդի 8 նիստ, որոնցում քննարկվել է օրակարգային շուրջ 90 հարցեր: Հարկ է նշել, որ բանկի Խորհրդի նիստերը հաճախ տեղի են ունեցել մարտահրավերներով լի, սակայն կառուցողական միջավայրում:

Խորհուրդը շարունակել է հսկողության ներքո պահել բանկի կառավարումը, գործունեության անխափանությունը և վերահսկողությունը: Խորհուրդը և ավագ ղեկավարությունը աջակցել են կառավարման նախաձեռնությունների բարելավմանը, որոնք կոչված են խթանելու պարզությունը և արդյունավետ որոշումների կայացումը բիզնեսում: Նման բարելավումները ներառում էին Խորհրդի և հանձնաժողովների փաստաթղթերի ձևանմուշների ճշգրտումներ կատարելը, ինչպես նաև անհարկի նիստերի կրճատումը՝ ղեկավարության ժամանակն ազատելու և անհատական հաշվետվողականությունն ու որոշումների կայացումը խրախուսելու համար:

ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ

Խորհրդի վերջնական նպատակն է հասնել օրինակելի կառավարման՝ հավատարիմ մնալով 2022թ.-ին ընդունված իր Կորպորատիվ կառավարման կանոնագրքին: Այս նպատակին համահունչ Խորհուրդը կշարունակի իր ջանքերը բարելավելու և զարգացնելու կառավարման գործելակերպը, կատարողականը և ընթացիկ գործունեությունը: Այս նպատակին հասնելու համար Խորհուրդը որոշել է յուրաքանչյուր տարի ունենալ իր և իր հանձնաժողովների տարեկան գործողությունների ծրագրեր: Այն ընդգծում է, որ բանկի և Խորհրդի առաջնահերթ նպատակները պետք է լինեն համահունչ՝ ընդգծելով համապատասխան գործողությունների ծրագրերում այդ նպատակների արտացոլման նշանակությունը:

Միաժամանակ, Խորհուրդն ընդունում է Կորպորատիվ կառավարման կանոնագրքի մանրակրկիտ վերլուծություն իրականացնելու կարևորությունը ողջ տարվա ընթացքում՝ դրանից բխող գործողությունների ծրագրեր մշակելու համար: Սա ներառում է սկզբունքների և նախագծերի առաջնահերթություններ սահմանելը, դրանց համապատասխան դասակարգումները և իրականացման ժամանակացույցի նախանշումը: Խորհուրդը սերտորեն համագործակցում է իր մասնագիտացված հանձնաժողովների և գործադիր ղեկավարության հետ՝ առաջնահերթությունները սահմանելու և նախագծերն աստիճանաբար իրականացնելու համար: Խորհուրդը համոզված է, որ բանկի ներսում տիրող դրական մթնոլորտը, բոլոր ոլորտներում ընդհանուր տեսլականն ու նպատակները, ինչպես նաև բաց ներքին հաղորդակցության ամուր մշակույթը խթան կհանդիսանան ինչպես բանկի, այնպես էլ Խորհրդի նպատակներին հաջողությամբ հասնելու համար:

Թե՛ Խորհրդի, թե՛ գործադիր ղեկավարության հիմնական ռազմավարությունն է նախաձեռնել բարեփոխումներ՝ անդրադառնալով ցանկացած համակարգի հիմնարար ասպեկտներին և կենտրոնանալով դրաց հիմնական էության վրա, այլ ոչ թե երկրորդային տարրերի վրա: Այս մոտեցումը թույլ է տալիս կենտրոնացված ջանքեր գործադրել այն կարևոր բաղադրիչների վրա, որոնք առաջնորդում են տվյալ համակարգերի ընդհանուր ֆունկցիոնալությունը և հաջողությունը: Առաջնահերթություն տալով համակարգի հիմնարար տարրերին՝ Խորհուրդը նպատակ ունի ապահովել ցանկացած փոփոխության կամ բարելավման խորապես արմատավորված և ազդեցիկ լինելը՝ ապահովելով ամուր հիմք, որի վրա կարող են հետագայում մշակվել կամ ճշգրտվել օժանդակ տարրերը: Նշված էությունը Խորհրդի տեսանկյունից ներառված է հիմնական բիզնես գործառնությունների և ռազմավարության մեջ՝ միահյուսված ռիսկերի կառավարման կայուն պրակտիկայի հետ: Ակբայի համար, հատկապես, ռիսկերի կառավարումն առաջնային նշանակություն ունի՝ կազմելով նրա հիմնական բիզնես գործառնությունների անբաժանելի մասը:

Հաշվի առնելով այն կենտրոնական դերը, որը կխաղան և՛ Խորհուրդը, և՛ ավագ ղեկավարությունն այս ջանքերում, Խորհուրդն առանձնացրել է հետևյալ հիմնական ասպեկտները՝ հաջողություն ապահովելու համար.

ա) Կառավարման շրջանակի հետագա զարգացում - սա ներառում է տարբեր գործընթացների կազմակերպման բարելավում, ինչպիսիք են նիստերի նախապատրաստումը, գումարումը, քննարկումները, որոշումների ընդունումը, հանձնարարականները, փակումը, կատարման նկատմամբ հետևողականությունը, իրականացումը և մոնիթորինգը: Հանդիպումների կառուցվածքի, նիստերի արձանագրությունների որակի, որոշումների կայացման գործընթացների և Խորհրդի և ղեկավարության միջև հարաբերությունների, ինչպես նաև շահագրգիռ կողմերի ներգրավվածության հետ բարելավումներն առանցքային են: Խորհուրդը տեսնում է, որ դրան կարելի է հասնել՝ նախ մշակելով Խորհրդի համապարփակ կանոնադրություն:

բ) Խորհրդի կարողությունների ընդլայնում - Խորհրդի անդամների համար կարևորագույն ոլորտներում ուսուցման ապահովում՝ նրանց

արդյունավետությունը և որոշումներ կայացնելու հմտությունները բարձրացնելու համար:

գ) Կազմակերպական կառուցվածքում նվազագույն փոփոխություններ - առանցքային ոլորտներում հաշվետվողականության և պատասխանատվության հստակգծերի ապահովում՝ սահուն վերահսկողությունն ու գործողությունները հեշտացնելու համար:

դ) Իրավասու առաջնորդություն - կարևորել ավագ ղեկավարության կողմից ռազմավարության մշակման և համակարգման, ինչպես նաև արդյունավետ ռիսկերի կառավարում իրականացնելու անհրաժեշտությունը: Իրավասու առաջնորդությունը վճռորոշ նշանակություն ունի այս կարևոր ոլորտները արդյունավետորեն առաջնորդելու համար:

2024թ.-ի սկզբի դրությամբ Խորհուրդը սահմանել է հետևյալ առաջնահերթ նախագծերը.

1. **Կառավարման շրջանակ**
2. **Խորհրդի կառուցվածք**
3. **Խորհրդի կազմ և որակավորում**
4. **Խմբի կառավարման կառուցվածքներ**
5. **Ներքին կազմակերպում և գործելակերպ**
6. **Խորհրդի գնահատման շրջանակ**
7. **Իրավահաջորդության պլանավորում և առանցքային անձնակազմի վերաբերյալ որոշումներ**
8. **Վարձատրություն**
9. **Ղեկավարության կատարողականի կառավարում**
10. **Բիզնես ռազմավարություն**
11. **Ռիսկերի կառավարում**
12. **Ներքին հսկողություն**
13. **Համապատասխանություն**
14. **Կորպորատիվ մշակույթ**

Վերոհիշյալ նախագծերից յուրաքանչյուրի իրականացումը կամ շարունակական կատարելագործումը կպահանջի առանձին գործողությունների ծրագրերի մշակում: Այս գործընթացի ընթացքում Խորհուրդն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Խորհրդի նախագահի առաջնորդական դերին, ով կգլխավորի դրանց կատարումը, ինչպես նաև հանձնաժողովների վրա, որոնք ջանասիրաբար կհետևեն առաջընթացին և կանոնավոր թարմացումներ կհաղորդեն Խորհրդին:

Կառավարման տարեկան հաշվետվության հրապարակումը Խորհրդի հանձնառությունն է և Կորպորատիվ կառավարման կանոնագրքի պահանջը, և այն ուրվագծում է նախորդ տարվա հիմնական գործողությունները:

Խորհրդի տարեկան հաշվետվության մշակման և վերանայման գործընթացում դիտարկվում են հաշվետվության՝ ճշմարիտ, հավասարակշռված և հասկանալի լինելու պահանջները, և Խորհուրդը եզրահանգել է, որ 2023թ.-ի տարեկան հաշվետվությունը համապատասխանում է այս պահանջներին: Խորհրդին այս հարցում աջակցել են իր հանձնաժողովները, ինչպես նաև ավագ ղեկավարությունը՝ Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովի լրացուցիչ վերահսկմամբ՝ տարեկան հաշվետվության տարբեր բաժինների հաստատման միջոցով:

Խորհուրդը մտադիր է պահպանել և ընդլայնել այս պրակտիկան՝ ապահովելով, որ իր նախաձեռնություններն ու ապագա առաջնահերթությունները արդյունավետ կերպով հաղորդվեն բաժնետերերին և այլ շահառուներին:

ՌԱՖԱՅԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ
Խորհրդի նախագահ

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռիսկերի կառավարման համակարգը

Բանկի ռիսկերի կառավարման համակարգը, համահունչ լինելով բանկի ռազմավարությանը, իր մեջ ներառում է ռիսկերի կառավարման նորարարական և միջազգային ստանդարտներին համապատասխանող գործիքակազմի, ռիսկերի կառավարման սկզբունքները սահմանող փաստաթղթերի և բանկում ռիսկի մշակույթի պահպանմանը և տարածմանը միտված գործողությունների ամբողջություն: Բանկի ռիսկերի կառավարման համակարգի սխեմատիկ պատկերը ներկայացված է **Գծապատկեր 1-ում.**

Գծապատկեր 1: Ռիսկերի կառավարման համակարգի սխեմա



ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- ռիսկերի կառավարման նպատակները,
- բանկի հետ առնչվող ռիսկերը և դրանց դասակարգումը ըստ էականության սկզբունքի,
- ռիսկերի կառավարման մարմինները և/կամ պատասխանատու ստորաբաժանումները,
- ռիսկերի կառավարման դասական սխեմայի **(Գծապատկեր 2)** յուրաքանչյուր փուլում նախատեսվող գործողությունները,
- ռիսկերի կառավարման մեթոդները և ուղղությունները:

Գծապատկեր 2: Ռիսկերի կառավարման սխեման



ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Բանկում ռիսկերի կառավարման պատասխանատու մարմինների և/կամ ստորաբաժանումների հիերարխիկ կառուցվածքը ներկայացված է **Գծապատկեր 3-ում**.

Բանկի ռիսկերի կառավարման համակարգի կարևորագույն տարր կազմող բոլոր փաստաթղթերը մշակվում են Ռիսկերի կառավարման և համապատասխանության վարչության և այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ համագործակցության արդյունքում, մանրամասն քննարկվում են ռիսկերի կառավարման հանձնաժողովի և Խորհրդին կից Ռիսկերի կառավարման հանձնաժողովի ընթացքում և հաստատվում են բանկի Խորհրդի կողմից:

Ռիսկերի բացահայտման և կառավարման պատասխանատվությունը տարածվում է բանկի կառավարման բոլոր մարմինների, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների վրա և ենթակա է կատարման բանկի բոլոր աշխատակիցների կողմից:

Բանկի Ռիսկերի կառավարման և համապատասխանության վարչությունը համակարգում է ռիսկերի բացահայտման և կառավարման ուղղությամբ բանկի բոլոր կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների աշխատանքը: Ռիսկերի կառավարման և համապատասխանության վարչության կառուցվածքը ներկայացված է **Գծապատկեր 4**-ում:

Գծապատկեր 3: Ռիսկերի կառավարման պատասխանատու մարմինները



Գծապատկեր 4: Ռիսկերի կառավարման և համապատասխանության վարչության կառուցվածքը



ՌԻՍԿԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Բանկն իր գործունեության ընթացքում բախվում է էկզոգեն և էնդոգեն գործոնների, որոնց հետևանքով ենթարկվում է մի շարք ռիսկի տեսակների, որոնք հիմնականում ընդգրկում են ստորև ներկայացված տեսակները՝ չսահմանափակվելով դրանցով:

Վարկային ռիսկ - սահմանվում է որպես վարկային գործարքի մյուս կողմի (կոնտրագենտ) իր պարտավորությունների ժամանակին և/կամ ամբողջությամբ չկատարման հետևանքով առաջացող ֆինանսական կորստի հավանականություն: Վարկային ռիսկի դրսևորման տեսակներն են.

ա. Դեֆոլտի ռիսկ (Default risk) – հաճախորդի՝ իր պարտավորությունների չկատարման հետևանքով առաջացող ֆինանսական կորստի հավանականությունն է,

բ. Վարկանիշի նվազման ռիսկ (Downgrade risk) – կոնտրագենտի վարկանիշի նվազմամբ/ռիսկի աճով պայմանավորված բանկի վարկային ռիսկի պահուստավորման ավելացման հավանականությունն է,

գ. Կոնտրագենտի ռիսկ (Counterparty risk) – կոնտրագենտի շուկայական գործիքի դիրքից բխող պարտավորության չկատարման հետևանքով առաջացող ֆինանսական կորստի հավանականությունն է:

Բանկում ներդրված է Վարկային ռիսկի կառավարման համապարփակ համակարգ, որը բաժանվում է երկու՝ միմյանց փոխլրացնող ուղղության.

- **Անհատական վարկային ռիսկի կառավարման համակարգ**
- **Վարկային պորտֆելի ռիսկի կառավարման համակարգ**

Անհատական վարկային ռիսկի կառավարման համակարգում ներդրված են հաճախորդի վարկունակության գնահատման սքորինգային, կորպորատիվ հաճախորդների վարկանշման, ինչպես նաև հաճախորդի ֆինանսատնտեսական վերլուծական այլ համակարգեր:

Բանկի բոլոր երեք (Մանրածախ, ՓՄՁ և Գյուղատնտեսական) բիզնես ուղղությունների համար ներդրված են որոշումների կայացման ավտոմատացված սքորինգային համակարգեր, որոնք կառուցված են Application և Behavioral Score մոդելների հիման վրա: Նշված համակարգերը թույլ են տալիս բարձրացնել վարկավորման գործընթացի արդյունավետությունը՝ ապահովելով հայտերի ավտոմատ դիտարկումների ծավալ.

- Մանրածախ բիզնես ուղղություն ≈ 80%
- ՓՄՁ և Գյուղատնտեսական բիզնես ուղղություն ≈ 30%

Համակարգերը նաև ապահովում են վարկային ռիսկի համակարգային կառավարման գործիքակազմ, ինչի շնորհիվ բանկը հնարավորություն է ստանում կենտրոնացված կերպով կառավարել վարկավորման տեմպը՝ ելնելով ռազմավարությունից բխող նպատակներից և տնտեսական յուրաքանչյուր ցիկլից ածանցվող ռիսկերի մակարդակից:

Հաշվի առնելով բանկի կորպորատիվ հաճախորդների ֆինանսատնտեսական վերլուծության արդյունքները, հաճախորդի գործունեության ոլորտի ճյուղային ռիսկը և այլ որակական գործոններ՝ վարկանշման մո-

դելի միջոցով հաճախորդի համար հաշվարկվում է վարկանիշ՝ հիմքում ունենալով հաճախորդի հավանական վարկային կորստի գնահատականը:

Կախված հաճախորդի վարկային ռիսկի մակարդակից՝ վարկավորման վերաբերյալ որոշումների կայացման համակարգին ինտեգրված է վարկային կոմիտեների աստիճանական համակարգ:

Վարկային ռիսկի կառավարման, այդ թվում՝ վարկունակության գնահատման մոդելների համար բանկում ներդրված են հետթեստավորման և վալիդացման համակարգեր, որոնք նպաստում են մոդելների դինամիկ զարգացմանը:

Գնահատման ճշգրտության մաքսիմալացման նպատակով բանկն իր վարկային ռիսկի կառավարման գործառույթներում կիրառում է ոլորտի առաջադեմ վիճակագրական, ինպես նաև արհեստական բանականության և մեքենայական ուսուցման գործիքները:

Վարկային պորտֆելի ռիսկի կառավարման համակարգում ներդրված են վարկային պորտֆելի սեգմենտավորման, առանձին սեգմենտների գծով դեֆոլտի հավանականության, կորստի գործակցի և դեֆոլտի պահին պարտավորության ծավալի գնահատման մոդելներ:

Հիմք ընդունելով բանկի ռազմավարությունը և ելնելով կապիտալի համարժեքության գնահատման գործընթացից՝ վարկային ռիսկի համար սահմանվում է ռիսկի առավելագույն թույլատրելի մակարդակի եռաստիճան համակարգ՝ ռիսկի ախորժակ, ռիսկի հանդուրժելի մակարդակ և ռիսկի կլանման առավելագույն շեմ:

Հաշվի առնելով առանձին ոլորտների ճյուղային ռիսկի գնահատականները և բանկի ռազմավարությունը՝ վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման նպատակով սահմանված են պորտֆելի առավելագույն սահմանաչափեր՝ ըստ առանձին ոլորտների կենտրոնացման:

Ի լրումն կարգավորողի կողմից սահմանված նորմատիվային սահմանափակումների՝ բանկը իր ռիսկի ախորժակի հայտարարությամբ առանձին նորմատիվների գծով սահմանել է ներքին (առավել խիստ) սահմանաչափեր՝ ապահովելով ռիսկի զսպման համար անհրաժեշտ բուֆեր և բացառելով էնդոգեն գործոնների արդյունքում նորմատիվային դաշտի խախտման հավանականությունը:

Բանկում ներդրված են վարկային մոնիթորինգի և խնդրահարույց վարկերի հավաքագրման առաջադեմ համակարգեր, որոնք միտված են նվազագույնի հասցնել վարկային ռիսկի հավանականությունը և կորստի գործակիցը:

Ունենալով վարկային ռիսկի պահուստի գնահատում՝ 2 առանձին մեթոդաբանությունների հիման վրա (IFRS 9 և ՀՀ ԿԲ)՝ բանկը հնարավորություն է ունենում բացահայտել վարկային ռիսկի տատանման դինամիկան ինչպես տնտեսության ցիկլի առանձին կետերի, այնպես էլ ամբողջ ցիկլի ընթացքում:

Ստորև ներկայացված է բանկի վարկային պորտֆելի ՀՀ ԿԲ պահուստավորման դրույքի և ECL գործակցի դինամիկան **(Գծապատկեր 5)**:

Գծապատկեր 5: ECL Dynamic IFRS 9 & CBA



Ինչպես երևում է գրաֆիկից, և ՀՀ ԿԲ պահուստավորման դրույքը, և ECL գործակիցը ունեցել են դինամիկ նվազում 2021թ.-ից ի վեր՝ 2023թ.-ի տարեվերջին հասնելով համապատասխանաբար 1.41% և 1.14% մակարդակին:

Իրացվելիության ռիսկ - սահմանվում է որպես բանկի ակտիվների իրացվելիության նվազմամբ պայմանավորված վերջիններիս գնի անբարենպաստ փոփոխություն (Trading Liquidity Risk) կամ բանկի իր պարտավորությունները ժամանակին կատարելու անկարողություն՝ պայմանավորված իրացվելի միջոցների անբավարարությամբ (Funding Liquidity RIsk):

Բանկում ներդրված է Իրացվելիության ռիսկի կառավարման համապարփակ համակարգ, որն ընդգրկում է այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են՝ իրացվելիության ճեղքվածքի վերլուծություն, սթրես-թեստավորումներ, ֆինանսական կազմակերպություններից և բանկերից միջոցների ներգրավման պայմանագրերում սահմանված ֆինանսական ցուցանիշների մոնիթորինգ, հաճախորդների վարքագծային վերլուծություններ, ինչպես նաև ռիսկի գնահատման այլ գործիքներ: Այս ամենին զուգահեռ բանկում գործում են իրացվելիության ռիսկի կառավարմանն ուղղված օրական, ամսական և եռամսյակային պարբերականությամբ մոնիթորինգների համակարգեր:

Իրացվելիության ռիսկի համապարփակ կառավարման համար կարգավորողի կողմից սահմանված նորմատիվային սահմանաչափերից զատ՝ բանկում սահմանված են առավել խիստ ներքին սահմանաչափեր, ինչը հնարավորություն է ստեղծում անընդհատ հսկողության տակ պահել նորմատիվային դաշտում կատարվող փոփոխությունները, վաղ բացահայտել և բացառել էնդոգեն գործոնների արդյունքում հնարավոր խախտման դեպքերը՝ բանկում ներդրված մոնիթորինգների ու սթրես թեստավորման համակարգերի օգնությամբ:

Հաշվի առնելով տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական անորոշությունները՝ բանկը սահմանել է իրացվելիության ռիսկի ախորժակի այնպիսի նվազագույն սահմանաչափ, որի շնորհիվ ապահովվում է իրացվելիության նշանակալի բուֆեր՝ անբարենպաստ ցնցումներին դիմակայելու նպատակով:

2023թ.-ի ընթացքում բանկը ՀՀ բանկային համակարգում պահպանել է իրացվելիության բարձր մակարդակ՝ հաճախորդների համար ստեղծելով միջոցների ներդրման հուսալի և կայուն միջավայր, ինչն արտացոլվում է իրացվելիության նորմատիվների ՀՀ ԿԲ սահմանած սահմանաչափերից զգալիորեն բարձր ցուցանիշներով **(Գծապատկեր 6)**:

Գծապատկեր 6: Իրացվելության ռիսկի փաստացի ցուցանիշներ առ 31.12.2023թ.



Իրացվելիության աղբյուրների դիվերսիֆիկացման նկատառումներից ելնելով՝ բանկը միջոցներ է ներգրավում նաև միջազգային ֆինանսական կառույցներից, իսկ ավելցուկային իրացվելիության պաշարներն ուղղվում են ցածր ռիսկային ներդրումային գործառնությունների իրականացմանը, մասնավորապես՝ ներդրումներ պետական պարտատոմսերում, միջբանկային վարկերի տրամադրում, հակադարձ ռեպո գործարքների իրականացում և այլն: Բանկի ներդրումային պորտֆելում մեծ տեսակարար կշիռ են կազմում առավել բարձր իրացվելիություն ունեցող ՀՀ պետական պարտատոմսերը՝ կազմելով պարտատոմսերի պորտֆելի մոտ 98.4%-ը:

Բանկում օրական պարբերականությամբ իրականացվում է ավանդային պորտֆելի (ցպահանջ և ժամկետային) տատանողականության մոնիթորինգ, որի արդյունքներով, նույնիսկ արտաքին միջավայրից եկող անորոշությունների պարագայում, բանկի ավանդային պորտֆելի գծով բացասական միտումներ չեն դիտվում:

Իրացվելիության ռիսկի գծով իրականացվում է նաև ակտիվների և պարտավորությունների վերլուծություն՝ ըստ վերջիններիս ժամկետայնության, որը միտված է հնարավոր բացասական ճեղքվածքի գնահատմանը և վերջինից բխող ռիսկերի արդյունավետ կառավարմանը:

Իրացվելիության ռիսկի սթրես-թեստավորման համակարգերը նպատակ ունեն գնահատելու ոչ բարձր հավանականություն ունեցող սթրեսսցենարային իրավիճակներում իրացվելիության ցնցումներին դիմակայելու բանկի ֆինանսական կարողությունը:

Ռիսկի ախորժակի հայտարարությամբ սահմանված իրացվելիության ցուցանիշների փաստացի կամ պոտենցիալ խախտումներին օպերատիվ արձագանքելու նպատակով բանկում ներդրված է հստակ սահմանված ժամկետներ և գործողություններ ենթադրող ահազանգման քաղաքականություն:

Տոկոսադրույքի ռիսկ - սահմանվում է որպես շուկայական տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների արդյունքում բանկի տոկոսային մարժայի նվազման կամ տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների գների փոփոխության հետևանքով ֆինանսական կորստի հավանականություն:

Բանկում տոկոսադրույքի ռիսկի կառավարման համակարգը տարանջատված է ըստ 2 հիմնական ուղղության՝ IR in trading book և IR in banking book:

Տոկոսադրույքի ռիսկի վերոնշյալ 2 ուղղությունների գծով բանկում սահմանվել են ռիսկի ախորժակի, հանդուրժելի մակարդակի և կլանման առավելագույն շեմի սահմանաչափեր:

Բանկը տոկոսադրույքի ռիսկի զսպման նպատակով փորձում է հավասարակշռություն պահպանել լողացող տոկոսադրույքի բաղադրիչ պարունակող ակտիվների և պարտավորությունների ծավալների և ժամկետների միջև՝ նվազեցնելով լողացող տոկոսադրույքների անբարենպաստ տատանումներով պայմանավորված հնարավոր կորուստները:

Տոկոսադրույքի ռիսկի կառավարման համակարգում կիրառվող գործիքակազմը ներառում է նաև տոկոսադրույքի սվոփերի օգտագործումը, որոնք հանդիսանում են բանկի տոկոսադրույքի ռիսկի հեջավորման հիմնական գործիքներից մեկը:

Տոկոսադրույքի ռիսկի կառավարման նպատակով բանկը կիրառում է նաև GAP մեթոդաբանությունը, որի հիման վրա բանկում սահմանվել են տոկոսադրույքի ճեղքվածքի ուղենիշային սահմանաչափեր:

Արտարժութային ռիսկ - սահմանվում է որպես արտարժույթի փոխարժեքի տատանման արդյունքում ֆինանսական կորստի հավանականություն:

Բանկի ռազմավարությամբ արտարժութային ռիսկի համար սահմանված է ռիսկի առավելագույն թույլատրելի մակարդակի եռաստիճան համակարգ՝ ռիսկի ախորժակ, ռիսկի հանդուրժելի մակարդակ և ռիսկի կլանման առավելագույն շեմ:

Արտարժութային ռիսկի կառավարման համակարգին է ինտեգրված վիճակագրական լայն գործիքակազմ, որն իր մեջ ներառում է այնպիսի գործիքներ, ինչպիսիք են՝ Value at Risk, Expected Shortfall և այլն: Վերջինս հնարավորություն է տալիս ապահովել արտարժութային ռիսկի առավել համապարփակ և արդյունավետ կառավարում՝ ապահովելով ներքին սահմանաչափերի ճշգրիտ մակարդակ:

Արտարժութային ռիսկի զսպման նպատակով բանկն արտարժութային բաց դիրքերի գծով իրականացնում է օրական մոնիթորինգ: Բանկի արտարժութային ռիսկի պահպանողական քաղաքականությունից ելնելով եվրո և ՌԴ ռուբլի արտարժույթների գծով էական բաց դիրքեր չեն պահվել: ԱՄՆ դոլարով արտահայտված դիրքը հիմնականում եղել է երկար, սակայն գտնվել է բանկի կողմից ընդունելի մակարդակում:

Բացի վերոնշյալից բանկում ամենօրյա պարբերականությամբ ուսումնասիրվում են միջազգային շուկայում առավել լայն կիրառություն ունեցող արժույթների դինամիկան, որի արդյունքում բանկը կարողանում է զսպել արտարժութային վերագնահատումներից առաջացող հնարավոր կորուստները:

Գործառնական ռիսկ - սահմանվում է որպես ֆինանսական կորուստ կրելու հավանականություն, որի առաջացման պատճառ են հանդիսանում անբավարար կամ բացակայող ներքին գործընթացները, համակարգերի աշխատանքի խափանումները, մարդկային գործոնը՝ աշխատակիցների ոչ պատշաճ կամ սխալ գործողությունները և արտաքին գործոնները:

Գործառնական ռիսկի կառավարման նպատակը բանկում գործառնական ռիսկի նվազեցումն է, ինչն իրականացվում է հետևյալ մեթոդներով.

1. բանկի գործունեության վրա ազդող անցանկալի գործոնների և իրադարձությունների բացահայտում ու կանխարգելում, դրանց հետ կապված ռիսկերի կառավարում և բանկի համար ընդունելի ռիսկերի չափի նկատմամբ մշտական վերահսկողություն,

2. բանկի գործող և նոր ներդրվող հիմնական գործիքներում, գործառնություններում և համակարգերում առկա գործառնական ռիսկերի արժանահավատորեն չափում ու գնահատում, դրանց գծով համապատասխան կառավարման համակարգերի մշակում:

Բանկի ռազմավարությամբ գործառնական ռիսկի համար սահմանված է ռիսկի ախորժակ: Գործառնական ռիսկի զսպման նպատակով բանկն իրականացնում է գործառնական միջադեպերի մշտական մոնիթորինգ:

Գնային ռիսկ – սահմանվում է որպես բորսայում ցուցակված, բանկի հաշվեկշռում իրական արժեքով չափվող կապիտալի գործիքների շուկայական գների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով բանկի կողմից կորուստներ կրելու հավանականություն՝ պայմանավորված ինչպես տվյալ կապիտալի գործիքի և դրա թողարկողի, այնպես էլ շուկայում շրջանառվող կապիտալի գործիքների շուկայական գների ընդհանուր տատանումների հետ կապված գործոններով:

Երկրի ռիսկ – հավանականությունն է, որ այլ երկրում տեղի ունեցող տնտեսական, սոցիալական և/կամ քաղաքական պայմանները կամ իրադարձությունները բացասական ազդեցություն կունենան բանկի ռիսկի պրոֆիլի, իրացվելիության, կապիտալի և/կամ շահույթի վրա: Երկրի ռիսկի գնահատումը կարևորվում է արտերկրի հետ գործառնություններ իրականացնելիս, մասնավորապես կապված այլ երկրների բանկերում թղթակցային հաշիվներ բացելու, միջազգային փոխանցումներ կատարելու և այլ գործառնություններ իրականացնելու հետ:

Երկրի ռիսկը զսպելու նպատակով բանկն ամսական պարբերականությամբ ուսումնասիրում է միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից այն երկրներին տրված վարկանիշները, որոնցում գործող ֆինանսական կազմակերպությունների հետ բանկը հաստատել է թղթակցային հարաբերություններ: Երկրներից մեկի վարկանիշի նվազեցման դեպքում վերանայվում է երկրի գծով սահմանաչափը՝ ընդհուպ մինչև տվյալ երկրում գործող ֆինանսական կազմակերպություններում գործող թղթակցային հաշիվների փակում:

Ճյուղային ռիսկ – տնտեսության ճյուղերի տնտեսական վիճակի փոփոխության արդյունքում կորուստներ կրելու հավանականությունն է: Ընդ որում, ճյուղային ռիսկը կարող է բացահայտվել ինչպես ճյուղի ներքին, այնպես էլ այլ ճյուղերի հետ համեմատական վերլուծությունների արդյունքում: Ճյուղային ռիսկը կապված է տնտեսության տվյալ ճյուղի տնտեսական և ֆինանսական դինամիկաների, ցիկլիկ տատանումների, արտադրանքի կենսաշրջանի փուլերի և այլ առանձնահատկությունների հետ: Բանկում ճյուղային ռիսկը հաշվի է առնվում վարկային պորտֆելի պլանավորման, խոշոր վարկառուների վարկանշման, վարկային ռիսկի սթրես-թեստավորման ժամանակ:

Ռազմավարական (բիզնես մոդելի) ռիսկ – առաջանում է անհամապատասխան բիզնես ռազմավարության ընտրության դեպքում կամ ռազմավարության հիմքում ընկած ենթադրություններում, ցուցանիշներում, նպատակներում կամ այլ գործոններում բացասական տեղաշարժերի արդյունքում: Տվյալ ռիսկից խուսափելու նպատակով բանկում ռազմավարական ծրագրերի և բիզնես մոդելների ընտրության և վերանայման ժամանակ տվյալ գործառույթի համար պատասխանատու ստորաբաժանումներն իրականացնում են ելակետային և ցանկալի թիրախային ցուցանիշների մանրամասն վերլուծություն՝ հաշվի առնելով առկա և պոտենցիալ ռիսկերը: Համապատասխան ստորաբաժանումների կողմից իրականացվում է նաև հաշվարկների հիմքում ընկած ենթադրությունների և ցուցանիշների, բանկի ներքին և արտաքին միջավայրի պարբերական մոնիթորինգ, իսկ վերջիններիս էական փոփոխության դեպքում քննարկվում է բիզնես ռազմավարության փոփոխության, նոր պայմաններին համապատասխանեցման հարցը:

Համբավի ռիսկ – հավանականությունն է, որ բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքը կհանգեցնի հաճախորդների թվաքանակի նվազման, կոնտրագենտների/հաճախորդների հետ իրականացվող գործառնությունների ծավալի կրճատման, ծախսատար դատական գործընթացների և եկամտաբերության անկման:

Բանկում համբավի ռիսկի կանխարգելման նպատակով բանկի տարբեր ստորաբաժանումների կողմից իրականացվում են մի շարք միջոցառումներ, որոնցից առավել կարևորներն են.

- հաճախորդների դժգոհությունների, առաջարկությունների, բողոքների գնահատում, բանկի վերաբերյալ լրատվամիջոցներում հրապարակումների, բանկի կողմից հրապարակվող տեղեկատվության մոնիթորինգ, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան միջոցառումների իրականացում,
- բանկի գործունեության հետ առնչվող իրավական, բնապահպանական կամ հարկային խնդիրների, խնդրահարույց վարկերի հետ աշխատանքի հետևանքով առաջացած Համբավի ռիսկի ազդեցության գնահատում, բանկում կիրառվող պայմանագրերի ստանդարտացում, տիպային ձևերից շեղումների գծով հսկողություն,
- բանկի գործարար գործընթացների անընդհատության ապահովում,
- ահաբեկչության ֆինանսավորման և փողերի լվացման դեմ պայքարի, էմբարգոների պահպանման միջոցառումներ, ներքին և արտաքին խարդախությունների կանխարգելման միջոցառումներ,
- գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետության մշտական բարձրացումև այլն:

Անհամապատասխանության (non-compliance) ռիսկ – որի ներքո հասկացվում է բանկի հանդեպ իրավական, վարչական կամ կարգապահական պատժամիջոցների կիրառման, էական ֆինանսական կորուստների և բարի համբավին սպառնացող վտանգի ռիսկը, որը բանկային և ֆինանսական գործունեությունը կարգավորող օրենսդրական և կանոնակարգային պահանջների չպահպանման, բանկի ներքին իրավական ակտերի, գործադիր ղեկավարության կարգադրությունների, մասնագիտական և էթիկայի կանոնների խախտման արդյունք է:

Սոցիալական և շրջակա միջավայրի ռիսկ - համաձայն բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության՝ բանկում Էական են համարվում այն ռիսկերը, որոնք ուղղակիորեն կապված են բանկի գործունեության հետ և, որոնց անտեսելը կամ անարդյունավետ կառավարելն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող է հանգեցնել բանկի հիմնական տնտեսական նորմատիվների խախտման, գործունեության անընդհատության խաթարման և/կամ անվճարունակության: Վերոնշյալ ռիսկերի վերլուծության, գնահատման և կառավարման գծով բանկում մշակվում են առանձին ընթացակարգեր: Յուրաքանչյուր Էական ռիսկի գծով բանկում սահմանվում են ռիսկի ախորժակ և/կամ հանդուրժելի մակարդակ և/կամ կլանման առավելագույն չեմ կամ այլ համապատասխան ուղենիշային մեծություններ և/կամ սահմանաչափեր:

Բանկում Էական են համարվում վարկային, արտարժութային, տոկոսադրույքի, գործառնական (որպես բանկի ամենօրյա գործառնություններին պատմականորեն ամենաշատն առնչվող և Կապիտալի համարժեքության գործակցի վրա ուղղակի ազդեցություն ունեցող) և իրացվելիության (որպես բանկի վճարունակության վրա ուղղակի ազդեցություն ունեցող) ռիսկերը, որոնց կառավարման նպատակով բանկում մշակվել են համապատասխան ներքին իրավական ակտեր և միջոցառումների համակարգեր, որոնք պարբերաբար վերանայվում են՝ համապատասխանեցվելով միջազգային նորարարական ստանդարտներին:

ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Բանկի կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացի քաղաքականության (այսուհետ՝ ԿՀԳՆԳ) նպատակն է ապահովել բանկի կապիտալի համարժեքությունը ստանձնած ռիսկերի մոնետար չափին՝ համապատասխանեցնելով բանկի գործունեությունը գործող նորմատիվային դաշտի պահանջներին, միաժամանակ ապահովելով բանկի գործունեության անընդհատությունը և կայունությունը երկարաժամկետ հորիզոնում:

ԿՀԳՆԳ-ն, հանդիսանալով բանկի գործունեությանը համապատասխան կապիտալի նպատակային մակարդակի թիրախավորման և պլանավորման գործիք, հիմքում ունի հետևյալ սկզբունքները.

- ԿՀԳՆԳ համապատասխանեցում օրենսդրական և կարգավորողի այլ պահանջներին,
- Մակրոտնտեսական և բանկին ներհատուկ ռիսկերի արժանահավատ գնահատում և վերջիններիս ինտեգրում բանկի ռազմավարական և գործառնական կառավարման շրջանակներին,
- ԿՀԳՆԳ ինտեգրում ռիսկերի կառավարման և հաշվետվողականության համակարգերին,
- ԿՀԳՆԳ ճկունություն և շարունակական բարելավում:

Թվարկված սկզբունքներին հավատարիմ մնալու և ԿՀԳՆԳ հնարավորինս կիրառելի դարձնելու նպատակով բանկում ԿՀԳՆԳ հիմնվում է առավելապես քանակական գնահատումների վրա՝ նվազագույնի հասցնելով որակական կամ փորձագիտական գնահատականները, ինչը թույլ է տալիս ապահովել գործընթացի արժանահավատությունը և ճկունությունը:

Ռազմավարական և գործառնական կառավարման շրջանակներում ԿՀԳՆԳ-ն արդյունավետ ինտեգրելու նպատակով գործընթացը կառուցվում է հաշվետվողականության բարձր մակարդակի հիման վրա. ԿՀԳՆԳ քաղաքականությունը և ԿՀԳՆԳ փաստաթուղթը հաստատվում են Բանկի խորհրդի կողմից, իսկ ԿՀԳՆԳ հիմքում ընկած ենթադրությունները և ստացված արդյունքները քննարկվում են Խորհրդին կից Ռիսկերի կառավարման հանձնաժողովում, ինչը թույլ է տալիս ստացված արդյունքները ներդնել կայացվելիք ռազմավարական որոշումների հիմքում:

ԿՀԳՆԳ անընդհատության և արժանահավատության ապահովման, ինչպես նաև ռիսկերի կառավարման համակարգերում ԿՀԳՆԳ-ի ինտեգրման նպատակով գործընթացի հիմքում ընկած ենթադրությունները, կիրառվող մոդելները և մոտեցումները առավելապես համահունչ են բանկի ռիսկերի կառավարման մյուս համակարգերում կիրառվող ենթադրություններին, մոդելներին և մոտեցումներին: Մասնավորապես՝ ԿՀԳՆԳ-ն համահունչ է ռազմավարական պլանավորման և թիրախավորման, ռիսկի ախորժակների մշակման, սթրես թեստերի իրականացման, ինչպես նաև վերականգնման ծրագրերի մշակման գործընթացներին:

Ի լրումն կարգավորողի կողմից տրված կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջների՝ բանկը, հիմնվելով կապիտալի վրա ուղղակի ազդեցություն ունեցող ռիսկերի գծով ակնկալվող և չակնկալվող կորուստների գնահատականների վրա, հաշվարկում է նաև ներքին կապիտալ, վերջինս դնելով բանկի ռազմավարական ծրագրի և ռիսկի ախորժակի համակարգի հիմքում:

ՌԻՍԿԻ ԱԽՈՐԺԱԿ

Բանկում ռիսկի ախորժակի համակարգը, հանդիսանալով բանկի ռիսկերի կառավարման համակարգի բաղկացուցիչ տարր, հիմքում ունի ներքոնշյալ սկզբունքները.

- կարգավորողի նորմատիվային պահանջների ապահովման համար անհրաժեշտ բուֆերների ստեղծում,
- բանկի ռազմավարությամբ ամրագրված նպատակների ապահովման համատեքստում ռիսկ/եկամուտ հարաբերակցության օպտիմալ մակարդակի ապահովում, ռիսկերի դիվերսիֆիկացիայի ապահովում,
- ահազանգման համակարգի արդյունավետության բարձրացում:

Բանկում ռիսկի ախորժակները և ներքին ուղենիշային այլ սահմանաչափերը սահմանվում են կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացին, ինչպես նաև ռազմավարությանը համահունչ սկզբունքով, և նպատակ ունեն մաքսիմալացնել կապիտալի՝ ռիսկով ճշգրտված եկամտաբերությունը:

Բանկի համար էական ճանաչված ռիսկերի գծով սահմանված է ռիսկի ախորժակի եռաստիճան համակարգ **(Գծապատկեր 6)**:

Գծապատկեր 6: Ռիսկի ախորժակի համակարգը



Ռիսկի ախորժակ (appetite)

Ռիսկի այն մակարդակն է, որը բանկը կարող է և ցանկանում է ստանձնել՝ չխաթարելով իր ֆինանսական կայունությունը և բնականոն գործունեությունը: Այն կարող է արտահայտվել ռիսկի հետևանքով բանկին պատճառված կորստի մեծությամբ, կենտրոնացումների կամ նորմատիվների ցուցանիշներով: Ռիսկի ընդունելի մակարդակը կամ ախորժակը նախատեսված է ամենօրյա գործունեության հետ առնչվող ռիսկերի կառավարման համար: Այն իր արտացոլումն է գտնում բյուջեի թիրախներում և սահմանվում է որպես գործառնական սահմանաչափեր, որոնցից ցանկացած շեղում անմիջապես ներկայացվում է բանկի Խորհրդին և Գործադիր մարմնին, և վերջիններիս կողմից կայացվում է որոշում համապատասխան հակազդող մեխանիզմների կիրառման ուղղությամբ:

Ռիսկի հանդուրժելի մակարդակ (tolerance)

Ռիսկի ընդունելի առավելագույն մակարդակն է: Նշված սահմանաչափի գծով ցանկացած խախտում անմիջապես զեկուցվում է բանկի Խորհրդին և Գործադիր մարմնին, և վերջինս Խորհրդին է ներկայացնում ռիսկի ընդունելի մակարդակի վերականգնման գործողությունների ծրագիր:

Ռիսկի կլանման առավելագույն շեմ (capacity)

Ռիսկի առավելագույն մակարդակ, որին բանկը կարող է ենթարկվել՝ առանց խախտելու իր գործառնական կամ կարգավորողի նորմատիվային սահմանափակումները:

Հիմք ընդունելով ռիսկի ախորժակի համակարգով որդեգրած սկբունքները՝ բանկի Խորհուրդը տարեկան ռազմավարական ծրագրին զուգահեռ վերանայում/հաստատում է ռիսկի ախորժակի հայտարարությունը՝ այդպիսով սահմանելով բիզնես գործունեության ընդունելի շրջանակը:

ՌԻՍԿԻ ԱԽՈՐԺԱԿԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԿԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի լրումն էական ռիսկերի գծով ռիսկի ախորժակների/Հանդուրժելի մակարդակների/Ռիսկի կլանման առավելագույն շեմերի մակարդակների՝ ռիսկի ախորժակի հայտարարությամբ սահմանվում են նաև ռիսկերի ներքին ուղենիշային Tier 1 և Tier 2 սահմանաչափեր:

Բանկում ներդրված է ռիսկի գործոնների ավտոմատացված մոնիթորինգի և ահազանգման համակարգ, որն իր մեջ ընդգրկում է (և չի սահմանափակվում) ռիսկի ախորժակի հայտարարությամբ սահմանած ցուցանիշները:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

2023թ.-ի ընթացքում գնաճային տեմպերի թուլացմամբ պայմանավորված ՀՀ ԿԲ կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքը նախորդ տարվա համեմատ նվազել է 1.5 տոկոսային կետով՝ կազմելով **9.25%**:

Սրան հակառակ՝ միջազգային շուկաներում Կենտրոնական բանկերը շարունակում էին վարել զսպող դրամավարկային քաղաքականություն՝ պայմանավորված գնաճային սպասումներով: ԱՄՆ Դաշնային պահուստ կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքը տարեկան կտրվածքով աճել է 1 տոկոսային կետով, Եվրոպական կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման տոկոսադրույքը աճել է 2 տոկոսային կետով, իսկ ՌԴ ԿԲ-ի կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.5 տոկոսային կետով:

Վերոնշյալով պայմանավորված՝ բանկը ավելացրել է տեղական շուկայի ֆինանսավորման ծավալները, ինչի արդյունքում ապահովել է տոկոսային եկամուտների առավել մեծ ծավալ՝ պայմանավորված տոկոսային մարժայի ավելացմամբ:

ՍԹՐԵՍ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ

Արտաքին և ներքին ազդակների հնարավոր ազդեցությունը բանկի կապիտալի և իրացվելիության վրա գնահատելու և ռիսկի մակարդակը սթրեսային տարբեր իրավիճակներում բանկի ռիսկի ախորժակի հետ համեմատելու նպատակով բանկում ներդրված է ռիսկի սթրես-թեստավորման բազմագործոն համակարգ: Ստացված արդյունքները դնելով ռազմավարական որոշումների կայացման հիմքում՝ բանկը նպատակ է հետապնդում ապահովել իր ֆինանասական կայունությունը երկարաժամկետ հորիզոնում:

Վարկային ռիսկի սթրես թեստավորման համակարգը, ներառելով մակրոտնտեսական արտաքին/ներքին գնահատումները և սպասումները, վարկային ռիսկի վրա հավանական ազդեցություն ունեցող էկզոգեն/էնդոգեն գործոնների դինամիկան և կիրառելով վերջիններիս ազդեցությունը բանկի առանձին բիզնես ուղղությունների վարկային պորտֆելի ռիսկի վրա գնահատող վիճակագրական տարբեր մոդելներ և հիփոթեզներ, նպատակ ունի կանխատեսել վարկային ռիսկի ախորժակի հնարավոր խախտումները գործնականում քիչ հնարավոր, սակայն տեսականորեն հավանականություն ունեցող սցենարներում, և ստացված արդյունքներն ինտեգրել բանկի ռազմավարական որոշումներում:

Արտարժութային ռիսկի սթրես թեստավորման համակարգը միտված է արտարժութային փոխարժեքների սթրես սցենարային տատանումներից բխող հնարավոր կորստի գնահատմանը: Վիճակագրական մի շարք գործիքների կիրառման միջոցով (VaR, ES և այլն) գնահատվում է արտարժութային ռիսկի հետևանքով առաջացող հնարավոր կորուստը վստահության բարձր միջակայքերում:

Տոկոսադրույքի ռիսկ – հաշվի առնելով, որ բանկի տոկոսադրույքի ռիսկի կառավարման համակարգն ունի 2 ուղղություն (Banking Book & Trading Book)՝ սթրես թեստավորման համակարգը ևս միտված է տոկոսադրույքների սթրես-սցենարային տատանման նկատմամբ բանկի Trading և Banking Book-երում ներառվող ակտիվների/պարտավորությունների զգայունության գնահատմանը դյուրացիայի մեթոդի միջոցով:

Իրացվելիության ռիսկի սթրես թեստավորման համակարգը միտված է ցածր և միևնույն ժամանակ տեսական հավանականություն ունեցող սթրես սցենարային իրավիճակում բանկի իրացվելիության մակարդակի գնահատմանը: Սթրես թեստավորման արդյունքները հիմք են հանդիսանում նաև իրացելիության բուֆերների սահմանման համար:

Գործառնական ռիսկի սթրես թեստավորման համակարգը տարբեր սթրեսային իրավիճակների ի հայտ գալու դեպքում գնահատում է գործառնական ռիսկի գծով հնարավոր կորուստը: Բանկի գործառնական ռիսկերի սթրես թեստավորումը իրականացվում է պատմական մեթոդով:

Կապիտալի համարժեքության սթրես թեստավորման համակարգում ամփոփվում են վերջինիս վրա ուղղակի ազդեցություն ունեցող ռիսկերի սթրես-թեստավորման արդյունքները, ինչի միջոցով գնահատվում է յուրաքանչյուր ռիսկի գծով սթրեսային իրավիճակի համատեղ հանդես գալու դեպքում բանկի կապիտալի համարժեքությունը:

Համաձայն 2023թ.-ի ավարտի դրությամբ սթրես թեստավորման արդյունքերի՝ կարելի է փաստել, որ անգամ ցածր հավանականություն ունեցող սցենարային իրավիճակներում բանկը պահպանում է կապիտալի համարժեքության և իրացվելիության բավարար մակարդակ:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ռիսկերի կառավարման համակարգը

2023թ.-ին բանկը ռիսկերի կառավարման համակարգին ինտեգրել է ռիսկի ախորժակի և կապիտալի համարժեքության գնահատման նոր և առավել ընդգրկուն համակարգեր: Գնահատելով կապիտալի վրա ուղղակի ազդեցություն ունեցող էական ռիսկերի գծով ակնկալվող և չակնկալվող կորստի մակարդակները՝ հաշվարկվել է բանկի կապիտալի համարժեքության ներքին բուֆերի պահանջվող մեծությունը, ինչը դրվել է ռիսկի ախորժակի համակարգի կառուցման հիմքում: Ռիսկի ախորժակի համակարգի հիման վրա ներդրվել է Ահազանգման նոր քաղաքականություն՝ միտված ռիսկի գործոնների վաղաժամ բացահայտմանը և կանխարգելիչ գործողությունների մշակմանը:

Ռիսկի ախորժակի համակարգ

Բանկի ռիսկի ախորժակի հայտարարությամբ սահմանվել են իրացվելիության և տոկոսադրույքի ռիսկերը բնութագրող մի շարք սահմանաչափեր՝ բարձրացնելով նշված ռիսկերի կառավարման համակարգերի արդյունավետությունը:

Սթրես թեստավորում

Բարելավվել է Տոկոսադրույքի ռիսկի սթրես թեստավորման համակարգը. շուկայական տոկոսադրույքների հնարավոր տատանումների նկատմամբ ակտիվների/պարտավորությունների զգայունության գնահատման մեթոդները տարանջատվել են ըստ Trading և Banking Book-երի:

Վարկունակության գնահատման համակարգեր

Մանրածախ բիզնես ուղղության որոշումների կայացման համակարգի համար մշակվել է մեքենայական ուսուցման և արհեստական բանականության ալգորիթմի կիրառմամբ նոր սքորինգային մոդել, որը նպատակաուղղված է վարկային ռիսկի գնահատման և վարկավորման որոշումների կայացման արդյունավետության բարձրացմանը:

Համակարգերի ավտոմատացում

Տարվա ընթացքում ավտոմատացվել է IFRS 9 շրջանակներում ECL հաշվարկման գործընթացը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Մենք հպարտ ենք մեր կորպորատիվ բարեգործության և փոխօգնության արմատներով և աջակցում ենք Հայաստանի բոլոր համայնքներում տնտեսությանը, ձեռներեցությանը և նորարարությանը, ինչպես նաև մարզերի ու գյուղական համայնքների կայուն զարգացմանն ու բարեկարգմանը:

Ակբան աջակցում է բոլորին՝ անկախ եկամտի մեծությունից, զբաղվածությունից, անհատներից մինչև խոշորագույն կազմակերպություններ: Սա է պատճառը, որ Ակբան մեծ նշանակություն է տալիս կորպորատիվ բարեգործությանը և ունի սոցիալական բարձր պատասխանատվություն:

Ակբա բանկի կորպորատիվ բարեգործության հիմնական ուղղություններն են՝



Ակբան հաճախ են կոչում **«բարի բանկ»**: Եվ մենք ուրախ ենք, որ արժանացել ենք այդ գնահատականին: Ստեղծման օրվանից ի վեր կորպորատիվ բարեգործական եղել է մեր բանկի գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը: Մեր կորպորատիվ բարեգործական ծրագրերն իրականացվում են ոչ միայն բանկի կողմից կամ բանկի նախագծերի շրջանակում, այլ նաև «Ստեփան Գիշյան» և «Հայաստան համահայկական» հիմնադրամների հետ համատեղ: Մեր գործունեության թիրախում են Հայաստանի համայնքներում առկա ամենակարևոր սոցիալական մարտահրավերները, որոնք հաճախ բարդացնում են տեղի բնակիչների կյանքը: Մենք իրականացնում ենք ծրագրեր, որոնք երկարաժամկետ ազդեցություն ունեն համայնքի վրա, ինչպես օրինակ՝ վերականգնվող էներգիայի աղբյուրներով ապահովումը, բնակելի շենքերի կառուցումը, մանկական խնամքի կենտրոններին աջակցությունը և այլն: Մենք հավատում ենք, որ ամեն բարի գործ վարակիչ է ու շղթայական տարածվում է:

2023թ.-ի ընթացքում Ակբա բանկը ոչ միայն շարունակել է նախորդ տարում մեկնարկած կորպորատիվ բարեգործական ծրագրերը, այլև նախաձեռնել է նորերը:

2023թ.-ի ընթացքում **«Վիզա Բարերար»** ծրագրի շրջանակում իրականացվել է 5 ծրագիր.

- Գյումրիի ՄՈՒԾ-2 թաղամասում նախորդ տարի մեկնարկած սոցիալական բազմաբնակարան շենքերի կառուցումից հետո թաղամասի 3-րդ և 4-րդ մասնաշենքերի կահավորում,
- Իջևան խոշորացված համայնքի Բերքաբեր բնակավայրում արտաքին լուսավորության ծրագիր,
- Երևանի պետական համալսարանում լսարանների կահավորում,
- ՍՕՍ Մանկական գյուղերի (Կոտայք և Իջևան) երեխաների համար ամառային հանգստի կազմակերպում,
- «ՌեԱնիմանիա» անիմացիոն ֆիլմերի փառատոնի կազմակերպում:

Բացի այս, բանկը Լոռու մարզի Ուրասար գյուղում իրականացրեց խոշոր ծառատունկ՝ նպաստելով Հայաստանի բնության պահպանությանն ու զարգացմանը: Ֆրանսահայ բժիշկների հետ Ակբան շարունակեց արդեն ավանդույթ դարձած «Ակնոցներ Հայաստանի համար» ծրագիրը, այս անգամ՝ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքում: Ծրագրի շնորհիվ ավելի քան 300 երեխա հետազոտվեց և ըստ անհրաժեշտության ստացավ ակնոցներ:

2023թ.-ի ընթացքում Ակբա բանկը շարունակել է իրականացնել նախորդում մեկնարկած կորպորատիվ բարեգործական ծրագրերը: 2015թ.-ից սկսած առ այսօր Հայաստանում գործող արտադրողները հնարավորություն ունեն մասնակցել Ակբա բանկի և Գերմանիայի բնության պահպանության միության (NABU) «Օրգանական գյուղատնտեսության զարգացում» համատեղ ծրագրին: Ակբայի և Գերմանիայի բնության պահպանության միության՝ համատեղ «Օրգանական գյուղատնտեսության զարգացում» ծրագրի շրջանակում, հայ արտադրողները հնարավորություն են ստանում սերտիֆիկացնել իրենց արտադրանքը, մասնակցել միջազգային ցուցահանդեսների, ինչպես նաև զգալիորեն մեծացնել արտահանման հնարավորություններն ու ներկայացնել իրենց արտադրանքը եվրոպական շուկայում:

2023թ.-ին հայաստանյան շուրջ 15 արտադրող բանկի և NABU-ի համատեղ ծրագրի միջոցով ստացել է օրգանական սնունդ արտադրողի հավաստագիր՝ այդպիսով հնարավորություն ստանալով դուրս գալ ավելի մեծ շուկա և զարգացնել իրենց բիզնեսը:

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Մենք վարում ենք մեր բիզնեսը՝ նպաստելով մեր հաճախորդների, հասարակության և այլ շահագրգիռ կողմերի կայուն զարգացմանը:

Բնապահպանական, սոցիալական և կառավարման (ESG) վերաբերյալ մեր մոտեցումը ձևավորվում է մեր նպատակների ու արժեքների հիման վրա, ինչպես նաև մեր շահառուների համար կայուն և երկարաժամկետ արժեք ստեղծելու ցանկությամբ:

Մենք հասկանում ենք, որ կլիման, տնտեսությունը, հասարակությունը, մատակարարման շղթաները և մարդկանց կյանքը փոխկապակցված են:

Մենք գիտակցում ենք, որ կարող ենք կարևոր դեր խաղալ կայուն զարգացման դեմ մարտահրավերների այս պայքարում:

1997թ.-ին Ակբա բանկի ստեղծման հիմքում ընկած էր սոցիալական փոխօգնության գաղափարը: Այդ գաղափարի շուրջ համախմբվել են **77,500** գյուղաբնակներ, ովքեր առ այսօր էլ հանդիսանում են բանկի վերջնական սեփականատերերը: Ակբայի առաքելության հիմքում ընկած է ինքնատիպ և նորարար լուծումներով հասարակության կայուն զարգացմանը նպաստելու գաղափարը: Կայուն զարգացման օրակարգը եղել է բանկի ստեղծման հիմնաքարերից մեկը և այժմ հանդիսանում է զարգացման կարևորագույն հեռանկարը:

2011թ.-ին Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (IFC) հետ համատեղ մշակվել և ներդրվել է Սոցիալական և շրջակա միջավայրի (ՍԸՄ) ռիսկերի կառավարման համակարգը: Այն մշակվել է միջազգային լավագույն փորձի հիման վրա և առնվազն յուրաքանչյուր տարի վերանայվում է ու թարմացվում արդի պահանջներին համընթաց:

I. Ըստ այդ ընթացակարգի՝ բանկի ներքին ծրագրերում ներդրված է համակարգ, որն ինքնաշխատ եղանակով ելակետային տվյալների հիման վրա վարկերը դասակարգում է ըստ ՍԸՄ ռիսկի դասի՝ ցածր, միջին կամ բարձր:

II. Բանկի ներքին ընթացակարգերում, միջազգային լավագույն փորձի համաձայն, հստակ սահմանվում են չֆինանսավորվող ոլորտները, օրինակ՝ վիճակախաղեր ու խաղատներ, վնասակար կամ չարաշահող բնույթի հարկադիր աշխատանք, երեխաների աշխատուժ պարունակող գործունեություններ, զենքի ու զինամթերքի արտադրություն, և այլն:

III. Բանկը չի ֆինանսավորում ՀՀ օրենսդրությամբ և/կամ միջազգային պայմանագրերով արգելված ապրանք-

ների արտադրությունը կամ վաճառքը, ինչպիսիք են վտանգավոր դեղորայքը, պեստիցիդները/հերբիցիդները կամ քիմիական նյութերը, օզոնային շերտը քայքայող նյութերը, պոլիքլորինացված դիֆենիլ (PCBs) պարունակող նյութերը, վայրի բնության տարրերն ու CITES կոնվենցիայով կարգավորվող կենդանիները, բույսերը և միջազգային օրենքներով արգելված թափոնների տեղափոխումը երկրի սահմաններից դուրս:

IV. Տարիների և միջազգային փորձից ելնելով՝ բանկը վարկային պայմանագրերում ներառել է ՍԵՄ-ին առնչվող դրույթներ, որոնք խախտելու դեպքում վարկը հետ է կանչվում: Սա հստակ ազդակ է վարկառուին, որ բանկը բարձր է գնահատում ՍԵՄ ռիսկերը և հետևողական է լինելու դրանց պահպանմանն ու ռիսկերի նվազեցմանը:

Բանկը հետևողական է ու կարևորում է կայուն զարգացումը թե՛ ներքին, թե՛ արտաքին գործառույթներում: Սրա վառ օրինակ է բանկի նոր գլխամասային շենքը, որը կառուցվում է LEED Gold ստանդարտի համաձայն և պատրաստ կլինի 2025թ.-ին: Շենքը կառուցվում է Երևան քաղաքի արվարձանում՝ Ծովակալ Իսակով պողոտայում՝ նպատակ ունենալով լրացուցիչ չծանրաբեռնել կետրոնը և զարգացնել քաղաքի ծայրամասը:

Բանկի **65** մասնաճյուղերից **44-ը** գտնվում են մարզերում:

Կարևորելով ՀՀ համաչափ զարգացումը՝ բանկը հանդիսանում է միակ ֆինանսական կառույցը, որը ֆինանսավորում է համայնքների էներգախնայող միջոցառումները և նախաձեռնությունները:

V. Ներկայումս բանկում մեկնարկել է կանաչ պարտատոմսերի թողարկման և կանաչ վարկավորման գործընթացը՝ հաճախորդներին դարձնելով իր կայուն զարգացմանն ուղղված քաղաքականության կարևոր մասը:

VI. Բանկի կենտրոնական գրասենյակում և Երևանի մասնաճյուղերում տեղադրված են աղբի տեսակավորման աղբամաններ:

VII. 2023թ.-ին բանկը միացել է ՀՀ Կենտրոնական բանկի և Հայաստանի բանկերի միության կողմից ՀՀ դրամի 30-ամյակի առթիվ նախաձեռնված «Իմ անտառ Հայաստանի» ծրագրին՝ հիմնելով 50 հա անտառ Լոռու մարզի Ջրաշեն և Ուրասար համայնքներում՝ տնկելով 160,000 ծառ (կաղնի, թխկի, հաճարենի, լորենի, վայրի տանձ, վայրի խնձոր, ընկուզենի, բոխի և այլ ծառատեսակներ):

VIII. 2023թ.-ին Visa Բարերար ծրագրի շրջանակում բանկը 50կՎտ արևային կայան է կառուցել Իջևանի «ՍՈՍ-Մանկական գյուղում», իսկ 2018թ.-ին նույն ծրագրով արևային ջրատաքացուցիչներ են տեղադրվել: Գյումրիում կառուցվել են բազմաբնակարան շենքեր, տանիքները կառուցվել են հատուկ թեքությամբ՝ թույլ տալով տեղադրել արևային պանելներ շենքի տանիքին:

Ֆինանսական գործիքների մշակման և դրանք հաճախորդներին մատուցման գործընթացում Ակբան կարևորում է անձնակազմի գիտելիքները շրջակա միջավայրի ազդեցության վերաբերյալ: Այդ նպատակով բանկի ներկայացուցիչները պարբերաբար մասնակցում են տարբեր միջազգային սեմինարների, համաժողովների, նախաձեռնում և բանկը հովանավորում է աշխատակիցների վերապատրաստման դասընթացները:

Կայուն զարգացման չափանիշները ներդրված են ոչ միայն ՓՄՁ և կորպորատիվ, այլև գյուղատնտեսական ու մանրածախ վարկավորման շրջանակներում:

ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ

Ակբա բանկի տարեսկզբին սահմանած կարևորագույն ռազմավարական ուղղություններից էր մանրածախ բիզնեսը: Ոլորտի խթանմանն ուղղված գործողությունները համահունչ էին բանկի ներկայիս ռազմավարական մոտեցմանը՝ նորարական լուծումներով շարունակել ուղղությունը թվայնացնելու և ավտոմատիզացնելու մեր ջանքերը՝ հաճախորդներին ու գործընկերներին առաջարկելով ժամանակակից և հարմար լուծումներ:

2023թ.-ի ընթացքում բանկի մանրածախ բիզնեսում ձեռնարկված գործողությունները հիմնականում ուղղված են եղել.

- **սպասարկման որակի բարձրացմանը.** պրոդուկտները թվային հարթակում դարձել են առավել հարմարավետ՝ նպաստելով բանկի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը և պրոդուկտներն ավելի մատչելի սակագներով տրամադրելուն,
- **արհեստական բանականության կիրառման միջոցով վարկավորման գործընթացում կիրառվող տվյալների ավտոմատ մշակմանը՝** նպաստելով վարկավորման գործընթացի արդյունավետության բարձրացմանը,
- **վարկերի տրամադրման համար կիրառվող միջնորդավճարների չեղարկմանը՝** համահունչ լինելով թափանցիկության և հաճախորդակենտրոն լինելու քաղաքականությանը:

Վարկավորման գործընթացում կատարված փոփոխությունները նպաստել են վարկային դիմումների մոտ **30%**-ի տեղափոխմանը թվային հարթակ:

Կարևորելով ՀՀ սահմանամերձ գյուղական բնակավայրերի հավասարաչափ և կայուն զարգացումը, 2023թ.-ի երկրորդ կիսամյակում մեկնարկ տրվեց մի կարևոր նախաձեռնության. համագործակցելով ՀՀ կառավարության հետ՝ սահմանամերձ գյուղական բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակում հաշվետու ժամանակահատվածում տրամադրեցինք վարկեր ավելի քան **90** ընտանիքի:

Մանրածախ ակտիվ հաճախորդների թիվ

2021	2022	2023
	↗ +24.5%	↗ +53.5%
213,792	**266,137**	**408,626**

2023թ.-ի վերջին բանկի մանրածախ բիզնեսի հաճախորդների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է **53.5%**-ով՝ հասնելով **408,626**-ի:

Սպառողական վարկերի ծավալը

(մլրդ ՀՀ դրամ)



ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ

Հիփոթեքային վարկերի ծավալը

(մլրդ ՀՀ դրամ)



- Առաջնորդվելով բարձր սոցիալական պատասխանատվության արժեքներով՝ բանկը 2023թ.-ին շարունակել է մասնակցել **«Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճար տրամադրելու պետություն-մասնավոր սոցիալական փոխգործակցության»** ծրագրին: 2023թ.-ի ընթացքում կենսաթոշակառուներին բանկի կողմից վճարվել է **518 մլն ՀՀ դրամի** չափով հետվճարի գումար:
- Մշտապես կարևորելով հաճախորդների հանդեպ հոգատարությունը՝ Արցախից տեղահանված քաղաքացիներին բանկը տրամադրել է միջազգային քարտեր՝ անվճար տրամադրման, սպասարկման, բանկի բանկոմատներում և կանխիկացման կետերում կանխիկացման հնարավորությամբ, ինչպես նաև կազմակերպել է քարտերի անվճար առաքման գործընթացը: Ծրագրի շրջանակում բանկը սպասարկում է ավելի քան **5,082** քարտապանի, որոնց թիվը շարունակաբար աճում է:

ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

Մանրածախ բիզնեսի ավանդային պորտֆել

(մլրդ ՀՀ դրամ)



ՔԱՐՏԱՅԻՆ ՊՐՈԴՈՒԿՏՆԵՐ

- Ներդրվել է **Mastercard Digital First** քարտային նոր պրոդուկտը, որը նախատեսված է առցանց վճարումներ իրականացնելու համար: Այս ներդրման շնորհիվ հնարավոր է դառնալ բանկի քարտապան հաշված րոպեների ընթացքում և օգտվել քարտի բոլոր հնարավորություններից՝ առանց դրա ֆիզիկական առկայության: Ներկայումս բանկում սպասարկվում է մոտ **4,000** նոր թվային քարտ:

- **Visa Բարերար** քարտերով կատարված վճարումների շնորհիվ բանկը իր հաշվից **94 մլն ՀՀ դրամ** է փոխանցել է «Հայաստան» համահայկական հիմնադրամին որոնք իրենց հերթին ուղղվելու են տարատեսակ ծրագրերի՝ ելնելով բանկի որդեգրած ԿՍՊ քաղաքականությունից:

- Ներդրվել է **American Express** քարտերի թոքենիզացման հնարավորություն, ինչի շնորհիվ American Express քարտատերերը հնարավորություն ունեն կատարել անհպում վճարումներ հեռախոսով:



ՓՄՁ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ

2023թ.-ի ընթացքում բանկը ՓՄՁ բիզնեսների ոլորտում ծավալել է արդյունավետ և հեռանկարային գործունեություն: Գործունեությունը մասնավորապես ուղղված է եղել պրոդուկտների և ծառայությունների թվայնացմանը և «կայուն» զարգացման լավագույն միջազգային փորձին համապատասխանության ապահովմանը:

2023թ.-ին մի շարք փոփոխություններ են իրականացվել բիզնես վարկերի պայմաններում, որոնք ուղղված են եղել պրոդուկտի պայմանների բարելավմանը և գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Պարբերաբար իրականացվել են ոլորտային ուսումնասիրություններ, որոնց արդյունքում զարգացմանն ուղղված միջոցառումները համընթաց են եղել շուկայում գործող միտումներին:

Ամրապնդվել են գործընկերային հարաբերությունները ՀՀ Կառավարության և միջազգային գործընկերների հետ:

Շարունակվել է ՀՀ Կառավարության հետ համագործակցությունը՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակում: 2023թ.-ին այս ծրագրով վերամշակում իրականացվող բիզնեսներին տրամադրվել է շուրջ **986 մլն ՀՀ դրամի** չափով վարկ:

Բանկի կողմից EBRD-ից ներգրավված միջոցներով մարզային տնտեսություններին և կանաչ նախագծերին զուգահեռ ֆինանսավորվել են նաև կին գործարարներ, ում համար բանկի կողմից ծրագրի մեկնարկը տրվել է սեմինար-միջոցառմամբ: Միջոցառման ընթացքում ներկայացվել են վարկավորման պայմանները և բանկի կողմից առաջարկվող արտոնյալ հնարավորությունները՝ ֆինանսների հասանելիությունը բոլորի համար հավասար դարձնելու նպատակով:

Ակտիվ բիզնես հաճախորդների թիվ

2021	2022	2023
19,296	26,948	39,506
	↗ +39.7%	↗ +46.6%

2023թ.-ի տարեվերջին ակտիվ բիզնես հաճախորդների քանակը նախորդ տարվա համեմատ աճել է **46.6%**-ով:

Բիզնես հաճախորդների վարկային պորտֆել (մլրդ ՀՀ դրամ)



2023թ.-ի տարեվերջին բիզնես հաճախորդների գործող վարկային պորտֆելը նախորդ տարվա տարեվերջի համեմատ աճել է 25.8%-ով:

200 մլրդ ՀՀ դրամ ↗ +25,8%

Բիզնես հաճախորդների ավանդային պորտֆել (մլրդ ՀՀ դրամ)



2023թ.-ի տարեվերջին բիզնես հաճախորդների գործող ավանդային պորտֆելը նախորդ տարվա համեմատ աճել է 34.9%-ով:

85 մլրդ ՀՀ դրամ ↗ +34.9%

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2023թ.-ին բանկը շարունակել է խորացնել իր փորձառությունը **Կայուն զարգացման** ուղղությամբ:

Հաշվետու տարվա ընթացքում բանկը սահմանել է առաջիկա 5 տարիների Կայուն զարգացման հավակնությունները: Այդ նպատակով սահմանվել են թիրախներ և մշակվում է Կայուն զարգացման ռազմավարություն:

Մշակվել է և հաշվետու տարվա ընթացքում կներդրվի «Կանաչ վարկերի ընթացակարգ»: Ընթացակարգը սահմանում է «կանաչ» վարկերի չափանիշները և հնարավորություն է տալիս դասակարգել վարկերը ըստ «կանաչ» և «ոչ կանաչ» տեսակների: Դասակարգման արդյունքում հնարավոր է լինելու նաև գնահատել «կանաչ» վարկերի արդյունքում նվազած CO_2-ի արտանետման ծավալը:

Մշակվել է նաև «Կանաչ պարտատոմսերի հայեցակարգ», որը հնարավորություն է ընձեռում բանկին թողարկել «կանաչ» պարտատոմսեր:

2023 թ.-ին բանկը նախաձեռնել է «Կայուն զարգացման» հաշվետվության թողարկման ուղղությամբ աշխատանքներ: Սահմանվել է հաշվետվության ստանդարտը և հաշվետվության ձևաչափը:

Բանկի անձնակազմի տեղեկատվությունը բարձրացնելու նպատակով մշակվել և անցկացվել են դասընթացներ «Կայուն զարգացման» վերաբերյալ:

Ակբա բանկն իր գործունեության ավելի քան 25 տարիների ընթացքում մշտապես մանրակրկիտ ուսումնասիրել է բանկի կողմից ֆինանսավորվող յուրաքանչյուր նախագիծ՝ ուշադրության կենտրոնում պահելով սոցիալական և բնապահպանական ռիսկերը, ուստի կայուն զարգացումը ճիշտ տրամաբանական շարունակությունն է բանկի ստեղծման և ողջ գործունեության գաղափարախոսության:

ԲԻԶՆԵՍ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՓՄՁ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ոչ ֆինանսական ծառայությունների շրջանակներում՝ 2023թ.-ին անցկացվել են **19 բիզնես դասընթացներ**, որոնց ներկա են եղել **402** մասնակիցներ **191** կազմակերպություններից: Նախորդ տարվա համեմատությամբ մասնակիցների թիվն աճել է **24%**-ով:

2013թ.-ից սկսած Ակբա բանկը Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման նպատակով կազմակերպում է անվճար բիզնես դասընթացների շարք: Առ այսօր բանկի կողմից անցկացվել է **142 բիզնես դասընթաց**, որին մասնակցել է շուրջ **2,200 ՓՄՁ** ղեկավար ավելի քան **1,100** ընկերություններից: Ակբա բանկի բիզնես դասընթացներին հնարավորություն ունեն մասնակցել Հայաստանում գրանցված բոլոր ՓՄՁ-ների ղեկավարները և որոշում կայացնող անձինք:

2023թ.-ին մեկնարկեց **«Ակբա Բիզնես ակումբի»** գործունեությունը: **«Ակբա Բիզնես ակումբի»** շրջանակներում իրականացվեց **3** միջոցառում: 2023թ.-ի դրությամբ ակումբի անդամների թիվը **97-ն** է: **«Ակբա Բիզնես ակումբի»** անդամները հնարավորություն են ունեցել մասնակցել նաև այլ միջոցառումների, սեմինարների ու համաժողովների: Ակումբի շրջանակներում հուշագրեր են կնքվել Հայաստանի Հաշվապահների Ասոցիացիայի, Հայաստանի ներդրումային խորհրդի և ՏՀՏ գործատուների միության հետ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ

Գյուղատնտեսության կայուն զարգացումն ու Հայաստանի գյուղատնտեսական բիզնեսների հեռանկարային աճն ու բարելավումը, ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս Ակբա բանկի առաջնահերթ ռազմավարական ուղղություններից էր: Հաշվետու տարվա ընթացքում շարունակել ենք ակտիվորեն նախաձեռնել և իրականացնել մի շարք միջոցառումներ և նախագծեր: Բանկը ներկայացրել է մի շարք նորարարական ֆինանսական լուծումներ և առաջարկներ, որոնք, Կառավարության հետ սերտ համագործակցության շրջանակում, միտված են նպաստել ոլորտում բարեփոխումների և նոր հնարավորությունների առավել արդյունավետ կազմակերպմանն ու իրականացմանը:

- 2023թ.-ի տարեվերջի դրությամբ՝ գյուղատնտեսական դասի հաճախորդների թիվը կազմել է **108,684**՝ նախորդ տարվա համեմատ աճելով **16,053**-ով:
- 2023թ.-ի ընթացքում շարունակվել է բանկի և ՀՀ Կառավարության համագործակցությունը: Բանկի գյուղատնտեսական վարկերի ավելի քան **57%**-ը կազմել է պետական աջակցության ծրագրերով տրամադրված վարկերը:

Գյուղատնտեսական դասի հաճախորդների վարկային պորտֆելի դինամիկան՝ ըստ տարիների (մլրդ ՀՀ դրամ)



Գյուղատնտեսական դասի հաճախորդների վարկային պորտֆելը կազմում է **97 մլրդ ՀՀ դրամ**, իսկ բանկի պորտֆելում գյուղատնտեսական վարկային պորտֆելի տեսակարար կշիռը կազմում է **21.6%**:

97 մլրդ ՀՀ դրամ ↘ -17.1%

Գյուղատնտեսական դասի հաճախորդների ավանդային պորտֆելը
(մլրդ ՀՀ դրամ)



Գյուղատնտեսական դասի հաճախորդների ավանդային պորտֆելը տարեվերջին կազմել է ավելի քան **30 մլրդ ՀՀ դրամ**՝ նախորդ տարվա համեմատ աճելով **22%**-ով։

30 մլրդ ՀՀ դրամ ↗ +22.0%

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

Ակբա բանկի առաքելությունն է նորարար և ինքնատիպ լուծումներով նպաստել հասարակության կայուն զարգացմանը: Այս նպատակին հասնելու միջոցներից մեկը թվային նոր գործիքների ներմուծումն է ու բանկային համակարգի թվայնացումը: Այսպես բանկը հասանելի է դառնում իր հաճախորդին օրվա ցանկացած ժամին, ցանկացած վայրից:

2023թ.-ի ընթացքում Ակբա բանկը, շարունակելով ժամանակակից թվային բանկային ծառայությունների ներդրման և զարգացման ռազմավարությունը, իր հաճախորդներին ու օգտատերերին է ներկայացրել մի շարք նոր պրոդուկտներ և ծառայություններ:
Թվային լուծումների ներդրումը հաշվետու տարվա ընթացքում էականորեն բարձրացրել է գործարքների թվայնացման գործակիցը՝ տարեվերջի դրությամբ կազմելով **91.84%**:
2023թ.-ին acba digital հավելվածում ներդրվել են մի շարք նորարարական թվային պրոդուկտներ և ծառայություններ, որոնցից են.

1. **Բիոմետրիկ նույնականացմամբ հաճախորդների հեռահար գրանցում**

2. **acbaMax նոր թվային հարթակի գործարկում**

   acbaMax-ը հնարավորություն է տալիս մեկ սարքի միջոցով կատարել բանկոմատային, տերմինալային և տարադրամի փոխանակման գործարքներ: Թվային հարթակով կարելի է կատարել ավելի քան 100 վճարային գործարքներ.

   - տարադրամի փոխարկում
   - Ակբա հաշվի/քարտի համալրումներ, վարկի մարումներ
   - այլ բանկերի հաշվի/քարտի համալրումներ, վարկի մարումներ
   - կոմունալ վճարումներ
   - պետ. վճարումներ
   - մեքենայի վճարումներ
   - ինտերնետ և TV վճարումներ
   - այլ ծառայությունների վճարումներ, օրինակ՝ Globbing, list.am, auto.am և այլն
   - բարեգործական վճարներ

3. **Max Chatbot վիրտուալ օգնականի ներդրում**

4. **acba digital հավելվածում ոչ բանկային ֆինանսական ծառայությունների ներդրում**

   - Ճանապարհորդական ապահովագրություն
   - Վնասվածքների ապահովագրություն
   - Վիզա բաժանորդագրությունների և կցումների կառավարում

5. **acba digtal-ում նոր տեսակի վճարումների ավելացում**

   - ՀԿԱԾ արգելանքներ
   - Գույքահարկի վճարումներ
   - Ինտերնետ մատակարարների վճարումներ
   - Դոմոֆոնի վճարումներ

6. NFC տեխնոլոգիայի կիրառմամբ անհպում վճարումներ

- Google Pay վճարումներ
- Amex քարտատեսակներով վճարումներ Apple Pay-ի և Google Pay-ի միջոցով

7. acba digital հավելվածում գործող ֆունկցիաների բարելավումներ

- Իմ մեքենաներ բաժնի ներդրում
- Պատմություն բաժնի արդիականացում
- Քաղվածքներ բաժնի արդիականացում
- Ռուսերեն լեզվով հավելվածի գործարկում
- Մի շարք UX բարելավումներ
- Հեռահար եղանակով գաղտնաբառի վերականգնման գործընթացի արդիականացում
- Միջնորդավճարի հաշվեհամարի ընտրության պարզեցում

8. Հաճախորդի կոնտակտային տվյալների հեռահար եղանակով թարմացման հնարավորություն

Բարելավումների արդյունքում acba digital օգտատերերի քանակը շարունակում է աճել՝ կազմելով ավելի քան **400,000** օգտատեր:

2023թ.ի դեկտեմբերի վերջի դրությամբ բանկում կատարված ընդհանուր գործարքների շուրջ 89%-ը իրականացվել է բանկի թվային գործիքների միջոցով, մասնավորապես՝ գործարքների 44%-ը բաժին է ընկնում acba digital-ին, 7%-ը acba digital web տիրույթով իրականացված գործարքներին, 38%-ը՝ տերմինալով գործաքներին:

Մասնաճյուղերում կատարվող գործարքների կշիռը նվազել է **10%-ով**:

«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ

ԱԿԲԱ Լիզինգը Հայաստանում հիմնված առաջին լիզինգային ընկերությունն է, որը հանդիսանում է Հայաստանի լիզինգային շուկայի առաջատարը: Ընկերության առաջատարի կայուն դիրքը պայմանավորված է առաջարկվող ծառայությունների բարձր որակով, հաճախորդների և մատակարարների հետ կայուն և փոխշահավետ հարաբերություններով, ինչպես նաև գործունեության իրականացման արդյունավետությամբ:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.

ԱԿԲԱ Լիզինգը ֆինանսավորում է ՀՀ տնտեսության բոլոր ճյուղերը և Ակբա բանկի մասնաճյուղերի լայն ցանցի շնորհիվ ֆիզիկապես ներկա է Հայաստանի Հանրապետության բոլոր շրջաններում: Ընկերությունը սերտորեն համագործակցում է մատակարարների լայն շրջանակի հետ, ինչի արդյունքում ունի լիզինգի բավականին դիվերսիֆիկացված պորտֆել ինչպես ըստ մատակարարների, այնպես էլ՝ ըստ գույքի տեսակների: Ընկերությունն իր Գրին Լիզինգ ենթաբրենդի միջոցով բավականին հաջողված փորձ ունի կանաչ ֆինանսավորման ոլորտում, և լիզինգի պորտֆելի ավելի քան 52%-ը բաժին է ընկնում հենց կանաչ ֆինանսավորմանը: Շարունակում է ակտիվ համագործակցությունը ՀՀ կառավարության հետ իրականացվող պետական սուբսիդավորման ծրագրերի շրջանակում՝ որպես առաջատար ֆինանսական գործընկեր:

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ*



«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ի 100% բաժնետերն է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն:

Լիզինգային շուկայի շուրջ	**61%**
Ակտիվներ	**93.4** մլրդ ՀՀ դրամ, տարեկան աճը՝ 46%
Կապիտալ՝	**12.9** մլրդ ՀՀ դրամ, տարեկան աճը՝ 47%
Լիզինգի պորտֆել՝	**83.4** մլրդ ՀՀ դրամ, տարեկան աճը՝ 56%
Ակտիվների եկամտաբերություն՝	**4.31%** տարեկան աճը՝ 17.76%
Կապիտալի եկամտաբերություն՝	**36.02%** տարեկան աճը՝ 37.09%

Արդյունավետ աշխատանքի, նոր համագործակցությունների և իրականացված նախագծերի շնորհիվ՝ 2023թ.-ի վերջին լիզինգի պորտֆելը կազմել է **83.4 մլրդ ՀՀ դրամ** ապահովելով **56%** աճ նախորդ տարվա ցուցանիշի համեմատությամբ:

2023թ.-ի տարեվերջի դրությամբ՝ լիզինգի պորտֆելի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի ունեցել է հետևյալ պատկերը.

2023թ.-ի լիզինգային պորտֆելի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի

Շինարարություն	27.5%
Մննդի և խմիչքի արտադրություն	19.1%
Գյուղատնտեսություն	15.4%
Առևտուր	9.9%
Ֆինանսական վարձակալություն մանրածախ հաճախորդներին	1.5%
Ծառայություններ	4.3%
Արտադրություն	12.2%
Տրանսպորտ	5.3%
Կաշվե իրերի արտադրություն	0.1%
Ավիափոխադրումներ	0%
Հիդրոէլեկտրակայաններ	0%
Այլ	4.7%

Միևնույն ժամանակ, պորտֆելի կառուցվածքը՝ ըստ մարզերի 2023թ.-ի ընթացքում բաշխվել է հետևյալ կերպ.

2023թ.-ի լիզինգային պորտֆելի կառուցվածքը՝ ըստ մարզերի



Երևան	61.2%
Արմավիր	6.2%
Արարատ	7.8%
Շիրակ	2.1%
Վայոց Ձոր	3.9%
Արագածոտն	3.9%
Լոռի	2.1%
Կոտայք	5.3%
Տավուշ	1.2%
Սյունիք	1.2%
Գեղարքունիք	5.1%

ԳՐԻՆ ԼԻԶԻՆԳ

GREENLEASING

2023թ.-ի ընքացքում ԱԿԲԱ Լիզինգը իրականացրել է «կանաչ» նախագծերի **27.3 մլրդ ՀՀ դրամի** ֆինանսավորում՝ շարունակելով «Գրին Լիզինգ» ենթաբրենդի ներքո գրանցել բարձր ցուցանիշներ՝ «կանաչ» ներդրումների գործող պորտֆելը հասցնելով **46.43 մլրդ ՀՀ դրամի**, որը կազմել է լիզինգի գործող պորտֆելի ավելի քան 55.7%-ը:

2023թ.-ին ԱԿԲԱ Լիզինգը շարունակել է պետական սուբսիդավորման ծրագրի շրջանակներում ակտիվ ֆինանսավորումը՝ կնքելով **1,427** պայմանագիր, և ընդհանուր առմամբ տրամադրելով մոտ **47.5 մլրդ ՀՀ դրամի** չափով լիզինգ:

2023թ.-ի ապրիլին ԱԿԲԱ Լիզինգը նշեց իր **20 ամյակը**:

2023թ.-ի հունիսի 2-4-ը ԱԿԲԱ Լիզինգը ներկա գտնվեց **LEASING EXPO2023** ցուցահանդեսին, որի շրջանակներում 10-ից ավելի մատակարարների հետ միասին ներկայացրեց բացառիկ առաջարկներ:

2023թ.-ի սեպտեմբեր ամսին ԱԿԲԱ Լիզինգը, **«Իվի Մոթորս Գրուպ»**-ը և չինական **JAC** ընկերությունը ստորագրեցին համագործակցության հուշագիր:

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ

«Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն (Ամունդի-Ակբա) հիմնադրվել է 2013թ.-ին՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ և Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչ, ֆրանսիական «Ամունդի» բաժնետիրական ընկերության կողմից՝ համապատասխանաբար **49%** և **51%** բաժնեմասնակցությամբ:

2014թ.-ից ի վեր Ամունդի-Ակբան Հայաստանում երկարաժամկետ առաջատար ինստիտուցիոնալ ներդրող է, որը ճանաչված է առաջարկվող ծառայությունների և շահակիրների հետ հարաբերությունների բարձր որակով և թափանցիկությամբ, իր կազմակերպչական արդյունավետությամբ, ինչպես նաև կայուն զարգացման և սոցիալական պատասխանատվության հանձնառությամբ:

Ամունդի-Ակբան պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի շրջանակում կառավարում է 3 ֆոնդ՝ Հավասարակշռված (AMBAL), Պահպանողական (AMCON) և Կայուն եկամտային (AMFIX), որոնց հիմնական նպատակը ՀՀ օրենսդրության համաձայն ներդրումներ կատարելու միջոցով ակտիվների առավելագույն եկամտաբերության ապահովումն է՝ ռիսկերի ընդունելի մակարդակում:

2023թ.-ին ևս Ամունդի-Ակբան շարունակեց պահպանել ակտիվների կառավարման իր կայուն դիրքը

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Կառավարվող ակտիվների մեծությունը՝

417
մլրդ ՀՀ դրամ, տարեկան աճը՝ 43%

Մասնակիցների թիվը՝

452,313
տարեկան աճը՝ 39,780 կամ շուրջ 10%

Ստեղծման պահից կուտակային հատկացումների և եկամտի հարաբերակցություն՝

417
մլրդ ՀՀ դրամ ակտիվներից 343 մլրդ ՀՀ դրամը ձևավորվել է կուտակային հատկացումների հաշվին, իսկ 74 մլրդ ՀՀ դրամը (18%)՝ կառավարման արդյունքում գոյացած եկամտից:

Ամունդին ունի գրասենյակներ աշխարհի **35 երկրում**, իսկ տարածաշրջանում՝ միայն Հայաստանում:

Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթը Հայաստանում կառավարում է միայն պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդեր՝ հիմնվելով ֆրանսիական Ամունդիի առաջադեմ փորձառության և ֆոնդերի կառավարման ոլորտում մասնագիտական ու տեխնիկական աջակցության վրա:

2023թ.-ին Ամունդի-Ակբան կառավարման ներքո ուներ շուրջ **417 մլրդ ՀՀ դրամ** ակտիվներ:

Ակտիվների մեծությունը

(մլրդ ՀՀ դրամ)



2023թ.-ի ընթացքում Ամունդի-Ակբայի 3 կուտակային կենսաթոշակային ֆոնդերն էլ արձանագրել են դրական եկամտաբերություն՝ ապահովելով ստեղծման պահից **7.1% - 7.6%** միջին տարեկան եկամտաբերություն:

Ֆոնդերի եկամտաբերություն՝ ըստ տարիների

ՖՈՆԴ	Ստեղծման պահից միջին տարեկան	2023	2022	2021
ՀԱՎԱՍԱՐԱԿԾՈՎԱԾ	7.6%	14.6%	- 8.9%	3.6%
ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ	7.4%	14.3%	- 7.6%	3.1%
ԿԱՅՈՒՆ ԵԿԱՄՏԱՅԻՆ	7.1%	12.3%	- 3.5%	1.5%

«ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ

Ակբա Ֆեդերացիան հիմնադրվել է 2017թ.-ին մարզային 10 ԳՓՄՄ-ների կողմից՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ ու նպատակային դարձնել Ակբա ֆինանսական խմբի կորպորատիվ կառավարումը, ինչպես նաև մարզային միավորումներում ընդգրկված անդամների շրջանում ներդնել ու տարածել գյուղատնտեսության վարման ժամանակակից և առավել արդյունավետ մեթոդները:

Ֆեդերացիան իր գործունեությունը կազմակերպում է
5 հիմնական ուղղություններով.



Գործունեության այս ուղղությունները համահունչ են Հայաստանի գյուղատնտեսության հիմնական խնդիրների հետ և ուղղված են վերջիններիս հաղթահարմանը:
Ակբա Ֆեդերացիան դիտարկում է գյուղատնտեսությունը ոչ միայն որպես ավելացված արժեք տվող ոլորտ, այլև, առաջին հերթին, որպես բնագավառ, որի որակի և զարգացման մակարդակից է կախված բնակչության պարենային անվտանգությունը, գյուղական բնակավայրերի և Ակբա Ֆեդերացիայի բազմահազարանոց միավորման անդամների կենսամակարդակն ու զարգացման հնարավորությունները:

Գյուղացիական միավորումներում ընդգրկված անդամների երիտասարդացում

2023թ.-ի ընթացքում Ակբա Ֆեդերացիան մեծ աշխատաքներ է իրականացնել Գյուղացիական միավորումներում ընդգրկված անդամների երիտասարդացման և միավորումները առավել գրավիչ դարձնելու ուղղությամբ: Հաշվետու տարվա ընթացքում **633** գյուղերում նախաձեռնվեցին ժողովներ և հանդիպումներ միավորման անդամների հետ: 2023թ.-ի փետրվար-հունիս ամիսների ընթացքում տեղի ունեցան հաշվետու ժողովներ բոլոր 10 մարզային միավորումներում: Թարմացվեցին գյուղացիական մարզային միավորումների խորհուրդների կազմերը՝ ընդգրկելով ավելի երիտասարդ անդամներ: Արդյունքում՝ Միավորման խորհուրդների կազմի միջին տարիքը ներկայումս **56 տարեկանից դարձել է 47 տարեկան**:

Բարձրաժեք մշակաբույսերի մշակման վերաբերյալ դասընթացների կազմակերպում և իրականացում

Ավանդական գյուղատնտեսական մեթոդներով գյուղատնտեսության վարումը և նորարարական տեխնոլոգիաների ներդրման ու կիրառման ցածր մակարդակը հանգեցնում են գյուղատնտեսության արտադրողականության ցածր ցուցանիշների: **Ֆեդերացիան հաշվետու տարվա ընթացքում շարունակել է իր գործունեությունը բարձրաժեք մշակաբույսերի մշակման վերաբերյալ դասընթացների կազմակերպման և իրականացման ուղղությամբ:** «Կանաչ Արահետի» Ձորաղբյուրի, Հովքի և Հայկավանի կենտրոններում, IMPACT HUB Սյունիքի կենտրոնում (ք. Գորիս), Վայոց ձորում և Կապանում իրականացվել են բարձրարժեք մշակաբույսերի և կայուն գյուղատնտեսության, ինչպես նաև բարձրարժեք մեղվապահության վերաբերյալ դասընթացներ բոլոր մարզերի միավորման անդամ հանդիսացող 218 երիտասարդ ֆերմերների համար: Այս դասընթացները միտված են կատարելագործելու գյուղացիական տնտեսությունների ագրոնոմիական հմտությունները, զարգացնելու մարդկային կարողությունները՝ ձգտելով ներգրավել միավորման անդամ հանդիսացող առավել երիտասարդ ֆերմերային տնտեսություններին: Այս դասընթացների ընթացքում ֆերմերները գործարար կապեր են հաստատում, ստանում նոր գիտելիքներ և գյուղատնտեսական արտադրության նոր ուղղությունների զարգացման գործիքներ:

Գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացմանն ուղղված ստարտափերին աջակցություն

Ակբա Ֆեդերացիան 2023թ.-ի ընթացքում շարունակել է աշխատանքը երիտասարդների հետ, ովքեր ունեն գյուղատնտեսության կամ գյուղական համայնքների զարգացման հետ կապված ստարտափ գաղափարներ:

Ակբա Ֆեդերացիան 2023թ.-ին շարունակել է աջակցել երիտասարդներին նորարարական գաղափարների զարգացման գործում՝ ստեղծելով մի էկոհամակարգ, որտեղ երիտասարդները կարող են ներկայացնել իրենց գաղափարները և ստանալ աջակցություն դրանց իրագործման համար: Հաշվետու տարվա ընթացքում ընտրվել են 13 գյուղատնտեսական ստարտափ ծրագրեր, որոնք մեկ տարվա ընթացքում անցնելու են զարգացման փուլը ստարթափ ինկուբատոր հարթակում: Այս աշխատանքը Ֆեդերացիան կազմակերպում է Իմփաքթ Հաբ միջազգային կազմակերպության հետ: Գիտակցելով Հայաստանի հեռավոր մարզերի զարգացման կարևորությունը՝ Ակբա Ֆեդերացիան օժանդակել է Գորիս քաղաքում 2022թ.-ին հիմնադրված Իմփաքթ Հաբ Սյունիքի զարգացման տարբեր ծրագրերի հաջող իրականացմանը: Սյունիքի մարզում նմանատիպ էկոհամակարգի ստեղծումը հնարավոր եղավ Ակբա Ֆեդերացիայի և Եվրամիության համատեղ ֆինանսավորման արդյունքում: Այն կարճ ժամանակահատվածում դարձել է Սյունիքի երիտասարդության ներուժի բացահայտման և զարգացման աշխույժ կենտրոն: Ֆեդերացիան նախատեսում է նաև ակտիվ մասնակցություն ունենալ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում նմանատիպ կենտրոնի կայացման գործում:

Ակբա ֆեդերացիան 2023թ.-ի ընթացքում կազմակերպել է մի շարք այցելություններ Ֆեդերացիայի հետ համագործակցող նորարարարական տնտեսություններ՝ Հայաստանում միակ գործող խխունջաբուծական տնտեսություն («Սաննի Սնեյլս»), բարձր տեխնոլոգիաներով հագեցած մանրէաբանական լաբորատորիա («Վիպեկո»), արհեստական պայմաններում հիդրոպոնիկ եղանակով հյութալի անասնակերերի արտադրության սարքավորումների գործարան («ԱԷՈՆ»), բարձրարժեք մշակաբույսերի աճեցմամբ զբաղվող «Կանաչ Արահետ» ընկերություն և այլն: Տարվա ընթացքում կազմակերպվել է 18 այցելություն, որոնց մասնակցել են ԳՓՄՄ խորհրդի անդամները, երիտասարդ ֆերմերային տնտեսություններ և մի շարք միջազգային կազմակերպությունների աշխատակիցներ, ընդհանուր՝ **77 մասնակից**: Այս այցելությունների նպատակը նորարարական տեխնոլոգիաներով զարգացող ֆերմերային տնտեսություններին ծանոթացնել զարգացած երկրներում կիրառվող այս տեխնոլոգիաներին, ինչպես նաև խթանել վերջիններիս ներդրումը:

Գյուղական տուրիզմի զարգացում

Ներկայումս աշխարհում մեծ զարգացում է ապրում գյուղական տուրիզմը: **Հայաստանի 900-ից ավելի գյուղական համայնքներ օժտված են տուրիստական նշանակության օբյեկտներով, որոնք կարող են հնարավորություն ընձեռել գյուղացիական տնտեսություններին վաստակել լրացուցիչ եկամուտներ:** Այդ նպատակով Ֆեդերացիան շարունակեց 2018թ.-ին Գերմանիայի բնության պահպանության միության՝ ՆԱԲՈւ ընկերության հետ համատեղ սկիզբ դրված բազմամյա զարգացման ծրագիրը: Մեծ ծավալի աշխատանք է իրականացվել 2023թ.-ի ընթացքում. ուսումնասիրվել է գյուղական տուրիզմի զարգացման 185 հայտ, համատեղ կազմակերպվել է երկրորդ փուլ անցած դիմորդ տնտեսությունների այցելություններ Հայաստանի բոլոր մարզեր: Արդյունքում՝ ֆինանսական աջակցություն են ստացել գյուղական տուրիզմի զարգացման լավագույն 7 ծրագրերը: Ֆինանսական աջակցություն ստացած գյուղական տուրիզմի շահառուների տնտեսություններ տուրիստական հոսքի ավելացման նպատակով 2023թ.-ի սեպտեմբեր ամսվա ընթացքում կազմակերպվեց եվրոպական երկրներում գործող 8 հայտնի բլոգերների այցը Հայաստան: Այս բլոգերներն ունեն ավելի քան 1 մլն հետևորդներ և ընթերցողներ:

2023թ.-ի ընթացքում գյուղական տուրիզմի շահառու տնտեսությունների համար կազմակերպվեցին նաև մարզային սեմինար-դասախոսություններ ոլորտի մասնագետների կողմից, ներկայացվեցին գյուղական տուրիզմի առավել հաջողված միջազգային փորձը և փոխանցվեցին իրենց աշխատանքների բարելավմանն ուղղված արժեքավոր խորհուրդներ:

Գյուղատնտեսության թվայնացում

Գյուղատնտեսության թվայնացումը և թվային տեխնոլոգիաների կիրառության ավելացումը, ի թիվս այլ դրական արդյունքների, կարող են զգալիորեն բարձրացնել գյուղացիական տնտեսությունների արդյունավետությունը: Դրանք կարող են նաև նպաստել վերջիններիս արտադրանքը բարձրակարգ շուկաներ արտահանելուն, շուկայական նոր կապեր հաստատելուն, ինչպես նաև դրանց ընլայմանը:

Մենք այս տարի շարունակեցինք **«Կորիզ»** բջջային հավելվածի զարգացմանը և կատարելագործմանն ուղղված աշխատանքները: 2023թ.-ի դրությամբ բջջային հավելվածի միջոցով վաճառող ֆերմերների թիվը կազմել է **254**, գրանցվել է **3,541 օգտատեր** և ներկայացվող արտադրանքների թիվը կազմել է **2,800**: Իրականացվել են մի շարք մարքեթինգային գործողություններ, որոնց նպատակն է եղել խթանել **«Կորիզ»** հարթակի վաճառքները, աշխատանքներ են տարվել հաճախորդների կարիքների ուսումնասիրության և սպասարկման բարելավման ուղղությամբ:

Գյուղատնտեսական ոլորտի զարգացման լուրջ խոչընդոտներից է գյուղմթերքների արտահանման խթանման թվային լուծումների, ինչպես նաև ենթակառուցվածքների ոչ բավարար զարգացվածության մակարդակը:

Հաշվի առնելով հայկական գինիների օրեցօր աճող որակը և այս ոլորտում գրանցված լուրջ հաջողությունները՝ Ֆեդերացիան Գերմանական GIZ-ի և Գինու Հիմնադրամի հետ համատեղ շարունակեց Եվրամիության տարածքում Հայկական գինիների արտահանման հարթակի առաջխաղացման և կատարելագործման աշխատանքները: Ակբա Ֆեդերացիայի մասնակցությունը այս համատեղ ծրագրին հնարավորություն է ընձեռնում միավորման անդամ հանդիսացող երիտասարդ գինեգործներին ապահովել իրացման նոր շուկաներ: Ծրագրի շրջանակում հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել է գինու համտես, որին մասնակցել են **91** փոքր և միջին արտադրողների **105** տեսակի գինիներ: Այս նախաձեռնության շրջանակում Բեռլին քաղաքում վարձակալվել է պահեստային տարածք, կազմակերպվել ընտրված գինիների խմբաքանակի բեռնափոխադրում Հայաստանից դեպի Բեռլին: Իրականացված մարքեթինգային միջոցառումների շնորհիվ այս նպատակով ստեղծված կայքի միջոցով ապահովվել է մոտ **2,000 շիշ** գինիների վաճառք, ինչը նախորդ տարվանից ավել է մոտ **75%**-ով:

Ֆեդերացիան աջակցեց նաև Գյուղական կյանքի և ավանդույթների ամենամյա փառատոնի անցկացմանը: Փառատոնը եզակի հարթակ է, որտեղ ֆերմերները, արտադրողները, գնորդները, տարբեր կազմակերպություններ և պոտենցիալ դոնորներ հանդիպում են համագործակցության և փորձի փոխանակման նպատակով: Փառատոնը հնարավորություն տվեց մասնակիցներին ներկայացնել հայկական, ազգային փոքրամասնությունների և այլ ազգերի մշակույթն ու ավանդույթները: Փառատոնին Ակբա Ֆեդերացիայի մասնակցությունը թույլ տվեց թվով **10** ֆերմերային տնտեսություններին և գյուղական տուրիզմի շահառուներին ներկայացնել իրենց արտադրանքը ավելի քան **25,000** այցելուներին:

Այս բարդ և արագ փոփոխվող ժամանակաշրջանում Ակբա Ֆեդերացիան շարունակելու է իր առաքելությունը Հայաստանի գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման ուղղությամբ: Այս համալիր գործողությունները միտված են բարձրացնելու ԳՓՄՄ անդամ հանդիսացող գյուղացիական տնտեսությունների մրցունակությունը և եկամտաբերությունը, նպատակ ունեն ոգևորել և հավատ ներշնչել սեփական ուժերի և գալիք նվաճումների նկատմամբ:

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ Բաժնետերերին և Խորհրդին

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝«Բանկ») և նրա դուստր ձեռնարկությունների (այսուհետև միասին՝ «Խումբ») համախմբված ֆինանսական վիճակն առ 2023թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև Խմբի՝ այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների:

Աուդիտի առարկան

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունն՝ առ 31 դեկտեմբերի 2023թ.,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը.
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, և
- համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների միջազգային վարքագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԽ Վարքագիրք») սկզբունքների, ինչպես նաև Աուդիտորի Պրոֆեսիոնալ Էթիկայի Վարքագրքի և Աուդիտորի անկախության գծով էթիկական պահանջների, որոնք կիրառելի են Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ: Մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ ՀԷՄՍԽ Վարքագրքին համապատասխան:

pwc

Մեր աուդիտի մոտեցումը

Նկարագիր

- Խմբի ընդհանուր էականությունը. 1,738,000 հազ. ՀՀ դրամ, որը ներկայացնում է մոտավորապես 5%-ը Խմբի 2023թ. շահույթ մինչև շահութահարկով հարկումից (ԸՄՀ):
- Մենք ամբողջ ծավալով աուդիտորական աշխատանք ենք իրականացրել Խմբի երկու նշանակալի բաղադրիչների գծով: Երրորդ բաղադրիչը գնահատվել է որպես ոչ նշանակալի, որի գծով համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի տեսանկյունից էական գործարքներ տեղի չեն ունեցել: Մեր աուդիտի շրջանակը ապահովել է մոտավորապես 100% ծածկույթ Խմբի տոկոսային և միջնորդավճարների եկամտի գծով և մոտավորապես 100% ծածկույթ Խմբի շահույթ մինչև շահութահարկով հարկումի գծով:
- Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում առավել բարձր նշանակալիություն ունեցող աուդիտի հարց է համարվել հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող վարկային կորստի պահուստը:

Մեր աուդիտի նախագծման շրջանակներում մենք սահմանել ենք էականությունը և գնահատել ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը: Մասնավորապես, մենք դիտարկել ենք այն ոլորտները, որտեղ ղեկավարությունը կատարել է սուբյեկտիվ դատողություններ, օրինակ, նշանակալի հաշվապահական գնահատումների առնչությամբ, որոնք պահանջում են ենթադրություններ և իրենց էությամբ անորոշ ապագա իրադարձությունների դիտարկում: Ինչպես մեր բոլոր աուդիտների դեպքում, մենք նաև անդրադարձել ենք ղեկավարության կողմից ներքին հսկողության շրջանցման ռիսկերին, ներառյալ, ի թիվս այլ հարցերի, դիտարկել ենք, թե արդյոք առկա են կողմնակալության վկայություններ, որոնք պարունակում են խարդախության հետևանքով էական խեղաթյուրման ռիսկ:

Էականություն

Մեր աուդիտի շրջանակի վրա ազդեցություն է ունեցել մեր կողմից էականության սկզբունքի կիրառումը: Աուդիտը նախագծվում է այնպես, որ ձեռք բերվի ողջամիտ հավաստիացում առ այն, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից: Խեղաթյուրումներ կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով: Խեղաթյուրումները համարվում են էական, եթե կարելի է ողջամտորեն ակնկալել, որ դրանք առանձին, կամ միասին վերցված, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Մեր մասնագիտական դատողության հիման վրա մենք սահմանել ենք էականության որոշակի քանակական շեմեր, ներառյալ՝ Խմբի գծով ընդհանուր էականությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, որպես ամբողջություն, ինչպես ներկայացված է ստորև բերված աղյուսակում: Դրանց միջոցով, որակական նկատառումների հետ միասին, մենք որոշել ենք մեր աուդիտի շրջանակը և մեր աուդիտորական ընթացակարգերի բնույթը, ժամկետները և ծավալը, և գնահատել ինչպես առանձին, այնպես էլ միասին վերցված՝ խեղաթյուրումների ազդեցությունը, եթե առկա է, համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա, որպես ամբողջություն:

Խմբի գծով ընդհանուր էականությունը	1,738,000 հազ. ՀՀ դրամ
Ինչպես է այն որոշվել	տարեկան ՇՄՀ-ի 5%-ը
Էականության համեմատական մեծության որոշման հիմնավորումը	Մենք որպես համեմատական մեծություն ընտրել ենք ՇՄՀ-ն, քանի որ, մեր կարծիքով, դա այն չափորոշիչն է, որի միջոցով Խմբի կատարողական արդյունքները առավել հաճախ գնահատվում են օգտագործողների կողմից, և հանդիսանում է համընդհանուր ընդունված չափանիշ: Մենք ընտրել ենք 5%-ը, ինչը համապատասխանում է ֆինանսական ծառայությունների ոլորտի՝ շահույթ հետապնդող ընկերությունների համար օգտագործվող քանակական էականության շեմերին:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի են եղել ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ընդհանուր առմամբ համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում և հաշվետվությունների վերաբերյալ կարծիքի ձևավորման համար, և մենք չենք արտահայտում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

Աուդիտի առանցքային հարց	Ինչպես է աուդիտի առանցքային հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացքում
Հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող վարկային կորստի պահուստ Տե՛ս Ծանոթագրություն 4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթներ, Ծանոթագրություն 5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գծով առանցքային գնահատականներ և դատողություններ և Ծանոթագրություն 12. Հաճախորդներին տրված վարկեր Մենք առանձնահատուկ անդրադառձել ենք այս ոլորտին, քանի որ հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող վարկային կորուստների («ԱՎԿ») պահուստների վերաբերյալ ղեկավարության գնահատումները և ենթադրությունները բարդ են և պահանջում են դատողության զգալի աստիճան: Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ղեկավարությունից պահանջվում է գնահատել ԱՎԿ պահուստ՝ համապատասխան այն կորուստներին, որոնք ակնկալվում է, որ տեղի կունենան Փուլ 1 վարկերի գծով առաջիկա 12 ամիսների ընթացքում, և Փուլ 2 և 3 վարկերի գծով՝ ֆինանսական ակտիվի ողջ տևողության ընթացքում: Ղեկավարությունը նաև հաշվի է առնում ապագա տարբեր մակրոտնտեսական պայմանների ազդեցությունը ԱՎԿ-ի որոշման հարցում:	Մենք պատկերացում ենք ձեռք բերել և գնահատել ենք ԱՎԿ պահուստի որոշման հիմնական հսկողությունների նախագծման վերաբերյալ, և ստուգել ենք դրանց գործառնական արդյունավետությունը: Այդ հսկողությունները ներառում էին, մասնավորապես. • Մոդելի կատարողական արդյունքների մշտադիտարկման նկատմամբ հսկողությունը, ներառյալ քաղաքականության և մոդելների պարբերական վերանայումները, փաստացի արդյունքների համեմատ մոդելի գնահատումների ստուգումները և մոդելի մեթոդաբանության փոփոխությունների հաստատումը, այդ թվում՝ հիմնական չափորոշիչների հաշվարկների նկատմամբ հսկողությունը հաշվարկային գործիքի միջոցով, • ԱՎԿ հաշվարկման և արդյունքների վերլուծության նկատմամբ հսկողությունը, և • ԱՎԿ հաշվարկների համար տվյալների փոխանցման նկատմամբ հսկողությունը: Ի լրումն, մենք իրականացրել ենք ստորև նկարագրված բովանդակային ընթացակարգերը:

Խմբի գծով ընդհանուր էականությունը	1,738,000 հազ. ՀՀ դրամ
Ինչպես է այն որոշվել	տարեկան ԾՄՀ-ի 5%-ը
Էականության համեմատական մեծության որոշման հիմնավորումը	Մենք որպես համեմատական մեծություն ընտրել ենք ԾՄՀ-ն, քանի որ, մեր կարծիքով, դա այն չափորոշիչն է, որի միջոցով Խմբի կատարողական արդյունքները առավել հաճախ գնահատվում են օգտագործողների կողմից, և հանդիսանում է համընդհանուր ընդունված չափանիշ: Մենք ընտրել ենք 5%-ը, ինչը համապատասխանում է ֆինանսական ծառայությունների ոլորտի՝ շահույթ հետապնդող ընկերությունների համար օգտագործվող քանակական էականության շեմերին:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի են եղել ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ընդհանուր առմամբ համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում և հաշվետվությունների վերաբերյալ կարծիքի ձևավորման համար, և մենք չենք արտահայտում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

Աուդիտի առանցքային հարց	Ինչպես է աուդիտի առանցքային հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացքում
Հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող վարկային կորստի պահուստ Տե՛ս Ծանոթագրություն 4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթներ, Ծանոթագրություն 5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գծով առանցքային գնահատականներ և դատողություններ և Ծանոթագրություն 12. Հաճախորդներին տրված վարկեր Մենք առանձնահատուկ անդրադառնել ենք այս ոլորտին, քանի որ հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող վարկային կորուստների («ԱՎԿ») պահուստների վերաբերյալ ղեկավարության գնահատումները և ենթադրությունները բարդ են և պահանջում են դատողության զգալի աստիճան: Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ղեկավարությունից պահանջվում է գնահատել ԱՎԿ պահուստ՝ համապատասխան այն կորուստներին, որոնք ակնկալվում է, որ տեղի կունենան Փուլ 1 վարկերի գծով առաջիկա 12 ամիսների ընթացքում, և Փուլ 2 և 3 վարկերի գծով՝ ֆինանսական ակտիվի ողջ տևողության ընթացքում: Ղեկավարությունը նաև հաշվի է առնում ապագա տարբեր մակրոտնտեսական պայմանների ազդեցությունը ԱՎԿ-ի որոշման հարցում:	Մենք պատկերացում ենք ձեռք բերել և գնահատել ենք ԱՎԿ պահուստի որոշման հիմնական հսկողությունների նախագծման վերաբերյալ, և ստուգել ենք դրանց գործառնական արդյունավետությունը: Այդ հսկողությունները ներառում էին, մասնավորապես. • Մոդելի կատարողական արդյունքների մշտադիտարկման նկատմամբ հսկողությունը, ներառյալ քաղաքականության և մոդելների պարբերական վերանայումները, փաստացի արդյունքների համեմատ մոդելի գնահատումների ստուգումները և մոդելի մեթոդաբանության փոփոխությունների հաստատումը, այդ թվում՝ հիմնական չափորոշիչների հաշվարկների նկատմամբ հսկողությունը հաշվարկային գործիքի միջոցով, • ԱՎԿ հաշվարկման և արդյունքների վերլուծության նկատմամբ հսկողությունը, և • ԱՎԿ հաշվարկների համար տվյալների փոխանցման նկատմամբ հսկողությունը: Ի լրումն, մենք իրականացրել ենք ստորև նկարագրված բովանդակային ընթացակարգերը:

pwc

Ղեկավարությունը մշակել և ներդրել է մի շարք մոդելներ՝ ՖՀՄՍ 9-ի պահանջներին և կառավարման քաղաքականությանը համապատասխանության ապահովման նպատակով: Մասնավորապես, ղեկավարությունը մոդելների առնչությամբ կիրառել է դատողություն այն իրավիճակներում, երբ համարվել է, որ անցյալ փորձը չի արտացոլում ապագա արդյունքները՝ սահմանափակ կամ թերի տվյալների պատճառով: ԱՎԿ-ի որոշման համար մենք ամենանշանակալի ենք դիտարկել հետևյալը. • ԱՎԿ-ի որոշման համար օգտագործվող չափորոշիչների գնահատման առնչությամբ ղեկավարության կողմից կիրառված մոդելի մեթոդաբանությունների և առանցքային դատողությունների և ենթադրությունների տեղին լինելը. • Վարկային ռիսկի նշանակալի աճի բացահայտման համար կիրառվող դատողության չափանիշները, ներառյալ՝ խմբի պորտֆելներին առնչվող վարկառուների վարկունակության որակական գնահատումը. • Առանցքային ենթադրություններ, որոնք կիրառվել են դեֆոլտի դեպքում կորստի և դեֆոլտի հավանականության որոշման ժամանակ, և. • Հեռանկարային տեղեկատվության հետ կապված առանցքային ենթադրությունների գնահատումը, ներառյալ սցենարային կշիռների և մակրոտնտեսական փոփոխականների տեղին լինելը:	Մենք գնահատել ենք ղեկավարության կողմից մշակված ՖՀՄՍ 9-ի ներքո ԱՎԿ մոդելավորման մեթոդաբանությունների տեղին լինելը՝ ներգրավելով վարկային ռիսկերի մոդելավորման մեր մասնագետներին և կիրառելով ոլորտի մեր գիտելիքները: Մասնավորապես, գնահատվել են վարկային ռիսկի նշանակալի աճը արձանագրելու նպատակով ղեկավարության կողմից սահմանված դատողության չափանիշները (կորպորատիվ, ՓՄՁ և մանրածախ պորտֆելների համար կիրառելի), ինչպես նաև դեֆոլտի դեպքում կորստի և դեֆոլտի հավանականության որոշման ժամանակ կիրառված առանցքային դատողությունները և ենթադրությունները: Մենք կատարել ենք ԱՎԿ հաշվարկի անկախ ստուգում և գնահատել ենք ԱՎԿ-ի հաշվարկների համապատասխանությունը հաստատված մոդելային մեթոդաբանություններին: Մենք ղեկավարության հետ քննարկել ենք մակրոտնտեսական մոդելների համապատասխանության, ինչպես նաև յուրաքանչյուր մակրոտնտեսական սցենարի համար կիրառված կշիռների հիմնավորվածությունը: Մենք նաև առանձին գնահատել ենք արժեզրկված վարկերը, որոնք հաշվառված են որպես անհատապես արժեզրկված՝ Փուլ 3 վարկեր: Մենք քննադատական մոտեցմամբ գնահատել ենք չափորոշիչների գնահատման նպատակով ղեկավարության կողմից կիրառված մեթոդաբանության, դատողությունների և ենթադրությունների ողջամտությունը, և գնահատել ենք մուտքային տվյալների ճշգրտությունը և հաշվարկների ճշտությունը: Մենք նաև գնահատել ենք բացահայտումների ճշգրտությունն ու ամբողջականությունը:

Ինչպես ենք մենք մշակել Խմբի աուդիտի շրջանակը

Մենք Խմբի աուդիտի շրջանակը մշակել ենք այնպես, որ իրականացվող ընթացակարգերի ծավալը բավարար լինի կարծիք արտահայտելու համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, որպես ամբողջություն՝ հաշվի առնելով Խմբի կառուցվածքը, հաշվապահական հաշվառման գործընթացները և հսկողությունը, ինչպես նաև Խմբի գործունեության ոլորտը:

Խումբն իր գործունեությունը հիմնականում իրականացնում է Հայաստանում: Խմբի հիմնական գործառնությունները առնչվում են բանկային և լիզինգային ոլորտներին: Բանկային գործունեությունը կազմում է Խմբի ամենամեծ բաղադրիչը, որը ներկայացնում է Խմբի ընդհանուր ակտիվների մոտավորապես 88%-ը և Խմբի շահույթ մինչև շահութահարկով հարկումի 86%-ը: Խմբի գործունեության մնացած 12-14%-ը հիմնականում վերագրելի է լիզինգային բիզնեսին: Խմբի աուդիտի թիմը կատարել է անհրաժեշտ աուդիտորական ընթացակարգեր ինչպես բանկային, այնպես էլ լիզինգային բաղադրիչների գծով:

Մեր աուդիտի մոտեցումը և թիմը ձևավորվել են Խմբի կառուցվածքն արտացոլելու տեսանկյունից: Երկու նշանակալի հաշվետու միավորների նկատմամբ իրականացված մեր ընթացակարգերի հիման վրա մեր աուդիտի շրջանակը և ծածկույթը կազմել է Խմբի եկամտի և ընդհանուր ակտիվների մեծության մոտավորապես 100%-ը:

Այլ տեղեկատվություն

Այլ տեղեկատվության համար պատասխանատու է ղեկավարությունը: Այլ տեղեկատվությունը ներառում է Տարեկան հաշվետվությունը (առանց համախմբված ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացության), որը ակնկալվում է, որ մեզ կներկայացվի այս աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի ներառում այլ տեղեկատվությունը, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք արտահայտելու որևէ տեսակի հավաստիացման գծով եզրահանգում:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի առնչությամբ մեր պատասխանատվությունն է՝ ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, դրա հասանելիության դեպքում, և այդպիսով դիտարկել, թե արդյոք առկա է էական անհամապատասխանություն այլ տեղեկատվության և համախմբված ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում մեր կողմից ձեռք բերված տվյալների միջև, և՝ արդյոք այլ տեղեկատվությունը առերևույթ պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Եթե Տարեկան հաշվետվությանը ծանոթանալու արդյունքում մենք եզրահանգենք, որ դրանում առկա է էական խեղաթյուրում, մեզնից պահանջվում է այդ խնդիրը հաղորդել կառավարման օղակներում գտնվող անձանց:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պարտականությունները համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու, համապատասխան դեպքերում՝ անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության հաշվառման հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի շրջանակներում, մենք աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն, մենք.

- Որոշում և գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում՝ մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի բարձր է սխալի հետևանքով առաջացածի համեմատ, քանի որ խարդախությունը կարող է ներառել դավադրություն, կեղծիք, դիտավորյալ բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության շրջանցում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի գործունեության անընդհատությունը պահպանելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Խումբը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումները ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար չափով պատշաճ աուդիտորական ապացույցներ Խմբի կազմում գտնվող կազմակերպությունների կամ տնտեսական գործունեության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններ վերաբերյալ աուդիտորական կարծիք արտահայտելու համար: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, վերահսկողության և կատարման համար: Մենք հանդիսանում ենք միակ պատասխանատուն մեր արտահայտած աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք նաև հայտարարում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց, որ մենք կատարել ենք անկախության վերաբերյալ համապատասխան էթիկական պահանջները, և նրանց հաղորդում ենք բոլոր այն հարաբերությունների և այլ հարցերի վերաբերյալ, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, ազդում են մեր անկախության վրա, և, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկվում են գործողություններ՝ սպառնալիքները վերացնելու կամ երաշխիքներ կիրառելու ուղղությամբ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք առանձնացնում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, խիստ բացառիկ հանգամանքներում, մենք գտնում ենք, որ տվյալ հարցը աուդիտորական եզրակացությամբ ներկայացնելը նպատակահարմար չէ, քանի որ կարելի է ողջամտորեն ակնկալել, որ նման ներկայացման բացասական հետևանքները կգերակշռեն դրա հանրային շահ պարունակող օգուտների նկատմամբ:

Այս Անկախ աուդիտորական եզրակացություն համար հիմք հանդիսացած աուդիտորական աշխատանքների գծով պատասխանատու աուդիտոր է հանդիսանում Լևան Կանկավան:

Լևան Կանկավա
Պատասխանատու աուդիտոր

Նինո Կադագիշվիլի
Տնօրեն

29 ապրիլի 2024թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

PricewaterhouseCoopers Armenia LLC

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	78,159,849	88,369,285
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	9	199,957	363,284
Պահանջներ բանկերի նկատմամբ	10	99,410,514	50,806,230
Ներդրումային արժեթղթեր	*11*		
- Բանկի կողմից պահվող		21,422,936	17,622,138
- վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված		-	6,019,389
Հաճախորդներին տրված վարկեր	12	455,199,337	408,439,245
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	13	83,406,426	53,423,221
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	37	1,775,530	1,362,224
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	14	27,110,978	25,360,445
Այլ ակտիվներ	17	17,108,253	13,173,420
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**783,793,780**	**664,938,881**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Բանկերից ներգրավված միջոցներ	18	1,152,894	9,937,634
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	19	503,231,650	424,168,945
Թողարկված պարտքային արժեթղթեր	20	21,087,118	6,206,060
Այլ փոխառու միջոցներ	21	95,125,094	84,323,152
Ընթացիկ հարկային պարտավորություններ	15	3,812,792	4,698,987
Հետաձգված հարկային պարտավորություններ	15	732,149	1,016,530
Այլ պարտավորություններ	23	12,880,467	17,380,413
Ստորադաս վարկեր	22	12,661,577	7,805,036
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**650,683,741**	**555,536,757**
ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	24	55,000,000	55,000,000
Էմիսիոն եկամուտ	24	1,750,000	1,750,000
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով պահուստ	25	3,517,422	3,076,495
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		3,909,911	4,985,941
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ		151,526	877,300
Չբաշխված շահույթ		68,781,180	43,712,388
Ընդամենը կապիտալ		**133,110,039**	**109,402,124**
ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**783,793,780**	**664,938,881**

Հաստատվել է հրապարակման համար և ստորագրվել է Բանկի տնօրինության անունից
2024թ. ապրիլի 29-ին

Հակոբ Անդրեասյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Արմեն Հակոբյան
Գլխավոր հաշվապահ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Շահույթի և վնասի մասին համախմբված հաշվետվություն 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար

Հազ. ՀՀ դրամ	**Ծան.**	**2023թ.**	**2022թ.**
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ	27	68,851,092	52,264,734
Այլ տոկոսային եկամուտ	27	10,445,440	5,852,766
Տոկոսային ծախս	27	(32,040,310)	(24,304,560)
Զուտ տոկոսային եկամուտ		**47,256,222**	**33,812,940**
Վարկային կորստի գծով ծախսի հակադարձում	16	565,530	2,286,215
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորստի գծով ծախսից հետո		**47,821,752**	**36,099,155**
Միջնորդավճարների գծով եկամուտ	28	13,097,686	9,659,855
Միջնորդավճարների գծով ծախս	28	(5,014,623)	(3,623,931)
Զուտ օգուտ/(վնաս)՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից		400,019	(115,359)
Զուտ օգուտ արտարժույթի առքուվաճառքից		5,333,764	13,516,463
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից		(27,845)	(433,735)
Ասոցիացված կազմակերպությունների շահույթի մասնաբաժին	37	1,019,338	736,475
Այլ արժեզրկման և պահուստների հակադարձում/(ծախս)	32	2,783,748	(3,283,385)
Այլ եկամուտ	29	853,917	1,448,285
Ոչ տոկոսային եկամուտ		**18,446,004**	**17,904,668**
Անձնակազմի գծով ծախսեր		(20,325,827)	(16,716,813)
Մաշվածություն և ամորտիզացիա	14	(3,312,788)	(2,606,948)
Այլ գործառնական ծախսեր	30	(3,032,516)	(2,437,261)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	31	(4,831,447)	(3,925,140)
Ոչ տոկոսային ծախս		**(31,502,578)**	**(25,686,162)**
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		34,765,178	28,317,661
Շահութահարկի գծով ծախս	15	(6,372,416)	(5,747,221)
Հաշվետու տարվա շահույթ		**28,392,762**	**22,570,440**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ Բազային և նոսրացված, մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի, ՀՀ դրամ	24	5,162.32	4,103.72

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2023թ.	2022թ.
Հաշվետու տարվա շահույթ		**28,392,762**	**22,570,440**
Այլ համապարփակ եկամուտ			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով իրական արժեքի փոփոխություն		(981,961)	(318,240)
Ներառյալ՝ ակնկալվող վարկային կորուստների պահուստի փոփոխությունները		(735,920)	158,454
Շահութահարկ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	15	176,753	57,283
Հաջորդ ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող զուտ այլ համապարփակ եկամուտ		**(805,208)**	**(260,957)**
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ			
Շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատում	14	-	1,977,001
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքների գծով շահույթ/(վնաս)		705	(3,104)
Շահութահարկ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	15	(127)	(355,301)
Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ		**578**	**1,618,596**
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող			
Ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ եկամտի մասնաբաժին		96,166	(53,122)
Շահութահարկ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	15	(17,310)	9,562
Ընդամենը ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ համապարփակ եկամտի մասնաբաժին		**78,856**	**(43,560)**
Տարվա այլ համապարփակ վնաս՝ առանց հարկերի		**(725,774)**	**1,314,079**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		**27,666,988**	**23,884,519**

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար

Հազ. ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով պահուստ	Հիմնական միջոցների վերա-գնահա տումից աճ	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ*	Ընդամենը կապիտալ
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**55,000,000**	**2,500,000**	**2,452,257**	**3,479,525**	**1,184,362**	**23,577,223**	**88,193,367**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք							
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	-	-	22,570,440	22,570,440
Այլ համապարփակ եկամուտ	-	-	-	1,621,141	(307,062)	-	1,314,079
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**-**	**-**	**-**	**1,621,141**	**(307,062)**	**22,570,440**	**23,884,519**
Հիմնական միջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին	-	-	-	(114,725)	-	114,725	-
Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում							
Գլխավոր պահուստի համալրում էմիսիոն եկամտի հաշվին	-	(750,000)	-	-	-	750,000	-
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	-	(3,300,000)	(3,300,000)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**-**	**(750,000)**	**-**	**-**	**-**	**(2,550,000)**	**(3,300,000)**
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ (Ծան. 25)	-	-	624,238	-	-	-	624,238
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**55,000,000**	**1,750,000**	**3,076,495**	**4,985,941**	**877,300**	**43,712,388**	**109,402,124**
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	-	-	28,392,762	28,392,762
Այլ համապարփակ վնաս	-	-	-	-	(725,774)	-	(725,774)
Հիմնական միջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին	-	-	-	(1,076,030)	-	1,076,030	-
Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում							
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	-	(4,400,000)	(4,400,000)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**-**	**-**	**-**	**-**	**-**	**(4,400,000)**	**(4,400,000)**
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ (Ծան. 25)	-	-	440,927	-	-	-	440,927
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**55,000,000**	**1,750,000**	**3,517,422**	**3,909,911**	**151,526**	**68,781,180**	**133,110,039**

* Չբաշխված շահույթը ներառում է Բանկի Գլխավոր պահուստը՝ 8,250,000 հազ. ՀՀ դրամի չափով:

6-98 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը: 4

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2023թ.	2022թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ (հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով)		65,435,119	49,369,597
Ստացված այլ տոկոսներ		10,445,440	6,102,070
Վճարված տոկոսներ		(29,840,347)	(23,532,053)
Ստացված միջնորդավճարներ		13,097,686	9,659,855
Վճարված միջնորդավճարներ		(5,014,623)	(3,623,931)
Զուտ (ելք)/մուտք շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ածանցյալ ֆինանսական գործիքներից		(663,718)	196,755
Զուտ մուտքեր փոխարժեքային տարբերություններից		5,333,764	13,516,463
Վճարված այլ գործառնական ծախսեր		(2,985,401)	(2,318,819)
Ստացված այլ եկամուտ		854,113	235,468
Աշխատավարձ և աշխատակազմին վճարված այլ գումարներ		(18,700,666)	(14,460,895)
Վճարված այլ ընդհանուր վարչական ծախսեր		(3,755,177)	(3,925,140)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունները		**34,206,190**	**31,219,370**
Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/ նվազում			
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		317,095	396,989
Պահանջներ բանկերի նկատմամբ		(48,347,859)	(32,847,258)
Հաճախորդներին տրված վարկեր		(40,369,750)	(84,018,496)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ		(30,196,753)	(22,270,275)
Այլ ակտիվներ		(1,262,502)	(2,693,895)
Գործառնական պարտավորությունների զուտ աճ/(նվազում)			
Բանկերից ներգրավված միջոցներ		(8,637,177)	8,738,065
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		71,747,907	116,891,930
Այլ պարտավորություններ		(5,658,758)	3,453,298
(Գործառնական գործունեությամբ օգտագործված)/ ստացված զուտ դրամական միջոցներ մինչև շահութահարկը		**(28,201,607)**	**18,869,729**
Վճարված շահութահարկ		(7,383,676)	(2,687,672)
Գործառնական գործունեությամբ (օգտագործված)/ստացված զուտ դրամական միջոցներ		**(35,585,283)**	**16,182,057**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(2,444,064)	(3,466,341)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		1,217,572	53,404
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(13,364,866)	(6,195,291)
Ներդրումային արժեթղթերի վաճառք		16,049,251	2,944,680
Ստացված շահաբաժիններ	37	701,763	539,806
Ներդրումային գործունեությամբ ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ		**2,159,656**	**(6,123,742)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր	38	18,339,013	2,191,500
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	38	(3,684,744)	(789,212)
Այլ փոխառությունների ներգրավումից մուտքեր	38	34,345,599	34,288,004
Այլ փոխառությունների մարում	38	(27,032,928)	(37,932,197)
Ստացված ստորադաս վարկեր		4,479,000	-
Վճարված շահաբաժիններ	24	(4,400,000)	(3,300,000)
Ֆինանսական գործունեությամբ ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ		**22,045,940**	**(5,541,905)**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		1,123,990	(12,664,004)
Արժեզրկման պահուստի փոփոխությունների ազդեցությունը		46,259	68,891
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում		(10,209,436)	(8,078,703)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին		88,369,285	96,447,988
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	**8**	**78,159,849**	**88,369,285**

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Արամի 82-84, 0002, Երևան, ՀՀ
www.acba.am | 010 31 88 88

Բանկը վերահսկվում է ՀՀ
կենտրոնական բանկի կողմից